Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերիմ գործնական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) License.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել ածանցյալ նյութը ստեղծելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material



Յով. Թումանեան

Բնաւաներ

A II 35199

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. ՊՒՉԻՃԵԱՆ ՈՐԴՒ
1922



Երգեր

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Լեռնե՛ր, ներշընչած դարձեալ ձեզանով,
Թրնդում է հոգիս աշխուժով լըցւած,
Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածւած,
Ձեզ մօտ են թըռչում յախուռն երամով:

Ձե՛զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կեանքի տրխրութեան ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նըւէր:

Ձեզ մօտ եմ գալիս, իմ հէ՛ն տրտմութիւն,
Վեհափառ դայեակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ չէիր լինծ հանգիստ տալիս՝
Սըրտիս ականջին խօսելով թաքուն...

Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցաւերով, հազար ձեւերով,
Ոգեւորութեան հրզօր թեւերով,
Քեզ մօտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հէգ:

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ աւելցնեմ,
Այլ դառն հեծութեան հառաչանքներով
Էդ անդընդախոր ծորերըդ լըցնեմ:

Ձորե՛ր, ա՛յ ծորեր, սեւ, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վէրքերի նըման.
Աստծու հարւածի հետքերն էք դուք էլ,
Քեզ մօտ եմ գալիս, ուզում եմ երգել:

Դուք էլ խօսեցէ՛ք, դուք էլ պատմեցէ՛ք,
Ձեր անդունդներով եկէք չափուեցէ՛ք,
Դուք է՞լ էք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահաւոր...

ՀԻՆ ՕՐԱՆՈՒԹԻՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալապատակ,
Միասին բազմած,
Մի շըրջան կազմած,
Քէֆ էին անում
Եւ ուրախանում
Մեր հըսկայ պապերն ու մեր հայրերը՝
Գիւղի տէրերը:

Մենք, առոյգ ու ժիր գեղջուկ մանուկները,
Երեք դասընկեր,
Նրրանց առաջին գըլխաբաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սըրտներիս դըրած,
Ձիւ, ուժեղ ձէնով նրրանց ըսպասում—
Տաղ էինք ասում:

Երբ զուարթաձայն մեր երգը լըռեց,
Մըռայլ թամադէն բեխերն ոլորեց,
Նըրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին. —«Ապրէ՛ք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէ՛ք»...

Ժամանակ անցաւ, նըրանք էլ անցան,
Զըւարթ երգերըս վըշտալի դարձան.
Ու ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչու ասացին.—« Ապրէ՛ք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք»...

Խաղաղութիւն ձեզ, մեր անբախտ պապեր,
Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել:
Այժըմ, տրխրութեան թէ քէֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝
Ձեր խօսքն ենք ասում.— «Ապրէ՛ք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք»...

1887

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօվէլ:

Քաշի՛, եզը, ուսիդ մատա՛ղ,
Քաշի՛, քաշենք, վար անենք.
Ճիպտի՛ն արա, քըշի՛, հօտա՛ղ,
Մեր սեւ օրին ճար անենք:

Պարտքատէրը գանգատ գընաց,
Քեօխւէն կը գայ, կը ծեծի,
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,
Կը բարկանայ, կանիծի:

Էն օրն եկան թօւջի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ինչ տամ կոռին ու բէգեարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան:

Ջեռըս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շո՛ւռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօվէլ:

1887

ՀԱՄԵՐԳ

Վըտակը ժայռից ներքեւ է թըռչում,
Թափ առած ընկնում քարերի գըլխին,
Ջարկում աւազին, շաչում է, ճըչում,
Ճըչում անհանգիստ, փըրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին ծէնով պառաւած,
Զայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց
Արծագանք տալի ջըրի աղմուկին:

Այն ինչ բընութեան զըւարթ համերգի
Ունկընդիրն անխօս ու յաւերժական,
Ժայռը մըտախոհ իր մըռայլ մըտքի
Եռեւից ընկած լըսում է նըրան:

1890

ԱՍՏՂԵՐՒ ՀԵՑ

Էյ աստղե՛ր, աստղե՛ր,
Երկընքի աչքեր,
Որ այդպէս վառ վառ
Ժըպտում էք պայծառ.
Ժըպտում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ
Աշխոյժ ու կայտառ,
Ձեզ նըման պայծառ
Թըրվըռում էի
Ու ցաւ չունէի...
Ժըպտում էք այսօր,
Երբ թոյլ ու անզօր,
Կորած յոյսերիս
Կըսկիծն եմ լալիս...
Կը ժըպտաք նաեւ
Շիրիմիս վերեւ...

1890

А 35/99 II

ԵՐԿՈՒ ՍԵՒ ԱՄՊ

Վաղուց թողած բարձր ու կանաչ
Գահը իրենց հանգըստութեան,
երկու սեւ ամպ, հողմի առաջ
Գընում էին հալածական:

Հողմը սակայն չար հոսանքով
Բաժնել, ջոկել չէր կարենում,
Ինչքան նըրանց լայն երկընքով
Դէս ու դէն էր քըշում, տանում:

Ու անդադար գընում էին
Քըշած հողմի կատաղութեամբ,
Իրար կըպած ու միասին,
երկու սեւ ամպ, երկու սեւ ամպ...

1894

ՀԱՍՊ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՀԱՄԱԴԻՄԻԱ

ԱՆԴԱՐՁ ՀԱՄԲՈՐԴՆԵՐ

Իմ անցած կեանքն ու հին տարին,
երկու անզօր ծերի նման,
Զրոյց տալով գընում էին
Դէպի աշխարհն յաւերժական:

Մինն ասում էր.— Ես ունէի
Թարմ ու բուրեան ծաղիկներ,
Ու բոլորը մարդկանց տըւի
Գարնան գըրկովն առատաբեր:

Միւսն ասում էր.— Ես ունէի
Շատ ըզգացմունք ու կորով,
Ու ողջ ես էլ նըրանց տըւի
Սիրանըւէր երգերով:

Մինն ասում էր.— Ես թողեցի
Ջրմեռ ու սեւ էն հովտում:
Միւսն ասում էր.— Ես՝ թախծալի
Մի սիրտ բեկւած ու տըրտում:

Մինը ասաւ.— Բայց կը ծաղկի
Էն հովիտը նորից նոր:
Միւսը էստեղ ոչինչ չասաւ,
Ու գնում էր գըլխակոր...

Էսպէս իմ կեանքն ու հին տարին,
Երկու անզօր ծերի նըման,
Ջրրոյց տալով գընում էին
Դէպի աշխարհն յաւերժական...

1897

ԸՆԾՐԵԱԼԸ

Հոգու սրբազան կըրակով վառւած
Իջնում էր Մովսէս լերան գագաթից.
Իջնում էր ահեղ պատգամներն առած,
Շըղթայից հանող Աստուծոյ մօտից:

Ու մինչ կանխատես աչքովն իր հոգու
Տեսնում էր գալոցն իր ժողովըրդի,
Ու մինչ հրրճւում էր... ահա ներքեւից
Ձայներ բարկութեան ու խառն աղմուկի...

Ու տեսաւ Մովսէս լերան բարձունքից,
Ժողովուրդն էնտեղ ներքեւ, հովիտում
Աստւած է շինել ոսկուց, արծաթից,
Պարում է շուրջը ու հարբած գոռում:

— «Ինչո՞ւ մեզ բերաւ Մովսէս անապատ,
Լի եգիպտոսից ինչո՞ւ հանեց մեզ...
Ո՞ւր է մեր սրխտորն ու սոխը առատ...
Էնտեղ հանգիստ էր ու լիքն էր էնպէ՛ս...»

Գոռում է էսպէս ու հարբած պարում:
Ու... սուրբ Սինայի մըռայլ ամպերում
Կանգնեց մարգարէն, նայեց դէպի վեր,
— «Մի՞թէ այս ամբոխն իմ եղբայրն է, Տէ՛ր...

— Լըսում եմ ծայնըդ լեռների գըլխին,
Ծովեր եմ պատռում, անցնում անապատ,
Հըրեղէն սիւնով տանում իր ուղին,
Նա մի՛շտ կասկածոտ, նա մի՛շտ յուսահատ...

Տանջանքի միջից նըկատում եմ ես
Երկիրն աւետեաց հեռո՛ւ մըշուշում,
Իսկ նա փոքրոգի, կոյր ու կարճատես,
Գերութեան սրխտորն ու սոխն է յիշում...

Եւ երբ ամպերում խօսում եմ քեզ հետ,
Քեզնից փըրկութեան պատգամ եմ բերում,
Նա էնտեղ ցածում մոլի՛, անհեթե՛թ
Ոսկի է պաշտում ու հարբած պարում...

Ինչո՞ւ են, Աստուա՛ծ, քո վեհ պատգամները,
Իմ տանջանքն ինչո՞ւ»... Գոչեց զայրացած,
Ու մեծ խորհուրդի քարեայ տախտակներ
Ժայռերի գըլխից թողեց դէպի ցած...

Բայց... միւս առաւօտ, երբոր դեռ քընած,
Հանգչում էր ամբոխն աղմուկից յոգնած,
Իր ցուպը ձեռքին բարձրանում էր նա
Դարձեալ միայնակ վե՛ր՝ դէպի Սինա:

ՑՐՑՄՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Ա.

Տէր, մինչեւ երբ մեր աչքերը Քեզ մընան.
Մեր գոյժն հասաւ հեռո՛ւ-հեռու ազգերին,
Աշխարհ լըցւեց մեր աղաղակ, մեր կական,
Ու չի անցել մեր տանջանքը տակաւին:

Ինչո՞ւ, Աստուած, որբերն արդեօք հայրական
Գուլբդ կօրհնեն կոտորածի էս ծորում,
Թէ տարագիր պանդուխտները կը պատմեն
Ողորմութիւնդ օտար-օտար ափերում:

Մի՞թէ, Աստուա՛ծ, դեռ բաւական չըտեսար
Էսքան աւեր, վիշտ ու ցաւեր, հեծութիւն,
Մի՞թէ, Աստուա՛ծ, հաճելի չեն քեզ համար
Աղօթք ու սէր, կեանք ու տաղեր զըւարթուն:

1896

Ը.

Աստուած, ինչպէս ծուխ օրերըս անցան,
Ոսկերքըս, ինչպէս խըռիւ, չորացան,
Սիրտըս ցամաքեց, ընկայ խոտի պէս,
Ճամփէս մոռացայ ահագին վըշտէս:

Հացըս նախատինքն եղաւ օտարի,
Հանգիստըս ճամփում հալածանքների,
Լըսեցի ցերեկն աղաղակ ու բօթ,
Գիշերը լացի մինչեւ առաւօտ:

Տըքնեցի, ինչպէս բու աւերակում,
Ինչպէս միայնակ ճրնճղուկ՝ տանիքում...
Աստուած, տանջանքից ուժերըս հատան,
Մի՞թէ չըհասաւ ժամը փըրկութեան:

1898

⁂

Դու քո ճամփէն գընա՛, քոյրի՛կ,
Եւ թող լինի նա պայծառ,
Ինձ մի՛ ժըպտայ, ինձ մի՛ սիրիր,
Ես ընկեր չեմ քեզ համար:

Ելած կեանքի ամեն ճամփից,
Կարօտներով անմեկին,
Ագա՛հ, անվե՛րջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին:

Մի ձեռք չըկայ, մի գիրկ չըկայ,
Պահի նըրան իրեն մէջ,
Խեղճ, խելագար գընում է նա
Չըգտումներովն իր անվերջ:

Եւ ո՛վ գիտի՝ դեռեւս անմեղ
Քանի հոգի կը տանջի,
Եւ ո՛վ գիտի՝ ինչ մո՛ւթ, ահե՛ղ
Անապատում կը հանգչի...

Դու քո ճամփէն գընա՛, քոյրի՛կ,
Եւ երբ լինենք մենք հեռու,
Աղո՛թք արա, որ միւս անգամ
Չըհանդիպենք իրարու:

1902

ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

Երանի՛ էր ձեզ, գովւած երգիչնե՛ր,
Դուք երգում էիք վաղ առաւօտեան,
Երբոր երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հայի փըրկութեան:

Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,
Խըրո՛խտ, վեհապա՛նծ թէպէտեւ գերի,
Եւ ձեր քընարի ձայներն երջանիկ
Լիքը հըրճւանքով գալոց օրերի:

Ա՛խ, նա յօշոտւեց մեր աչքի առջեւ
Եւ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետ.
Ոսկի երազնե՛ր՝ միրաժի նըման՝
Մեր անապատում չըքացան անհետ:

Եւ մենք խորտակած մեր կեանքի ծէգից,
Անյոյս ու դալուկ, ճակատներըս ցած,
Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սրրտից և՛ երգ, և՛ Աստած:

1902

ՀԱՑՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփէն խաւար, մեր ճամփէն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլոյս մըթնում
Երկա՛ր դարերով գնում ենք դէպի վեր,
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է՝ ծընել մեր խորունկ հոգին,
Հայոց լեռներում,
Բարձըր լեռներում:

Բայց քանի անգամ շէկ անապատի
Օրդուները սեւ
Իրարու եռեւ

Եկան զարկեցին մեր քարւանն ազնիւ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:

Ու մեր քարւանը շրփոթ, սոսկահար,
Թալանւած, ջարդւած
Ու հատւած, հատւած
Տանում է իրեն վէրքերն անհամար,
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարօտ՝
Հեռու աստղերին,
Երկրնքի ծէրին,
Թէ ե՞րբ կը բացւի պայծառ առաւօտ՝
Հայոց լեռներում.
Կանաչ լեռներում:

Վ. ԱԾՐԻՋԳ

Քառասուն տարի բըռնած ճանապարհ
Շիտակ, անվեհեր
Գընում եմ ես վեր,
Դէպ Անյայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

Քառասուն տարի ճամփումն ահարկու
Անցել եմ էսպէս,
Ու հասել եմ ես,
Խաղաղութեանն եմ հասել ես հոգու:

Թողել եմ ներքեւ, մեծ լերան տակին,
Եւ փառքը, եւ գանձ,
Եւ քէն, եւ նախանձ.—
Ամենը, ինչ որ ճընշում է հոգին:

Եւ էն ամենը, արդ նայում եմ ես,
Տեսնում եմ նորից
Իմ լերան ծէրից.—
Էնպէս հասարակ, դատարկ են էնպէ՛ս...

Եւ ես իմաստուն ու քեռըս թեթեւ,
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով
Իջնում եմ զըւարթ իմ լերան ետեւ...

1909 փետր.ի 7

ՀԱՑԾԵՆԻՔԻՍ ՀԵՑ

Վաղուց թէեւ իմ հայեացքը Անյայտին է ու հեռւում
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարօտով ամեն անգամ երբ դառնում եմ դէպի քեզ՝
Մըղկըտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկէզ,
Ու գաղթական զաւակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛ւ գիւղերից, ե՛ւ շէններից՝ տըխո՛ւր, դատարկ ու խաւար,
Ձարկւա՜ծ հայրենիք,
Ձըրկւա՜ծ հայրենիք:

Խըռնըւում են մըտիս հանդէպ բանակները անհամար,
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար վոհմակները աղաղակով վայրենի,
Աւարներով, աւերներով, խընջոյքներով արիւնի,
Որ դարձըրին քեզ մըշտական սեւ ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայեացքներով անժըպիտ,
Ողբի՜ հայրենիք,
Ողբի՜ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վէրքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդաւոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խօսք ես խօսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղէտ,
Խորհում ես դու էն մեծ խօսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ծըգտում է մեր հոգին—
Յոյսի՛ հայրենիք,
Լոյսի՛ հայրենիք:

Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած,
Հազա՛ր հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պօէտներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անէծքով,
Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզօ՛ր հայրենիք...

1915

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ու վեր կացայ ես, որ մեր հայրենի օրէնքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շէն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչեւ ծով
Մարած են, մեռած, փրուած ու ցրուած հազար հազարով...

Ու կըրակ առայ հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկընքի ծոցում վառեցի նորից
Մասիան ու Արան, Սիփանն ու Սրբոցանց, Նեմրութ, Թանդուրէք,
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մէկ մէկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպէս հեռաւոր արեւ,
Անհաս, աննըւազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի վերեւ...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
Կանչեցի Թըշուառ էն հոգիներին՝ ցրուած յաւիտեան
Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծովն Հայոց,

Մինչեւ Հելլեսպոնտ, մինչեւ Պոնտոսի ափերն ալեկոծ:
—Հանգէ՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են յուզմունք, իզո՛ւր եւ անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էապէս կը մնայ...»

Աջիցըս Եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձէններով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր խոր ծորերով,
Ամպերն էլ ելան Ջիրաւի ծորից, հըսկայ բուրվառից,
Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,
Բոյլ-բոյլ, բուրաւէտ, շարժւեցին դէպի կողմերը հեռու,
Գոհար ցօղելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու
Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծովն Հայոց,
Մինչեւ Հելլեսպոնտ, մինչեւ Պոնտոսի ափերն ալեկոծ...
—Հանգէ՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են յուզմունք, իզո՛ւր եւ անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էապէս կը մնայ...»

1916

ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտակ, անծէր
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ:
Ծով բարութիւն, շընորհք ու սէր
Ճոխ պարգեւ եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ գանձերի
Սիրտս է առատ, լէն ու ազատ.
Ինչքան էլ որ բաշխեմ ձերի—
Սէրն անվերջ է, բարին անհատ:

Երկիւղ չունեմ, ահ չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհքով մին՝ ահա էսպէս
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես բախտաւոր
Իմ ծընընդեան պայծառ օրէն,
Էլ աշխարհ չեմ գալու հօ նոր,
Իր տըւածն եմ տալիս իրեն:

1918 յունուար.ի 5

ՊԱՏՐԱՆՔ

Վեր է կացել էն սարում
Մեր Զալակը իր թեւից,
Գընում է մութ անտառում,
Ֆաջ ախպէրըս ետեւից:

Ջրրընգում են նըրանք խոր
Էն անտառում կուսական,
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թըւում է, թէ կըգան...

Չո՛ւր... վաղուց են, ա՛խ, նըրանք
Մեր սարերից գընացել,
Էն զիլ ձէներն են մենակ
Իմ ականջում մընացել...

1918 սեպտ.ի 9

Բանաստեղծություններ

Ա.

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր,
Լիքն ակունքով հազարաւոր.
Իմ զայրոյթը լիքն է սիրով,
Իմ գիշերը լիքն աստղերով:

Բ.

Հիմի բացե՛լ են հանդէս
Երգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի ծըղրիդները,
Ո՞վ է լըսում հիմի ձեզ:

1917 յունիս

Գ.

Ե՛տ չեկաւ...
Գընաց, գընաց, ետ չեկաւ,
Անկուշտ մահին, սեւ հողին
Գերի մընաց, ե՛տ չեկաւ:

1916 յունիս

Գ.

Ո՞ւր կորան...
Մօտիկներըս ո՞ւր կորան
Ինչքան լացի, ձէն ածի՝
Ձէն չիտըւին, լո՛ւռ կորան:

1917 յունիս

Ե.

Քանի՛ մահ կայ իմ սըրտում,
Թափուր գահ կայ իմ սըրտում.
Ջէ՞ դու էլ ես մահացու.
Մահի ահ կայ իմ սըրտում:

1917 Նոյմ. ի 7

Զ.

Ե՛տ եկէ՛ք...
Գարնան վարար գետ եկէ՛ք,
Անցա՛ծ օրեր, խինդ ու սէ՛ր,
Դարձէ՛ք, իրար հետ եկէ՛ք:

1917 Նոյմ. ի 11

Ե.

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարւան փորձն ու գործ
Ըսկըսւում է ամեն օր:

1917 նոյմ.ի 11

Ը.

Ա՛վ իմանայ՝ ուր ընկանք,
Ֆանի օրւայ հիւր ընկանք,
Սէրն ու սիրտն էլ երբ չըկայ՝
կըրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:

1917 նոյմ.ի 30

Բ.

Քանի՛ ձեռքից եմ վառել,
Վառել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լոյս տրւել,
Լոյս տալով եմ ըսպառւել:

1917 դեկտ. ի 24

Գ.

Ինչքան ցաւ եմ տեսել ես,
Նենգ ու դաւ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,—
Վատը՝ լաւ եմ տեսել ես:

1917 դեկտ. ի 24

Ժ.Ա.

Երազումըս մի մաքի
Մօտըս եկաւ հարցմունքի.
— Աստուած պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ծագի...

1913 դեկտ. ի 24

Ժ.Գ.

Մընացել է բերդը մեզ,
Յաղթանակի երթը մեզ.
Անց են կացել՝ ով կայինն,
Հիմի կըգայ հերթը մեզ:

1917 դեկտ. ի 26

Ժ.Պ.

Ո՛նց է ժըպտում իմ հոգին
Զարին, բարուն, — ամենքին.
Լոյս է տալիս ողջ կեանքիս
Ու էն ճամփիս անմեկին:

1918 յունուարի 4

Ժ.Պ.

Ի՜նչ ես թըռչում, խեւ-դեւ սի՛րտ,
Հազար բանի եւեւ, սի՛րտ,
Ես ո՞նց հասնեմ հազար տեղ
Ջեզ պէս թափով, թեթեւ, սի՛րտ:

1918 յունուարի 25

ԺԵ.

Իմ սո՛ւր, արթուն ականջում
Մի խոր ձէն է միշտ հընչում,
Անհո՛ւն, անքո՛ւն կարօտով
Իրեն մօտ է ինձ կանչում:

1918 յունուարի 26

ԺԶ.

Մի հաւք զարկի ես մի օր.
Թըռա՛ւ, գընաց վիրաւոր:
Թըռչում է միշտ իմ մըտքում
Թեւը արնոտ ու մոլոր:

1918 փետր.ի 2

ԺԷ.

Երկու շիրիմ իրար կից,
Յաւերժական լուռ դըրկից,
Թախծում են պաղ ու խորհում
Թէ ինչ տարան աշխարհքից:

1918 փետր. ի 4

ԺԸ.

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռուից անթիւ ձեռքերով
— Ջան, հայրենի անտառներ,
Դուք էք կանչում ինչ ձեր քով:

1918 փետր.

ԺԹ.

Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նըստած իր ճըմբին,
Լօռու հանդում՝ մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:

1918 փետր.

Ի.

Կըլթացնում են, արտորում
Արտուտները արտերում,
Թըռչում մանուկ հոգուս հետ,
Ճախրում, ճըխտում ամպերում:

1918 յունիս

ԻԱ.

Բերանն արնոտ Մարդակերը էն անքան
Հազար դարում հազիւ դառաւ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամփան:

1918 Նոյեմբեր

ԻԲ.

Մեռան մեռան... Եւ, ահա,
Խառնըւել են կեանք ու մահ.
Ջեմ հասկանում աշխարհքի
«Կան ու չըկան» ես հիմա:

1919 հոկտ. ի 8

ԻԳ.

Արեւելքի եղեմներին իջաւ պայծառ իրիկուն,
Հէքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ինչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մէջ վայրենի...
Ախ, թէ նորից գըտնեմ ճամփան, դէպի էնտե՛ղ, դէպի տո՛ւն...

1919 Նոյեմբերի 21

ԻԴ.

Դու մի անյայտ Բանաստեղծ ես, չը տեսնըւած մինչ էսօր.
Առանց խօսքի երգ ես թափում հայեացքներով լուսաւոր:
Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտաւոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր:

1919 Նոյեմբեր

ԻԵ.

Հէյ ագահ մարդ, հէյ անգոհ մարդ, միտքդ երկար կեանքդ կարճ,
Քանի՛ քանիան անցան քեզ պէս, քեզնից առաջ, քո առաջ.
Ինչ են տարել նըրանք կեանքից, թէ ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրւան էս ճամփէդ:

1919 Նոյեմբեր

ԻԶ.

Ազատ օրը, ազատ սէրը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում տանջւում, որոնում է ու դըժբախտ է նա կըրկին.
Էյ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շէն ու լի:

1919 Նոյեմբեր

Թէ.

Քուն թէ արթուն՝ օրիս շատը երազ եղաւ, անցկացաւ,
Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վրուազ եղաւ, անցկացաւ.
Վրուազ անցան երազ, մուրազ, ու չը հասայ ոչ մէկին,
Կեանքըս թեթեւ տանուլ տրւած գըրազ եղաւ, անցկացաւ:

1919 դեկտ. ի 6

Թէ.

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան. միտք եմ անում՝ է՞ս, թէ էն.
Մէջ տեղ կանգնած միտք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս, թէ էն.
Աստւած ինք էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի.
Տանի՛, թողնի՛, — ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս, թէ էն:

1919 դեկտ. ի 8

ԻԹ.

Ինչ իմանաս ըստեղծողի գաղտնիքները անմեկին.—
Ընկեր տըւաւ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին.
Բանաստեղծին թողեց մենակ մեն ու մենակ Իրեն պէս,
Որ Իրեն պէս մըտիկ անի ամեն մէկին ու կեանքին:

1920 մարտի 30

Լ.

Երնէկ էսպէս՝ անվերջ քեզ հետ — իմ կեանքի հետ լինէի.
Հազար երնէկ՝ դաշտում մենակ՝ երկընքի հետ լինէի.
Բայց ո՛վ կըտայ էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի,
Ու հալւէի, ծաւալւէի, ամենքի հետ լինէի...

1920 մայիսի 12

Լ.Ա.

Առատ, անհատ Աստծու նըման
միշտ տեղալուց յոգնել եմ ես.
Հոգիս ծարաւ՝ սըրան նըրան
մըտիկ տալուց՝ յոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դէմը,
ճոխ ու շըռայլ անհաշիւ,
Ամեն ճամփում ըսպասելուց
ու փընտրելուց յոգնել եմ ես:

1921 փետր. ի 14

Լ.Ե.

Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր
Ես լըսում եմ Նըրա անլուռ կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:

1921 փետր. ի 14

Ա. Գ.

Արիւնալի աղէտներով, աղմուկներով ահարկու
Արեւմուտքի ըստրուկները մեքենայի եւ ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ
Դէպ արեւելքն Աստուածային, հայրենիքը իմ հոգու...

1921 մայիսի 1

Ա. Գ.

Ամեն անգամ քո տրւածից երբ մի բան ես դու տանում,
Ամեն անգամ՝ երբ նայում եմ, թէ ինչքան է դեռ մընում,—
Զարմանում եմ, թէ ո՛վ Շրւայլ, ինչքան շատ ես տրւել ինձ,
Ինչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից:

1921 մայիսի 2

Լ.

Ասի. «հէնց լոկ էս աճիւնն է ու անունը, որ ունեմ...»
Երբ ճառագեց անծայրածիր քո ժըպիտը հոգուս դէմ.
— Ինչ է աճիւնն էդ անկայուն ու անունը, որ ունես.
Դու Աստուած ես, դու անհո՛ւն ես, անանուն ես ու անես...»

1921 մայիսի 6

Լ.

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթի,
Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ,
Անյիշելի վերյուշերի մըշուշներում նըրբաղօտ
Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թէ՝ կը հասնեմ Նըրա մօտ...

1921 մայիսի 16

Լէ.

Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադէտ.
Իմ խոր հոգին էն բարձունքին խօսք է բացել Նըրա հետ —
Անհաս բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար,
Մինչեւ վախճանն անվախճանի քընըննում է դարէ դար:

1921 մայիսի 21

Լը.

Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արեւը՝ ջահ սըրբազան,
Ծիածանը նարօտ եղաւ, ամենքի սէրն՝ աւազան.
Սարը եղաւ կընքահայրըս, ցօղը՝ միւռոն կենսաւէտ,
Ու կընքողըս Նա ինքն եղաւ, որ սահմանեց ինձ պօէտ:

1921 հոկտեմբեր

Լ.

Ո՛վ անճառ Միև, որ ամենին միացնում ես մի կեանքում,
Ամեն կեանքում ու երակում անտես, անկէզ բորբոքում,—
Ողջ ազատ են ու հարազատ էս աշխարհքում Քեզանով,
Ողջը Քո մէջ՝ անմահ, անվերջ՝ Քեզ են երգում Քո ձէնով...

1921 օգոստոսի 3

Խ.

Կեանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպըտուղ, անցաւ առանց արդիւնքի:
Ինչքան ծաղիկ պիտի բուսնէր, որ չըբուսաւ էս հողին...
Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըւողին...

1921 սեպտ. ի 5

Լեգենդներ
Բալլադներ
Առակներ
Առասպելներ

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ա.

Ժամանակով կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գդակ չունէր,
Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի
Ճանկել էր մի գառան մորթի:
Եկաւ մի օր, ձմեռւան մըտին,
Կատուի կուշտը տարաւ մորթին:

— Բար՛ աջողում, ուստա Փիսօ,
Գլուխըս մըրսեց, ի սէր Աստոյ,
Ա՛ռ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գլխիս յարմար:
Վարձիդ համար միամիտ մընա՛,
Համա-համա շատ չուշանայ:

— Աչքիս վըրա, քեռի Ռուչի.
Մի գըդակ ա, հօ մի քուրք չի.
Ռու թանկագին խաթեր համար
Ուրբաթ օրը համեցէք տար:
Փողի մասին աւելորդ ա,
Մեր մէջ խօսելն էլ ամօթ ա,
Ինչ մեծ բան ա, ւոօ՛ հէ՛ր օրհնած,
Միայն, միայն մի գդակի վարձ:
Ուրբաթ օրը քեռի Ռուչին
Ուստից առաջ բաց-բաց կուճին
Թափ թափ տալով ծանդըրի ու մեծ
Ուստա կաուչի շէմքում կանգնեց:
— Ուստէն ո՞ւր ա... փափախս ո՞ւր ա...
— Մի քիչ կացի — հրէս կերեւայ:

Բ.

Ուստէն եկաւ քուրքը հագին,
Շանը տեսաւ, բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փընթփընթաց,
Ու մուշտարու վրայ թընդաց.
— Ծուրտը տարա՞ւ... վա՜հ, տընաշէն,
Չես թող անում մի շունչ քաշեն.
Հեշտ բան հօ չի՞, հրլա նոր եմ
Ձրըցամ տրւել, թէ որ կարեմ:
— Դէ հե՛ր օրհնած, էտէն'նց ասա,
Էդ բարկանալդ էլ ընչի՛ս ա:
Փող եմ տրւել, վախտին կարի,
Թէ չէ՝ ասա, էգուց արի:

Համ ատում ես, համ չես կարում,
Համ խօսում ես, վըրէս գոռում,
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի՞, ախպէր գընամ ու գամ...
Ասաւ Քուչին ու նեղացած
Վերադարձաւ գըլուխը բաց:

Գ.

Մին էլ եկաւ, դարձեալ չըկար.
Էս անգամը դիպան իրար.
Էլ անպատիւ, անկարգ խօսքեր,
Էլ հին ու նո՛ր, էլ հէրն ու մէ՛ր,
Էլ գող Փիսօ՛, էլ քաչալ Շո՛ւն...
Բանը հասաւ դիւանբաշուն:
Շունը մինչեւ գընաց, եկաւ,
Ուստա Կատուն կոտըրն ընկաւ,
Գըլուխն առաւ ու մի գիշեր,
Հայդէ՛. կորաւ. էն կորչին էր...

Դ.

Էն օրւանից մինչեւ օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել.
Մըտքում հըլա դեռ պահում ա.
Որտեղ Կատուին պատահում ա,
Վեր ա թըռչում, վըրա վազում,

Իրեն մորթին ետ ա ուզում,
Իսկ սեւերես Կատուն յանկարծ
Ետ ա դառնում ու բարկացած
Փըշտացնում ա. մըթամ նոր եմ
Ծըրցամ տըւել, թէ որ կարեմ:

1886

Ա Խ Թ Ա Մ Ա Ր

Ծիծաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առաւինեայ
Ծովն է մըտնում գաղտագողի
Ամեն գիշեր մի տըղայ:

Ծովն է մըտնում, առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող է տալի
Դէպի կըղզին դիմացի:

Խաւար կըղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նըրան,
Մի վառ փարոս նըրա համար,
Ջըմոլորի իր ճամբան:

Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնպէս կըրակ է անում,
Եւ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մօտիկ դարանում:

*
* *

Ծըփում է ծովն ալեծածան,
Ծըփում է սիրտը տրղի.
Գոռում է ծովն ահեղածայն,
Նա կրուում է կատաղի:

Եւ Թամարը սըրտաւորրուի
Արդէն լըսում է մօտիկ
Ջըրի ճողփիւն, ու ողջ մարմնով
Սիրուց այրում է սաստիկ:

Լըռեց: Ծովի խաւար ափին
Կանգնեց սեւ-սեւ մի ըստուեր...
Ահա եւ նա... իրար գըտան...
Կասկածաւո՛ր լուռ գիշեր...

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմ դիպչում են ափերքին,
Հըրհըրելով հեռանում են
Շըշունջներով անմեկին:

Ներանք ասես փըսփըսում են...
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամօթ Թամարից...

Բամբասում են կուսի սըրտում...
Ժամ է արդէն... ու կըրկին
Մինն ալեկոծ ծովն է մըտնում,
Միւսն աղօթում եզերքին...

* * *

«Ո՞վ է ջահիլ էն խիզախը,
Որ հէնց հարբած իր սիրով,
Սըրտից հանած ահն ու վախը
Ծովն անցնում է գիշերով:

Ծովն անցնում է միւս ափերից
Մեր Թամարին համբուրում...
Աղջի՛կ խըլի նա մեր ձեռ[ի]ց...
Ինչի տեղ է մեզ դրնում...»

Էսպէս ասին վիրաւորւած
Կըղզու միջի ջահիլներ
Ու Թամարի ձեռքով վառած
Լոյսը հանգցրին մի գիշեր:

Մոլորւեցաւ խաւար ծովում
Լուղորդ տըղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերո՛ւմ
Հառաչանքներն—«Ա՛խ, Թամա՛ր...»

Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խըլացած
Ու մերթ լըսւում ուժասպառ,
«Ա՛խ, Թամա՛ր...»

* * *

Առաւօտեան ծովը ծըփաց,

Ափը ծըգեց մի դիակ,
Ներա շուրթին, պաղ, կարկամած,
Ասես, մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.
«Ախ, Թամար...»

Այն օրւանից սըրա համար
Գըղզին կոչւեց «Ախթամար»:

1891

ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Մի օր Զրոյցիկն ու ձայն եկան
Թէ՝ ե՛կ դառնանք վաճառական:
Ասին ու խելք խելքի տուին,
Հաւան կացան, պայման դրին.
Բայց՝ արի տես... որ փող չունեն:
Շատ միտք արին, թէ ինչ անեն:
Վերջը եկան Փըշի մօտը,
Ընկան նըրա ձեռն ու ոտը,
Ու մուրհակով,
Շահով, կարգով,
Փող վեր առան բաւականին,
Ինչքան պէտք էր իրենց բանին:

Զիլջը մընաց, տընպահ դառաւ,
Ձայը բոլոր փողերն առաւ,
Առաւ նըստեց նաւի միջին,
Հասաւ Մըսըր, Զինուստանին,
Ֆարս, Հընդըստան,
Արաբըստան...

Էլ Թանկագին քիրմանի շալ,
Էլ մարգարիտ, գըմրուխտ ու լալ,
Հընդու խուրմա, փըստա, բադամ,
Եւ... ո՛ր մէկի անունը տամ.
Ինչ որ տեսաւ, աչքը սիրեց,
Առատ-առատ նաւը լըցրեց.
Նաւը լըցրեց հազար բարով
Ու ետ՝ եկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր գալիս:
Ճամփին ծովում սարսափելի
Ալեկոծում, մըրրիկ ելաւ,
Ջարկեց, տարաւ ապրանք ու նաւ:
Միայն սովդաքեար ճայը էնօր
Ազատուեցաւ մերկ ու տրկլոր:
Ազատուեցաւ—փառք իր Աստուն,
Բայց ինչ սրտով խեղճը գայ տուն.
Գա՛յ— ինչ ասի պարտքատէրին,
Ո՞նց երեւայ իր ընկերին...
Ընկերն էնտեղ՝ դուռը կըտրած,
Աչքը ճամփին, վիզը ծըռած,
Համրում է օրն օրի վըրայ
Թէ՝ մեր ճայը երբ պիտի գայ...
Երկար նայեց,
Ճամփէն պահեց,
Շատ լաւ ու վատ երազ տեսաւ,
Մինչեւ պարտքի օրը հասաւ
Ու՝ մուրհակի թուղթը ձեռին,
Փուշը տընկեց կըտեր ծէրին:
—«Է՛յ, բարեկամ, ինչ բանի էք.

Էլ չէք ասում թէ պարտք ունէք...
Գործ բռնեցիք, հօրս ողորմի,
Ետ տուէք դէ փողըս հիմի:
Թուղթ էք տուել՝ վախտ իմացէք,
Ամօթ, աբուռ, ահ ունեցէք...
Թալան հօ չի՞... մեղք եմ ես էլ...
Ախպէ՛ր, էսպէս բա՞ն էք տեսել.
Ոսկի տայ մարդ իրեն ձեռով,
Չկարենայ առնի զօռո՞վ...
Սըրանից ետոյ դէ արի դու
Ու ձեռ մեկնի աղքատ մարդու...»
Գորգոռում էր ողջ թաղակում,
Հայհոյում էր, խայտառակում.
Ամեն մարդ էլ, ով որ լըսում,
Հէնց մի բերան էն էր ասում.
—«Ա՛յ ամօթ ձեզ, Զըղջիկ ու Ճայ.
Ինչ ենք լըսում.— վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ.
Անուններըդ վաճառական
Ու էս տեսակ խայտառակ բա՞ն...
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,
Զըղջիկ ու Ճայ...»
Զըղջիկն էսպէս միշտ լըսելիս
Սիրտը բերնով դուրս էր գալիս:
Բարկանում էր իրեն մըտքում,
Անիծում էր, չքում, թըքում.
— «Ա՛յ քու տունը քանդուի, ա՛ Ճայ,
Ա՛յ դու դառնաս Գըրոզի փայ.
Էս ինչ բան էր, որ դու արիր,
Գլուխս էս ինչ փորձանք բերիր»...

Ու խընդրում էր ամեն անգամ.
— «Մի նեղանար, Փուշ բարեկամ,
Շատ ես կացել,
կա՛ց մի քիչ էլ.
Թուղթ ստացայ երէկ ձայից,
Թէ դուրս եկայ Արաբիայից.
Որտեղ որ է՝ շուտով կըգայ,
Դեռ մի բան էլ աւել կըտայ»...
— Ես չեմ ուզում աւելն, ախպէր,
Կանխիկ համրած իմ փողը բեր.
Շահ էք գըրել.
վախտ էք դըրել.
Ինչ գըրած ա, էն եմ ասում,
Չեզնից աւել բան չեմ ուզում:
— «Չէ՛, աղա Փուշ,
Թէ վաղ, թէ ուշ,
Փողն իր կարգին, շահն իր կարգին,
Իսկ պատիւդ... ես իմ հոգին...
Ես յոյս ունեմ... ասենք պարտ ենք...
Բայց չէ՞ ախար մենք էլ մարդ ենք...
Չէ՛, քու արածն ով մոռանայ,
Իր Աստուածն էլ նա կ'ուրանայ...»

Խեղճը էսպէս լեզու ածաւ,
Շատ յոյս տըւաւ, շատ խոստացաւ,
Շատ սուտ ասաւ պարտքատէրին,
Շատ ըսպասեց իր ընկերին.
Բայց ընկերը չըկայ, չըկայ:
— «Էս ինչ ցաւ էր, Աստուած վըկայ.

Ի՛նչ իմ բանն էր՝ մրտա մէջը,
Որ խայտառակ լինեմ վերջը...
Ի՞նչպէս պըրծնեմ ես կըրակից,
Էս ահագին պաբտքի տակից,
Էլ ի՞նչ ասեմ,
Ո՞նց ըսպասեմ.
Նա ե՞րբ կըգայ, ի՞նչ իմանամ,
Ո՞ր ջուրն ընկնեմ... ո՞ւմ մօտ գընամ...»
Շատ միտք արաւ,
Դէս դէն թըռաւ,
Ինչ որ ունէր տանը, հագին,
Ողջ հաւաքեց, տըւաւ պարտքին,
Ցիփ մերկացաւ,
Էլ չըպըրծաւ:
Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,
Թեւեր առաւ, ինքն էլ փախաւ,
Փախաւ, կորաւ, որ էլ՝ էնպէս
Դատարկ, սրնանկ ու սեւերես,
Ոչ պատահի պարտքատէրին,
Ոչ երեւայ լոյս աշխարհին:

Այնուհետեւ իր նամուսից,
Ըղջիկը մերկ, փախած լուսից,
Ցերեկները դէս դէն թագչում,
Գիշերն է միշտ մըթնում թըռչում,
Որ չերեւայ իր թայ-թուշին,
Ոչ պարտքատէր աղա-Փուշին:
Ձայն էլ ծովում,
Ձըչում, ծըւում,

Ջուրն է մրմնում,
Դուրս է պըրծնում,
Թևին տալիս,
Ման է գալիս,
Թէ մի գուցէ բախտը բանի,
Կորուստն էլ ետ ջըրից հանի:
Իսկ Փուշն, արդէն յոյսը հատած,
Ձանկ ու առամ սուր պատրաստած,
Կողքովն ով որ անց է կենում՝
Ֆաշում է փէշն ու հարցընում
Թէ չե՞ն տեսել մէկն ու մէկին,
Էն լիրբ ձային կամ Ջրդջիկին.
Ու էն օրից մինչեւ օրս էլ
Մէկը մէկին դեռ չեն տեսել:

ԱՆԻՆԱՅ ՀԱՐՍԸ

Վաղ ժամանակ մի հայ շէնում
Մի յարգեւոր հարսն է լինում:
Նըրա բերնից՝ կեսուր- կեսաւ
Չէին լըսել մի շունչ, մի բառ,
Չէին տեսել շուրթը մի օր...
Էսպէս խոնարհ ու յարգեւոր:
Մի օր մենակ օդում նըստած,
Իր ճոխ մազերն արծակ թափած,
Ազատ, անփոյթ սանրում, հիւսում,
Հետն էլ ձէնով երգ էր ասում:

«Աշխարհքը բանտ,
Մէջը անբախտ
Ես մի գերի անխընդում.
Սիրուն շորեր,
Ջահիլ օրեր
Ինչ եմ անում էս բանտում:

«Էրնէ՞կ ծըտին,
Ճիւղքի միջին
Ծըւըլում է, թըրթըռում,
Թըռչում՝ սիրած
Ընկերն առած,
Ազա՜տ, կանաչ արտերում:

Ախ, սեւ ըլի,
Զըքւի, փըլի
Ծընւած օրը աղջըկայ,
Ցաւ ու խընդում
Փակւած սըրտում,
Ծիծաղ չըկայ, «ախ» չըկայ...»

Մին էլ յանկարծ բացւեց դուռը
Ու ներս մտաւ ծեր կեսուրը:
—Յօ՛, պօ՛, պօ՛, պօ՛, կանչի՛ խեղճը,
Գետին պատռի՛, մըտնեմ մէջը..,
—Յօպօպ դառնաս,
Անամօթ հարս:
Մի տե՛ս, մի տե՛ս,
Թէ լըրբի պէս
Գըլուխը բաց,
Ազատ նըստած՝
Ո՞նց է կանչում,
Չի ամաչում...
Լեզուդ լալկի,
Մազըդ թաղքի,
Գըլխիդ կըպչի
Սանրը միջի:

Ասաւ-չասաւ,
Մին էլ տեսաւ՝
Սանրը գըլխին
Հարսն առաջին
Յօպօպ դառաւ,
Երդկից թըռաւ,
Ու վերացաւ,
Վեր, հեռացաւ:

Էն էր ու էն.
Խեղճն էն օրէն
Հանդերն ընկած՝
Յօպօպ մընաց,
Միշտ էլ էն հին
Սանրը գըլխին,
Ձալիկ-մալիկ,
Լեզուն լալիկ,
Անխօս ու լուռ,
Մոլո՛ր, տըխուր:

Բայց երբ յանկարծ
Միտն է գալիս,
Որ գըլխաբաց,
Երգ ասելիս՝
Իր կեսուրը
Բացեց դուռը,
Վեր է թըռչում
Սըրտատրրոփ
Ու դեռ ճըչում.
—Յօ՛-պօ՛պ...Յօ՛-պօ՛պ...

1898

ԱՐԾԻՒՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղաւ՝ մի անգամ անտառի միջին
Արծիւն ու կաղնին այսպէս վիճեցին,
Թէ ո՛րն իրենցից շատ տարի կապրի,
Որն է դիմացկուն ու պինդ աւելի:
Արծիւն ասաւ՝ ես. Կաղնին էլ թէ՝ ես:
Երկուսն էլ յամառ ու հրպարտ այսպէս՝
Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը էս տեսակ պայման կապեցին:
Ժամանակ դըրին հինգհարիւր տարի
Արքան հաւքերի, արքան անտառի,
Որ թէ որոշած էն օրին հասնեն,
Էն օրը մին էլ գան իրար տեսնեն:
Ու Արծիւն իսկոյն կաղնուց հեռացաւ,
Հըզօր թեւերը շարժեց, վերացաւ
Դէպի ամպերը, դէպի ժայռերը,
Ուր անց է կացնում իր լաւ օրերը:
Կաղնին էլ փրռեց ճիւղերն արմատի
Ու էնպէս հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգհարիւր տարում:

Դարեր անց կացան: Եւ ահա մի օր
Արծիւը եկաւ ծերացած, անզօր,
Ծլուցը կըտրած, տըկար, հեւալով,
Թոյլ-թոյլ թեւերը հազիւ քարշ տալով
Տեղ հասաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,
Տեսաւ, որ Կաղնին ընկել էր արդէն.
Ճիւղերը թէեւ դեռ թարմ ու կանաչ,
Ընկել էր ահեղ փոթորկի առաջ:
—Հէյ, կանչեց. գոռոզ, պարծենկո՛տ Կաղնի,
Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգհարիւր տարուց մի ժամ էլ դեռ կայ,
Ընկել ես արդէն, անկոտրում հըսկայ:
—Հինգհարիւր տարի ապրել եմ կանգնած,
Էդքան էլ կապրեմ դեռ էսպէս թիկնած,
Մինչեւ լըրանայ մի հազար տարին.
Պատասխան տըւաւ ընկած վիթխարին:

1898

"ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ„

Վաղո՛ւց, երբ մօտ էր երկրին երկինքը
Ու լըսում էր դեռ մարդկանց Տէր-Ինքը,
Էն լաւ ժամանակ երկու մանուկներ
Ունէին մի չար, մի անսիրտ խորթ մէր:
—Կորէ՛ք, գընացէք, աշխատանք արէք,
Աշխատանք արէք ու եկէք կերէք.
Ինչ էք վեր թափել անգործ ու անբան,
Հասած տըղերք էք հինգ-վեց տարեկան...
Էսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը,
Ճիպոտներ տըւաւ, ղըրկեց հորթերը:
Անհանգիստ հորթե՛ր, ամառւան շոգ օր.
կէտ արին, փախան, ընկան սար ու ձոր:
Ներանց ետեւից՝ լալով, հեւալով,
Փոքրիկ որբերը՝ քարէքար գալով
Վազ էին տալիս անտառի միջում,
—Պօղո՛ս, գըտա՛ր:
—Չէ՛:
—Պետրոս, գտա՛ր:

—Չէ՛:
—Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ, վո՛ւյ
Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ...
Շատ որ ման եկան՝ խեղճերն յոգնեցին,
Եկան՝ խորթ մօրը լալով պատմեցին.
—Նա՛նի, ա՛յ նանի, կորան հորթերը...
—Վա՛յ, գետինն անցնէք, ճըչաց խորթ մէրը,
Թող դուք կորչէիք հորթերի տեղակ,
Անտակ ձորի մէջ, անժաժ քարի տակ:
Մի արջ պատահէր, մի գազան, մի գէլ,
Որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...
Դէ՛, ետ գընացէք, գընացէք, կորէ՛ք,
Մինչեւ չըգտնէք հորթերը բերէք՝
Աչքիս չերեւաք, ա՛յ աչքիս փըշեր,
Թէ չէ կը սպանեմ ես ձեզ էս գիշեր...
—Ու ճիպոտն էլ ետ իրենց թաթերին,
Ծոգնած ու սոված, արցունքն այտերին,
Փոքրիկ որբերը՝ անտառի միջում,
Գիշերուան կիսին լալիս են, կանչում.
—Պօղո՛ս, գտա՛ր:
—Չէ՛:
—Պետրո՛ս, գտ՛ա՛ր.
—Չէ՛:
—Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:
Անտէր հորթերը չըկան ու չըկան:
Ձարները կըտրած՝ խեղճերը եկան,
Լալով չոքեցին.
—Տէ՛ր Աստուած, ասին,

Ինչ կըլնի, գըթաս՝
Գոնէ թեւեր տաս,
Թեւեր տաս՝ թըռչենք,
Թըռչենք ու կորչենք,
Որ էլ չըտեսնի մեզ մեր խորթ մէրը,
Մինչեւ որ գըտնենք կորած հորթերը...
Հէնց ասին-չասին անմեղ բերանով.
Աստւած որոտաց իր գըթոտ ձայնով.
— Ահա ձեզ թեւեր, սիրուն՝ երեխէք,
Թըռչուններ դառէք, թըռած ման եկէք,
Որ էլ չըտեսնի ձեզ ձեր խորթ մէրը,
Մինչեւ որ գըտնէք կորած հորթերը:
Գիշերը քնեցէք ծառերի ճիւղին,
Ծեղն ու ծըղօտը արէք անկողին,
Ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից,
Երբոր դաւարկուն եղաք ձեր տանից...
Էսպէս վերեւից հէնց կանչեց Աստւած,
Փոքրիկ որբերը փոխուեցին յանկարծ
Ու թեւեր առան,
Թըռչուններ դառան:
Ու թեւեր առած,
Թըռչուններ դառած
Դեռ մինչեւ էսօր,
Ընկած սար ու ձոր,
Ծլւում են, մընչում,
Մէկ մէկու կանչում.
—Պօղո՛ս, գտա՛ր.
—Չէ՛:
—Պետրո՛ս գտա՛ր:

—Չէ՛:
—Վա՛յ-վա՛յ, վույ-վո՛ւյ,
Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ:

1898

ՓԱՐԻԱՆԱ

I

Բարձրագահ Աբուլն ու Մրթին սարեր
Մէջք մէջքի տըւած կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջաւախքից էլ վեր՝
Բրռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ էնտեղ, արծըւի նըման,
Ծիծղուն, կապուտակ երկընքի ծոցում,
Նըստում էր էն սէգ սարերի արքան
Իրեն Փարւանայ ճերմակ ամրոցում:

Փարւանայ արքան մի աղջիկ ունէր,
Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
Էնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել՝
Իր որսն անելիս Մրթին սարերում:

Աշխոյժ մանկութեամբ զարդարում էր նա
Ծերութեան օրերն ու սարերն իր հօր,
Ու ապրում էր ծեր արքան Փարւանայ
Իրեն էն քընքուշ ծաղկով բախտաւոր:

Մեծ բախտը սակայն առջեւըն էր դեռ:
Եկաւ էն օրն էլ հասաւ երջանիկ,
Ու ղըրկեց արքան ուրախ դեսպաննեը
Ամեն մի ամրոց, ամեն արքունիք:

— Մրտեղ է, ասաւ, էն քաջը, թէ կայ,
Իմ չընաշխարհիկ, դըստերն արժանի,
Թող առնի իր ձին, իր զէնքն ու զըրահ,
Գա՛յ, ցոյց տայ իրեն, իր բախտը տանի...

II

Հագած, կապած զէնք ու զըրահ,
Ձիանք հեծած ամեհի,
Ահա եկել հաւաքւել են
Կըտրիճները Կովկասի,
Ծեր Փարւանայ թագաւորի
Ապարանքի յանդիման
Կազմ ու պատրաստ սպասում են
Մօտիկ ժամին մըրցութեան:
Ըսպասում է ողջ աշխարհքը՝
Եկած, կիտւած Փարւանա,
Թէ ո՞ր կըտրիճն արդեօք պիտի
Էն սիրունին տիրանայ:

—

Հընչեց փողը: Ահա փունջ-փունջ
Դըրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նազելի
Ու թագաւորն ալեհեր:
Հայրը ինչպէս մըռայլ մի ամպ,

Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարուած՝
Դուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարհքը,
կըտրիճները, քարացած,
Երազների մէջ են ընկնում՝
Էս աշխարհքից վերացած:

—

—Նայի՛ր, դըստրի՛կ, իշխանազուն
Էս քաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդէս դուրս գան,
Պայքար մըտնեն քո առաջ.
Մէկը իրեն ուժը ցոյց տայ,
Միւսը շընորհքն իր բազկի,
Որը ճարպիկ ձիարշաւը,
Որն էլ թափը իր վազքի:
Իսկ երբ կըռւին առնի դադար,
Ցայտնի լինին քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջեւից
Կըտրիճները պայազատ,
Ընտրի՛ր, զարկի՛ր ձեռքիդ խնձորն
Անյաղթներից անյաղթին,
Որ ողջ աշխարհ մայիլ մընայ
Անզուգական քո բախտին:

—

Ասաւ արքան, ձեռքը ծըգեց,
Նըշան տըւաւ պայքարին,

Այն ինչ՝ աղջիկն առաջ եկաւ՝
կարմիր խնձորն իր ձեռին:
—Գուցէ, հայրի՛կ, տկար լաւին
Յաղթէ մի վէս տրմարդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սրտի...
—Է՛յ, Փարւանայ, չըքնաղ փէրի,
Ի՞նչն է հաւան քո սրտին,—
Խրոնըւում են կըտրիճները,
Խընդրում կըրկին ու կըրկին:
Գա՞նձ ես ուզում, ոսկի՞, արծաթ,
Անգին քարեր ու գոհա՞ր,
Ա՞ստղ ես ուզում, էլ երկընքից
Վար կը բերենք քեզ համար:
—Ինչի՞ս են պէտք ոսկին, արծաթ
Եւ կամ աստղը երկընքի:
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի:
Ես նըրանից հուր եմ ուզում,
Անշէջ հուրը սըրբազան,
Ով կը բերի անշէջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան...

Ասաւ աղջիկն, իրար անցան
կըտրիճները քաջարի,
Զիանք հնձած թըռան հապճեպ
Դէպի չորս կողմն աշխարհի.
Թըռա՛ն, շուտով գըտնեն, բերեն
Անշէջ հուրը աղջըկան.

Բայց... տարիք են գալի՜ս, գնո՜ւմ,
Ներանք չըկան ու չըկան:

—

—Հայրի՛կ, ինչո՞ւ ետ չըդարձան
Էն քաջերը սիրատենչ.
Մի՞թէ, հայրի՛կ, ինձ մոռացան,
Էլ չեն բերել հուրն անշէջ:

—Ո՛չ, իմ դըստրիկ, կըգան անշուշտ
Ու կը բերեն էս տարի:
Կրունկներով արիւնըռուշտ
Լիքն է ճամփէն քաջերի:
Ո՛վ իմանայ, պէտք է անցնեն
Մութ աշխարհքից, սեւ ջըրից.
Ո՛վ իմանայ, պէտք է փախցնեն
Եօթ գըլխանի դեւերից:

Անց է կենում դարձեալ տարին:
Նայում է կոյսն՝ամեն օր.
—Ո՛ւր է, հայրի՛կ, ե՞րբ կըգայ նա,
Սարից թըռած ծիաւոր:

Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին ապագայ,
Հուր կարօտով թըռած իմ դէմ,
Լուսանում է... ու չըկայ:

—Կըգայ, դըստրի՛կ իմ թանգագին
Հեշտ չի բերւում հուրն անշէջ.
Շատ-շատ անգամ բերող հոգին
Ինքն է այրւում նըրա մէջ...

Անց է կենում դարձեալ տարին:
Նայում է կոյան ամէն օր.
Ոչ մի սարից, ոչ մի ճամփում
Չի երեւում ծիաւոր:

--Հայրի՛կ, հայրի՛կ, մի՞թէ չըկայ
Էս աշխարհքում անշէջ հուր,
Թառամում է սիրտս ահա,
Պաղ է այս կեանքն ու տըխուր...

Էլ չի խօսում. մռայլ տըրտում,
Լուռ է արքան ալեւոր,
Սեւ-սեւ ցաւերն իրեն սըրտում՝
Միտք է անում գըլխակոր:

IV

Էսպէս անցան շատ տարիներ.
Տըխուր աղջիկն արքայի
Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր,
Ճամփաներին ամայի,
Յոյսը հատաւ... ու լաց եղաւ.
Էնքա՜ն արաւ լաց ու կոծ,
Որ լիճ կըտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկե՛ց, կորա՜ն, ինքն էլ հետը...
Այժմ Էնտեղ տըրտմաշուք
Խոր Փարւանայ լիճն է ծըփում,
Ցըստա՛կ, ինչպէս արտասուք,
Ու էն վճիտ ջըրերի տակ
Ցոյց են տալի մինչ էսօր

Ծեր արքայի ճերմակ ամրոցն
Ու շէնքերը փառաւոր:

*
* *

Ասում են, էն թիթեռները,
Որ գիշերուայ խաւարում,
Որտեղ ճրագ, որտեղ կրակ,
Որտեղ լոյս է հէնց վառւում,
Հաւաքւում են, շուրջը պատում,
Մէջն են ընկնում խելագար,
Ասում են, թէ՝ էն Փարւանայ
Ջահիլներն են սիրավառ:
Ըշտապելուց թեւ են առել,
Դարձել թևթեւ թիթեռներ,
Ու տակաւին հուր տեսնելնիս՝
Մէջն են ընկնում անհամբեր.
Ջանք է անում ամեն մինը՝
Շուտով տանի, տիրանայ...
Ու այրւում են, այրւո՛ւմ անվերջ
Կրտրիճները Փարւանայ:

1902

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կէս գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկընքից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մըթնած երկընքից:

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հրսկայական
Լոյս է տալիս աշխարհին:

Լոյս է տալիս երկա՛ր դարեր,
Ու վառւում են միշտ անշէջ
Սուրբի մաքուր արցունքները
Իւղի տեղակ նորա մէջ:

Ոչ մարդկային ձեռ կը հասնի
Էն ահաւոր բարձունքին,
Եւ ոչ քամին կը հանգցընի՝
Վիշապ-քամին ահագին:

Երբ պատում է մութ խաւարը
Ջընաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը
Թոյլ, կասկածոտ սըրտերին,

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հաւատով անսասան,
Ով նայում է վառ յոյսերով
Դէպի Հայոց ապագան—,

Նա կը տեսնի էն մըշտավառ
Ջահը կախուած երկընքից,
Աւետ՝ Աստծոյ աչքը պայծառ
Հըսկում է ցած երկընքից:

1902

Մի կաթիլ մեղրը

Մի գիւղացի իրենց գիւղում
Խանութ սարքել, բան էր ծախում:
Օրւան մի օր մօտիկ գիւղից,
Մահակն ուսին, շունն ետեւից
Ներս է մըտնում մի զըռ չոբան.
—Բարի օր քեզ, ա՛յ խանութպան,
Մեղրը չունե՞ս,
Մի քիչ տաս մեզ:
—Ունեմ, ունեմ, չոբան ախպէր.
Ամանդ ո՞ւր է, ամանըդ բեր,
Ինչ տեղից որ ինքդ կուզես,
Էս սրհաթին քաշեմ տամ քեզ:

Էսպէս հանգիստ, էսպէս սիրով,
Մեղրից անուշ լաւ խօսքերով
Մեղր են քաշում. մին էլ յանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած:
—Տը՛զզ, էն կողմից մի ճանճ գալի,
Էս կաթիլին վեր է գալի:

Ձանճի վըրա, թաքուն-թաքուն,
Էս խանութի տիրոջ կատուն
Դուրս է ցատքում,
Թաթով զարկում...

Բայց հէնց կատւի ցատքելու հետ
Հովւի շունը իսկոյն եւ եթ
Հաչի է անում,
Վեր է կենում,
Խեղճ փիսիկին
Դընում տակին
Ջեռաց խեղդում
Ու շըպըրտում:

«Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն.
Ա՛յ սատկես դու, շան որդու շուն»,
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մօտիկ բանը
Տուր՝ թէ կըտաս շան ճակատին,
Շուռ է տալի կատւի կողքին:

—Վա՛յ, ձեզ մատա՛ղ, ասլան շունըս,
Իմ ապրո՛ւստը, տե՛ղըս, տո՛ւնըս...
Տունըդ քանդւի, ա՛յ խանութպան,
Անխիղճ, լիրբ, չար, ֆըլան, ֆըստան,
Ո՞նց թէ դու իմ շանը զարկե՛ս,
Դէ, զարկելը հիմի դու տես...
Գոռում է մեր աժդահակը,
Մեծագըլուխ իր մահակը

Ետ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շէմքում փրռում:

—Ըսպանեցին . . . հայ, օգնութիւն . . .
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձէն է տալի մէկը միւսին,
—Հայ, օգնութիւն . . . ըսպանեցին . . .

Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վըրից, գործի տեղից,
Ճիչով, լալով,
Հարայ տալով—
Էլ հէրն ու մէր,
Քիր ու ախպէր,
Կին, երեխէք,
Ընկեր տըղէք,
Զոքանչ, աներ,
Քաւոր, սանհէր,
Քեռի, փեսայ . . .
Ինչ իմանաս էլ՝ ով է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թէ տալիս.
—Տօ՛, կոպիտ արջ, տօ՛, վայրենի,
Էս տեսակ էլ բա՞ն կըլինի.
Դու առուտուր եկար անես,
Թէ՞ իր շէմքում մարդ ըսպանես . . .

Մին ասում են—տասը զարկում,
Աղցան անում, մէջտեղ ծըգում
Իր շան կողքին երկար ու մէկ:

—Դէ՛, ձեր մեռելն եկէք տարէք:
Ու էստեղից բօթը գընում,
Գընում մօտիկ գիւղն է հասնում.
—Հէ՛յ, օգնեցէ՛ք,
Մեռած հօ չէք,
Ըսպանեցին մեր գիւղացուն . . .

Ինչպէս շընաճանճի մի բուն
Քանդես, թողնես,
Էն ճանճի պէս
Ամբողջ գիւղով օրդու կապում,
«Բո՛ւհ» են անում, դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.

Որը ձեռին մի հրացան,
Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փէտով,
Որը ձիով, որը ոտով,
Որն անգըտակ, որը բոբիկ—
Դէպի դուշման գիւղը մօտիկ:
—Տօ՛, էսպէս էլ անիրաւ գի՛ւղ.
Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկիւղ.
Մարդ գընում է առուտուրի
Հաւաքւում են քաշում սըրի:
Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր ադաթին . . .
Գընա՛նք, զարկե՛նք,
Ջարդե՛նք, կրակե՛նք . . .

—Հայ, հույ, յառաջ, դէ՛, ձեզ տեսնե՛մ...
Ու դուրս եկան իրարու դէմ:
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
կոտորեցին, կըրակեցին.
Ինչքան աւել կոտորեցին,
Էնքան աւել կատաղեցին,
Ջարդեցին իրար,
Ջընջեցին իրար,
կորան, գընացին
Գետնին հաւասար:

Դու մի՛ ասիլ, մէկը մէկից
Էսքան մօտիկ, սահմանակից
Էս գիւղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի:
Մի տէրութեան թագաւորը,
երբ լընում է էս բոլորը,
Արձակում է հըրովարտակ
Ժողովըրդին իր հրպատակ.
—Ցայտնի լինի մեր տէրութեան,
Ջինւոր, բանւոր, ազնըւական—
Ամեն շարքին
Ու աշխարհքին,
Որ անօրէն ու դաւաճան
Մեր դրացի ազգը դաժան,
երբ մենք քընած էինք սիրով,
Մեր սահմանը մըտաւ գօրով,
Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի զաւակներին:

Արդ սրբահար ու հրրակէզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եւ մենք, ընդդէմ մեր իսկ կամքին,
Պատւէր տուինք մեր բանակին,
Թընդանօթով մեր աւերող
Ու Աստուծով մեծակարող,
Յանուն արդար ու սուրբ ոխի
Մըտնի հողը մեր ոսոխի:

Միւսը նոյնպէս իրեն հերթին
Գըրեց զօրքին, ժողովըրդին.
—Մարդկանց առաջ եւ Աստըծու,
Բողոքում ենք մեր դըրացու
Վարմունքի դէմ եւ չար, եւ նենգ,
Որ՝ ուրբելով ամեն օրէնք,
Բորբոքում է կըռիւ ու վէճ
Հին հարեւան ազգերի մէջ,
Քանդում սիրոյ դաշը կապած:
Արդ՝ ակամայ մենք ըստիպւած,
Յանուն պատուի, արդարութեան,
Յանուն թափւած անմեղ արեան,
Յանուն ազատ մեր աշխարհքի,
Յանուն Աստծու եւ իր փառքի—
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրը նորա վըրա:

Ու ըսկսեց կըռիւն ահեղ:
Շռինդ, որոտ էատեղ, էնատեղ:
Կըրակն ընկաւ շէն ու քաղաք,

Արիւն, աւեր, ճիչ, աղաղակ,
Ամեն կողմից սարսափ ու բօթ,
Ամեն հողմից մեռելի հոտ . . .
Ամառ, ձըմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անբան,
Դաշտերն անցան,

Ու, կըռիւը չըդադարած,
Սովը եկաւ համատարած:
Սովը եկաւ—սովի հետ ցաւ.
Ծաղկած երկիրն ամայացաւ . . .
Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թէ ո՞րտեղից արդեօք ծագեց
Էս ընդհանուր աղէտը մեծ :

1909

ՀՍԿԱՆ

Կովկասեան առասպել

Լաւ չեմ յիշում թէ որ դարում,
հին ժամանակ, մեր աշխարհում
ասում են թէ՝ կար մի իշխան.
մի մեծ իշխան, էնքան ուժեղ,
որ թէ մարդիկ նըրա աչքում,—
թէ՛ հասարակ ճանճ ու մըժեղ:
Ինչ որ անէր ու կամենար,
օրէնք էր էն երկրի համար.
ո՞վ էր գըլխից ծեռ վեր կալած,
ո՞վ դուրս կը գար նըրա դիմաց:
Ունէր անթիւ ու անքանակ
ոչխարի հօտ, մարդի բանակ,
կովի նախիր, խոզի բոլուկ,
երամակներ ծիու, ջորու,
էս բոլորը ցըրւած, փըռւած
մինչեւ ծովի ափը հեռու:
Մինչեւ ուր որ քըշէր, տանէր,

իր աշխարհքի սահմանն էն էր.
ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,
ո՞վ դուրս կը գար նըրա դիմաց.
Մի անգամ էլ էս իշխանը,
երբ նըստած էր իրեն տանը,
լեղապատառ ներս ընկաւ տուն
իր հօտերի վերակացուն.
— Ապրած կենաս, մեր տէր, իշխան,
հապա՛, էսպէս հըրաշք մի բան:
Արածում էր ծովի ափին
բազմութիւնը քո հօտերի,
մին էլ տեսանենք՝ ծովի միջին
մի վիթխարի մարդ է գալիս:
Մի վիթխարի մարդ եմ ասում,
որ մենք իր մօտ լու ենք չնչին.
ծովը մինչեւ ծունկն է հասնում,
իսկ գըլուխը ամպի միջին:
Եկաւ, կանգնեց մեր յանդիման
ու որոտաց ամպի նըման.
«Ո՞վ է, ասաւ, էսպէս բերում
թողնում ապրանքն իմ հանդերում.
կորէք իսկոյն, դուք մարդուկներ,
ձեռըս քանի չի հասել դեռ...»
Էն ժամանակ վեր կացայ ես
ու պատասխան տըւի էսպէս.
«Էդ սեւակնած, մութ ամպերում
զուր ես էդքան բարձըր գոռում.
ով էլ լինես, ուսկից էլ գաս,
էս մի բանը լաւ իմանաս.

դու, երկնահաս, ահեղ հրսկայ,
մեծ իշխանի ապրանքն է սա.
ո՞վ է գըլխից ձեռ վեր կալած,
ո՞վ դուրս կը գայ նըրա դիմաց»:
Բայց ինձ իսկի չը լսեց էլ
էն անեռունի աժդահակը,
էն ամպերից ցած կըռացաւ,
ձեռը կոխեց ծովի տակը,
դուրս հանեց մի ծուկն ահագին
ու դէմ արաւ արեգակին,
որ խորովի...» — Հազիւ էսքան
պատմեց հովիւն իշխանական
ու վէր ընկաւ, շունչը փչեց:
Խիստ զայրացաւ իշխանը մեծ.
— Ո՞վ է, ասաւ, համարձակւել,
իմ տէրութեան սահմանն եկել
ու էդպէս էլ վըրէս հաչում...
ինձնից ուժեղ չեմ ճանաչում
ես ոչ մի տեղ եւ ոչ մէկին...»
Էսպէս ասաւ ու զայրագին
հրրամայեց զօրքերը գան:
Հրրամայեց՝ զօրքերն եկան.
— կեցցէ մեր տէր, մեր թագաւոր,
անյաղթ, անմահ, ամենազօր...
«Ապրէ՛ք, ասաւ իշխանը սէգ,
եկէք իսկոյն ու գընացէք.
մանուկ ու ծեր
իմ առիւծներ,
ո՞վ է, տեսէք, վըրէս հաչում

ու իմ ուժը չի ճանաչում:
Ցույց տուէք դուք, որ ոչ մի տեղ
չը կայ ոչ ոք ինձնից ուժեղ...»
Ասաւ. զօրքերն իրենց կարգին
փող փըչեցին, թըմբուկ զարկին,
շըրըխկոցով, գըրընգոցով
ճամբայ ընկան դէպի մեծ ծով:

—

Հասան, տեսան — այ քեզ հրսկայ,
գլուխն էստեղ, ոտներ չը կայ.
գընա՛, գընա՛, թէ որ գըտնես...
Երկար ու մին ծրգւած էսպէս,
հրսկայական քընով քընած:
Էստեղ, էնտեղ դիրքեր բըռնած՝
դէս չոքեցին, դէն պառկեցին,
հա զարկեցին ու զարկեցին:
Տեսան տեղից ժաժ չի գալի,
խըռըմփում է զարհուրելի:
Խռմփոցից ինչ որ խօսում,
մարդիկ իրար ձէն չեն լըսում:
Մօտ գընացին, էլի՛, էլի՛...
Դարձեալ տեղից ժաժ չի գալի:
կամաց կամաց սիրտ առնելով,
գորգոռալով, հարայ տալով,
դուրս թափւեցին թաքուստներից,
ելան վըրէն, դէսից, դէնից,
որը ուսին,
որը քըթին,
որը լանջին,

որն ականջին,
փորի վրրա, միրքի միջում,
ձի են քըշում, նիզակ ճօճում,
զարկում, զարկում,
ձրգում, թըքում,
հայհոյում են էտպէս, էնպէս...

—

Մին էլ հրսկան էն սարի պէս
վրրա նստից, մեծ, ահարկու.
ինչ պատահից — ոչ տեսնես դու:
Հազարներով մարդն ու իր ձին
տակովն եղան, կոտորեցին.
որն էլ գըլխից, քըթից, լանջից,
կամ ուսերից, կամ ականջից
ներքեւ ընկաւ, թէ մարդ, թէ ձի,
նըրա օրն էլ դու իմացի:
Շատ զարմացաւ հըրէշ հրսկան
թէ Տէր Աստուած, արդեօք էսքան
մանըր-մունըր ինչ բաներ են,
որ եկել են թափւել վրրէն:
Տեսաւ, ինչ որ կենդանի կան՝
վազ են տալի թէ ետ գընան.
բուռն առաւ իր բըռնուվը մեծ,
իրար խառնեց, ողջ հաւաքեց,
գըրպանն ածաւ
ու վեր կացաւ,
լընգլընգալէն, իրիկունը,
գընաց հասաւ իրենց տունը:
Տանը իր պէս մեծ, ահագին

Մի մէր ունէր, բարի մի կին:
Գընաց հրսկայ մօրը պատմեց
Թէ իրեն հետ ինչ պատահեց,
ու գըրպանից հանեց բոլոր՝
ահից խելառ ծին-ծիաւոր:
Բարի կինը հէնց որ տեսաւ,
— Ամա՛ն, որդի, վա՛յ ինծ, ասաւ.
ինչ ես անում էդ խեղճերին,
բա չե՞ս տեսնում, թէ քո ձեռին
ոնց են դողում: Աւենք մեծ ես,
մի՞թէ պիտի փոքրին տանջես:
Մեծ թէ փոքրը, ինչ էլ լինի,
ամեն ապրող շունչ կենդանի,
որ ծընւել է արեւի տակ,
էս աշխարհքում միատեսակ,
մինը պակաս, միւսը աւել,
ողջ էլ գիտեն խընդալ, ցաւել:
Չըպարծենայ երբեք ոչ ոք,
Թէ ինքն անյաղթ մի բան է ջոկ.
միշտ ուժեղից ուժեղը կայ,
իսկ ամենից ուժեղը՝ մահ...
Բաց թող, որդիս,
բաց թող՝ գընան,
ապրեն ազատ
ուր կամենան:

Ու հընազանդ մօր խըրատին,
իսկոյն հանեց հրսկայ որդին
իր գըրպանից ծին-ծիաւոր,
իրար խառնած զօրքը բոլոր,
թողեց գընան
ուր կամենան:

Ա. ԱՒՆՈՒ ՎԱՆՔԸ

Ազգային աւանդութիւն

Լէնկթէմուրն եկաւ, հուրն ու սուրն եկաւ,
Անօրէնն եկաւ, եկա՛ւ ու եկա՛ւ.
Հաւաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,
Փաթաթեց, պատեց, ինչպէս վիշապ-օձ,
Կանգնեց Սեւանայ ափին հովասուն,
Էնտեղ, ուր՝ ուշքը ու միտքն Աստծուն՝
Անհունն է խորհում, մեռնեմ իր զօրքին,
Օհաննայ վանքը ծովի եզերքին:

Էն վանքում, Հայոց ազգին պահապան,
Աղօթք էր անում ծերուկ հայր Օհան.
Աղօթք էր անում իր հոգու համար,
Իր ազգի համար, աշխարհքի համար:

Երբ տեսաւ խաղաղ վանքիցը իրեն
Անօրէն մարդու էս գործն անօրէն,
Խրոխտ ելաւ արդար ծերունու հոգին.
Ձերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դըժգոհ մարդուց ու կեանքից,

Աղօթքը կխաւտ դուրս եկաւ վանքից,
Իջաւ Սեւանայ երեսը կապոյտ,
Ու քըրթմընջալով, միամիտ, անփոյթ,
Էն վէտ-վէտ, ծըփուն ջըրերի վըրայ
Ցամաք ոտներով գընում էր ահա:
Տեսաւ հըրաշքը Լէնկթէմուրն ափից,
Տեսաւ, սասանեց տեղը սարսափից:
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար.
— Ե՛տ արի, ասաւ, ե՛տ արի, արդա՛ր,
Ե՛տ արի, ասաւ, ո՛վ դու Աստծու մարդ:
Ետ եկաւ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին, ջըրերի վըրով,
Ու առաջն ելաւ թաթարը սիրով:
— Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալեւոր,
Գա՞նձ, իշխանութի՞ւն, թէ կեանք փառաւոր...»
— Ջո փառքն ու գանձը հարկաւոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:
Ուզում եմ թողնես՝ գընան ուր կուզեն,
Ու ազատ իրենց կեանքի ձէնն ածեն
Էս լէն աշխարհքում, արեւի տակին . . .»
Ասաւ սուրբ մարդը մեծ աւազակին:
— Ժողովուրդ կ՚ուզե՞ս . . . լա՛ւ, լինի էդպէս:
Էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,
Գընա ինձ համար աղօթք արա, ծե՛ր:»
Ասաւ Լէնկթէմուրն ու տըւաւ պատուէր,
Որ գերի Հայոց ազգը մի թեւից
Էն վանքը մըտնի սուրբի ետեւից,
Ինչքան ժողովուրդ մըտնի էն վանքը,
Ներան է բաշխում էնքանի կեանքը:
Հըրաման արաւ իրեն զօրքերին

Ու բաց թողեցին հայ ազգի գերին:
Մըտնում է գերին, մըտնում մի ծէրից,
Անցել է թիւը հարիւր հազարից,
Չի լըցւում սակայն հասարակ մի վանք . . .
Ապշում է թաթարն—արմա՜նք ու զարմանք:
—Թողէ՛ք, կանչում է իրեն զօրքերին,
Յորձանք է տալի նորից հայ գերին:
Գալիս է գերին, գալիս է նորից,
Անցել է թիւը հազար հազարից,
Չի լըցւում սակայն էն վանքը կըրկին,
Չի կանգնում հայի հոսանքն ահագին:
Երրորդ անգամն է կանչում զօրքերին:
Գալիս է անցնում մընացած գերին:
Անցնում է գերին, անցնում շարէշար,
Էլ մարդ չըմնաց, գընա՛ց ինչ որ կար,
Դատարկ է սակայն վանքը տակաւին . . .
Թէմուր զարհուրած դառնում է չորս դին.
— Չարթո՞ւն եմ արդեօք, թէ երազ տեսայ . . .
Յայտնեցէք ինձ շո՛ւտ, ի՞նչ հըրաշք է սա . . . »
Գընում է տեսնում մարդիկն իր ղըրկած—
Մեր հայր Օհանը՝ աղօթքի չոքած,
Աչքերն երկրնքին, միրուքն արցունքոտ.
Ով որ հայ ազգից մըտել է իր մօտ,
Իր սուրբ աղօթքով, կամքով Վերինի,
Փոխել է իսկոյն, դարձրել աղաւնի,
Բաց պատուհանից թողել ամենքին,
Թըռցրել դէպ իրենց լեռները կըրկին,
Ու հիմի վանքում էլ չըկայ ոչոք,
Ինքն է աղօթում մենակ, ծընկաչոք:

1912

Ա Ղ Ջ Ի Կ Ը Ս Ի Ր Ե Ց

Արեւելեան աւանդութիւն

Հին արեւելքում, մի հին քաղաքում
Ժուկով մի ջահել աղջիկ էր ծաղկում:
Հարուստ էր հէրը զալում սիրունի,
Անհուն գանձի տէր ու շատ անւանի:
Բայց սիրոյ համար խեղճ ու շէն չըկան.
Մի աղքատ տըղայ սիրեց աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրեց կաթոգին
Ու ուզում էին լինեն մարդ [redacted] ու կին.
— Կայ թէ չը կայ,
Նա է, որ նա . . .

— Չէ՛, որ չէ՛, կանչեց ծնողը փարթամ,
Իմ աղջիկն, ասաւ, սեւ հողին կըտամ
Ու մերկ աղքատին աղջիկ չեմ տալ ես:
Ասաւ ու կանգնեց էն լեռ քարի պէս:
Բայց սիրոյ համար քար ու սար չըկան.
Սիրում էր գըժւած տըղէն աղջըկան,

Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին
Եւ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կայ թէ չըկայ,
Նա է, որ նա . . .

Սաստիկ բարկացաւ հարուստն անկոտրում,
Փակեց աղջըկան մեծ աշտարակում
Իր սիրած տըղից ու կեանքից հեռու,
— Թող էապէս, ասաւ, մոռնան իրարու:
Բայց սիրոյ համար փակ ու բանտ չըկան.
Սիրում էր անվերջ տըղէն աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին
Եւ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կայ թէ չըկայ
Նա է, որ նա . . .

Տեսաւ իր ձեռքին ոչ մի ճար չըկար,
Ցամառ հարուստը հերսից խելագար,
Իրեն աննըման զաւակը միջին,
Կըրակի մատնեց աշտարակն էն հին :
Բայց սէրը որտեղ հրդեհ է ծըգել
Ի՞նչ անի էնտեղ հըրդեհը մէկէլ:
Ու թէժ բոցերի սաստկութեան միջում
Աղջիկն էրւելով ճըչում էր կանչում.
— Կայ թէ չըկայ
Նա է, որ նա . . .

Ու էրւեց հիմքից աշտարակն ահեղ,
Էրւեց նըրա հետ էն սիրուն անմեղ,

Հող-մոխիր դարձաւ: Իր սիրտը մենակ
Չէրւեց հրրաշքով ու սառ մոխրի տակ
Մընաց կենդանի . . . էն մոխրի վրրէն
Արտասուք թափեց սիրահար տրղէն
Ու կորա՛ւ, գնաց, հեռո՛ւ, շատ հեռու,
Իր օրը լալու, նրրան փընտռելու,
Մենա՛կ, օտա՛ր,
Անմխիթար :

Ո՛վ քընքոյշ գաղտնիք, ո՛վ սիրուն հրրաշք.
Էրւած աղջրկայ սիրտը մոխրի տակ,
Իրեն մոխրի տակ կենդանի էր դեռ—
Ոչ ոք չրգիտէր, ոչ ոք չրգիտէր . . .
Ժամանակ անցաւ էս տրխուր դէպքից,
Արցունքով թրրջած էն մոխրի տակից,
Էն միշտ կենդանի սրրտից թրրթրռուն
Բուսաւ խաշխաշի ծաղիկը սիրուն,
Կարմի՛ր, թեթե՛ւ,
Բայց . . . սիրտը սեւ . . .

Սրգաւոր տրղան յուսահատ, թրշւառ
Շրրջում էր մոլոր աշխարհից աշխարհ,
Չէր գրտնում սակայն կեանքում էլ նրրան.
Ամեն տեղ վիշտն էր սիրածի մահւան,
Որ յար, թէ՛ զարթուն թէ քընի միջում,
Տանջում էր նրրան, անդադար տանջում:
Բայց սիրոյ համար վերջ ու մահ չրկան.
Տրղի հառաչքը հասաւ աղջրկան
Անմահ կեանքում
Էն աշխարհում:

Հասաւ, ու շարժւած, կարօտ, կարեկից,
Թրռաւ աղջիկը անմեռ աշխարհքից,
Սիրով ու բոյրով, թարմ, անուշահոտ,
Երազով եկաւ սիրած տըղի մօտ:
— Լըսի՛ր, իմ սրգուր, լըսի՛ր ինձ, ասաւ.
Իմ մոխրի տակից մի ծաղիկ բուսաւ
Ու էն ծաղկի մէջ իմ սիրտն է, որ կայ,
կարօտ, խենթ սիրտը ջահել աղջըկայ--
Լիքը սիրով
Երազներով . . .

Ուժ ունի իր մէջ նա կախարդական
Ու քաղցր արբեցում էնքան ու էնքան . . .
Քամիր ու խըմիր ուժը էն ծաղկի.
Նա քեզ կը փըրկի, նա քեզ կը փըրկի . . .
Մոռացնել կը տայ իմ հուր սէրն ու ինձ,
Հեռու կը տանի էդ կոպիտ կեանքից,
Ու կապրես անվիշտ եւ զըւարթ հոգով,
կը խընդաս ընդմիշտ անթառամ կեանքով
Ազատ հեռուում,
Երազներում . . .

Ո՛վ սիրուն հըրաշք, ո՛վ քընքոյշ գաղտնիք:
Տըղան էն օրից դարձաւ երջանիկ:
Հարբած նւիրական էն ծաղկի ուժով
Միշտ նոր կարօտով ու նոր աշխուժով,
Իրեն երբեմնի վիշտը մոռացած,
Էս կոշտ ու կոպիտ կեանքից հեռացած,
Ապրում էր ուրախ, ճոխ վայելքներով,
Լէ՛ն ու լի սրտով, անկաշկանդ սիրով
Ազատ հեռո՛ւմ —
Երազներում . . .

ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ՉԱՐՉԻՆ

(Ջուղայի գաղթից)

— Հէյ, լաւ մանրո՛ւք,
Ասեղ, յօրո՛ւնք,
Մատնի՛ք, մարջա՛ն,
Ապարանջա՛ն...
Հա՛ւ, ծո՛ւ քերէք,
Առէ՛ք, տարէ՛ք:
Խունջիկ-մունջիկ
Հարսն ու աղջի՛կ,
Էժա՛ն կը տամ,
Լա՛ւը կը տամ...»
Էսպէս կանչելով՝ փողոցից փողոց,
Իբրեւ թէ չարչի մի թափառական,
Չարչու կերպ մըտած, ինչպէս վիշապօձ,
Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան:
— Հէյ, ո՞վ կուզի թել ու ասե՛ղ,
Դուրս եկէ՛ք, դո՛ւրս, ինձ մո՛տ, էստե՛ղ...
— Չարչի ախպէ՛ր, չարչի ախպէ՛ր,

Ասեղ ունե՞ս, էս կողմը բեր:»
Կանչեց մի կին, հայ գաղթական,
Ու մօտ գնաց չարչին կնկան:
— Օ՛, ինչ ասեղ, իսկն օձի քիստ...
Թօփը մի հաց...
— Վո՛ւյ, թանկ է խիստ...
— Է՛, մի՛ խօսիր, քուրի՛կ, էդպէս,
Շահի կեանքը թէ կը սիրես:
— Ամա՛ն, հողեմ գլուխը Շահի,
Աստուած Շահից հեռու պահի.
Արեւդ ապրի, չարչի ախպէր,
Էդ անունը բերան մի՛ բեր:
— Վա՛հ, էսքան էլ չար լինի մա՛րդ...
Ի՞նչ է արել Շահը ձեզ վատ:
Գազան թուրքի սըրից փըրկել,
Զոր Զուղայի քարից պոկել՝
Բերել է ձեզ ազատ Փարիա,
Աչքն էլ քաղցըր միշտ ձեզ վըրայ...»
— Օ՛ֆ, հերիք է, չարչի ախպէ՛ր,
Մի՛ խօսեցնիր ինձ դրանից:
Երնէկ դրա ոտը կոտրէր,
Չըգար հանէր մեզ մեր տանից:
Եկաւ վարար հեղեղի պէս,
Չարկեց մեր շէն, մեր լի Զուղան,
Ոչ Աստըծուն նայեց, ոչ մեզ,
Սըրբեց բերաւ ողջ տեղահան:
Թող արինք փակ մեր տուն ու ժամ,
Բանալիներն Աբազն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ

Ետ նայեցինք ու կանչեցինք,
—«Աստուածածին Վերին Կաթան,
Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան.
Ուր որ գընանք մեր վաթանից՝
Մեզ դարձըրու գերութիւնից»:
Աղաչեցինք-աղերսելով,
Ետ շուռ եկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հըրով, սըրով՝
Ծով Արագի ափը հասանք:
Արագը ծո՛վ, Արագն ելմա՛ն.
Դուրս է եկել իր ափերից:
«Անցէ՛ք», եկաւ մեզ հրաման.
Շահն է հրաման տալիս վերից...
Ետեւը սո՛ւր, առաջը ջո՛ւր,
Սո՛ւգ, վայնասո՛ւն, իրարանցո՛ւմ,
Բառաչում են մեծ ու պ. ճ :ր.
Իրար գըրկած՝ գետը լըցւում...
Էն սեւ օրը, որ մենք տեսանք,
Քո թշնամին թող չըտեսնի...
Ախ, ե՞րբ պիտի մին էլ տեսնենք՝
Մեր անէծքը երկինք հասնի...»
Ու գալիս են չարչու գըլխին
Կիսւում պանդուխտ, գերի Հայեր.
«Անէ՛ծք Շահին, իրեն գահին»,
Անիծում են ե կինքն ի վեր:
Շուռ են գալիս իրենց բընում
Չարչու աչքերն ըսպառնալի,
Չեռն ու ոտը դող են լինում,
Ու սեւակնած հարց է տալի:

— Շահի առջեւ հապա էնօր
Գոռում էիք միաբերան,
Թէ ապրում էք դուք բախտաւոր
Ու օրհնում էք Թախան ու Իրան...»
— Սուտ էր, ախպէր: Դու մեզնից մէկն,
Ի՞նչ թագցընենք մենք քեզանից,
Բայց մեր սիրտը ոնց չըծածկենք
Էն մարդակեր չար գազանից:
Սուտ էր . . . Ու միշտ, քանի որ կայ
Շահ ու գերի, ըսորուկ ու տէր,
Չի լինելու երկրի վրայ
Ոչ շիտակ խօսք, ոչ կեանք, ոչ սէր...»
Մռընչաց չարչին, աբէն շրպռտեց,
Դուրս եկաւ տակից Շահ-Աբասն ահեղ,
Նաջաղը ցոլաց, իջաւ շեշտակի,
Գերի ծերունին փրռւեց տեղնուտեղ:
Փրռւեց... Ու միշտ, քանի որ կայ
Շահ ու գերի, ըսորուկ ու տէր,
Չի լինելու երկրի վրայ
Ոչ շիտակ խօսք, ոչ կեանք, ոչ սէր:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՐԳԵՐ

Գ.ԱՐՆԱՆ ԱՌԱՒՕՏ

Բարի լուսի զանգեր զարկին
Ջրնգզընգալէն անո՛ւշ, անո՛ւշ,
Լուսը բացւեց մեր աշխարհքին
Ճրղճրղալէն անուշ, անուշ:

Հովտում առուն խոխոջում է
Գլգլալէն անուշ, անուշ,
Քամին բարակ շընկշընկում է
Ջլգլալէն անուշ, անուշ:

Կռունկն եկաւ երամ կապած
Կռկռալէն անուշ, անուշ,
Կաքաւ քարին տաղ է կարդում,
Կղկղալէն անուշ, անուշ:

Հարսն ու աղջիկ հանդերն ելան
Շորորալէն անուշ, անուշ,
Ծաղկանց բուրմունքն անմահական
Սըլսըլալէն անուշ, անուշ:

ԳԱՐՈՒՆ ՏԱՐԻ

Վա՛րի, գութան ջան, վա՛րի,
Շատ է դըժար էս տարի:
Պապին տարան քեօխւի դուռ,
Հարկ են ուզում.—Տո՛ւր հա, տուր...
—Կըտամ, քեօխւա, փող չունեմ:
—Ջունե՞ս, Շէկօն կը տանեմ:
—Աման, քեօխւա, քեզ ղուրբան
Շէկօն գընայ թող գութան,
Գարնան անենք վար ու ցանք,
Կալը կասենք, բերենք տանք:
Գարունը ետ դառաւ էլ,
Գութան լըծւեց — հօրօւէլ...
Վա՛րի, գաւթան ջան, վա՛րի,
Դատենք ցորեն ու գարի,
Տանենք ածենք քեօխւի փէշ,
Որ չը տանի մեր գոմէշ:

Ճ Ա Խ Ա Ր Ա Կ

Մանի՛ մանի՛, ճախարակ,
Ներստենք, բանի ճախարակ,
Անտէրին տէր, ճախարակ,
Որբերին հէր, ճախարակ:

Լուսնեակը դուրս է եկել,
Աչքերիս լուս է եկել:
Լուսնի լուսով մանեմ ես,
Սիպտակ ոստեր անեմ ես,
Աղքատ օրով ու լացով
Որբեր պահեմ մանածով:

Մանի՛, մանի՛, ճախարակ,
Ներստենք բանի, ճախարակ,
Անտէրին տէր, ճախարակ,
Որբերին հէր, ճախարակ:

Ա Գ Ւ Է Ս

Աղէսն եկաւ բարձրը սարից,
Հարցմունք արաւ լիքը թառից.
Մեծ խորոզ է հարկաւոր ինձ.
Ֆաղցած աղուէսն, ագին ծաղիկ:

Աղէսն հագել քուրքը դեղին.
Պըտուտ կուգայ շուրջը գեղին.
Ջուր կըտրըւեց տատիս լեղին.
Դեղին աղէսն, ագին ծաղիկ:

Աղէսն ասաւ պառաւ տատին,
«Մըտիկ չեմ տայ ձեռիդ փէտին,
Կարօտել եմ Թըմփիլիկ ճուտին».
Անվախ աղէսն, ագին ծաղիկ:

Աղէսն եկել, նստել դէզին,
Երկար ագին ծըռել վըզին,
Աչք է ծըգել մեր խորոզին...
Էն գող աղէսն, ագին ծաղիկ:

.

Մին էլ կանչեց տատըս պառաւ,
Ամա՛ն, հասէ՛ք. տարա՛ւ, կերա՛ւ...
Գըլխիս էս ինչ փորձանք բերաւ
Անտէր աղէսն, ագին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմիր խորոզ,
Ման կուգայիր գոռոզ, գոռոզ.
Փետուրդ արաւ ողջ դար ու փոս
Էն չար աղէսն, ագին ծաղիկ:

Աղէ՛ս, աղէ՛ս, փոքրիկ գազան,
Ոտներըդ կարճ ու խիստ վազան,
Շրներն ամեն քեզ չը հասան,
Ճարպիկ աղէս, ագիդ ծաղիկ:

ՍՈԽԱԿԻ ՎԻՇՏԸ

Մի օր տեսաւ օտար թըռչուն
Սոխակ կուլար կուց-կուց արիւն.
—Ինչո՞ւ, ասաւ, սոխակ սիրուն,
Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արիւն.
Ինչու, մինչ ե՞րբ դու երերուն
Տըխուր կուլաս չոր թըփերուն:
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,
Էդ ճըռըռան քո երգերուն,
Հապա ինչո՞ւ դու օրն ի բուն,
Էս լուս ու մութ առաւօտուն,
Էս շատ անուշ զով հովերուն
Ախ ու վախով կուլաս արիւն:
—Ի՞նչ կը խօսես, օտար թըռչուն,
Խենթ ու խելառ դու ցընորուն.
Ձըմեռ նըստեց մեր սարերուն
Կըտրեց ջըրիկ աղբիւրներուն,

Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
Կըտրեց ձէնիկ իմ ծագերուն.
Ինչպէս չըլամ կուց-կուց արիւն:
Էլի ասաւ օտար թըռչուն,
—Հէրիք դու լաս. սոխակ սիրուն,
Հերիք դու լաս կուց-կուց արիւն.
Էլի կուգայ քեզ նոր գարուն,
Արեւ ծագէ էս վայրերուն,
Հալին ձիւներ մեր սարերուն,
Բացւին ջրրեր աղբիւրներուն,
Ու շուրջ առած քո ծագերուն
Բարեւ կուտաս ծաղիկներուն:

ԿԱԳԱՒՒ ԳՈՎԸԸ

Արեւ բացւեց թուխ ամպերէն,
կաքաւ թըռաւ կանանչ սարէն
կանանչ սարէն, սարի ծէրէն
Բարեւ բերաւ ծաղիկներէն։
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքաւի՛կ։

Ջու բուն հիւսած ծաղիկներով
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Ջու տեղ լըցւած ցօղ ու շաղով,
Ջընես, կելնես երգ ու տաղով։
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքաւի՛կ։

Քու քեզ փափուկ ու խատուտիկ,
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր կարմիր տոտիկներով
Կը շօրօրաս ճուտիկներով:
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքաւի՛կ:

Երբ կը կանգնես մամուռ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին,
Սարեր ձորեր զըւարթ կանես,
Դարդի ծովէն սիրտ կը հանես:
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքաւի՛կ:

ԿԱՉԱՒԻ ՕՂԲԸ

Ա.

Կըտուցը լիքը արին
կաքաւը նըստել քարին,
ձէն է տալիս, կըղկըղում,
գանգատ անում հաւքերին.
ա՛յ քուրիկներ,
ա՛յ հաւքեր:

Բուն շինեցի էս սարում,
ձագ հանեցի աննըման.
իջաւ խաղայ մարգերում,
եկան կալան ու տարան,
ա՛յ քուրիկնե՛ր,
ա՛յ հաւքե՛ր:

Էն կարկաչուն վըզիկը
սուր դանակով զարկեցին.
Էն կարմըրիկ կըտուցը
հուր կըրակին ծըգեցին,
ա՛յ քուրիկնե՛ր,
ա՛յ հաւքե՛ր:

Էն մանրաքայլ տոտերը
կըտրատեցին ծունկն ի վար,
Էն խատուտիկ փետուրը
որն արին ծոր, որը սար,
ա՛յ քուրիկնե՛ր,
ա՛յ հաւքե՛ր:

Էն, որ սարերն էր հասել,
քամին եկաւ գում արաւ,
Էն, որ ծորերն էր անցել,
հեղեղն եկաւ ու տարաւ,
ա՛յ քուրիկնե՛ր,
ա՛յ հաւքե՛ր:

Բ.

Էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ էն բընում.
հանգիստ չունեմ, դադար չունեմ էն բընում:

Ջօրը մենակ՝ չեմ դիմանում էն բընում,
գիշերն անտակ՝ չի լուսանում էն բընում.
անցած օրերն եկել նորից էն բընում.
գէլ են դառել, ուտում են ինձ էն բընում:
Էլ չի մընում իմ սըրտիկը էն բընում,
ցաւով լիքը, լացով լիքը էն բընում:

Գ.

— Սեւ կաքաւիկ, ո՞ւր պիտի դու նըստես հիմա:
— Ջորուկ բարտի ծառի վրա:
— Սեւ կաքաւիկ, թէ որ նըրա տէրը գայ՝ ո՞ւր:
— Լացող ուռու ճիւղքին տըխուր:
— Սեւ կաքաւիկ, էն տեղից էլ քշեն որ քե՞զ:
— Կըրակ կըլնեմ, կէրեմ ինձ ես...

Դ.

Վա՛յ կաքաւիկ,
սեւ կաքաւիկ,
չալիկ-մալիկ
սիրուն հաւիկ:

Վա՛յ քո ճուտին,
էն խորոտին,

վա՛յ սրգաւոր
իր մօր սրտին:

Էլ չես կարդում
հանդ ու արտում,
մեր սարերից
կորար տըրտում,

Վա՛յ կաքաւիկ,
սեւ կաքաւիկ,
վա՛յ իմ կորած
սիրուն հաւիկ:

Ա Ր Օ Դ

Ա.

Մեր գիւղն էն է, որ հրպարտ,
Լեռների մէջ միգապատ,
Խոր ձորերի քարափին
Ջեռը տրւած ճակատին
Միտք է անում տրխրադէմ.
Ի՛նչ է ուզում՝ չը գիտեմ...
Պաս չենք էնտեղ մենք ուտում,
Ու ջերմեռանդ աղօթում,
Ժամ ենք գնում ամեն օր.
Բայց միշտ ցաւեր նորանոր,
Միշտ մի աղէտ, մի վրնաս
Գալիս են մեզ անպակաս:
Ահա պատմեմ ձեզ մի դէպք,
Մի պատմութիւն, որ երբեք
Յիշատակով տրխրալի
Սըրտիս հանգիստ չի տալի:

Բ.

Մեր գիւղից վեր մինչ էսօր
Կայ ուռենի մի սրգուր:
Մեծ անտառից նա զատուած,
Մարդու կացնից ազատուած՝
Կանգնած է դեռ ու շոգին
Հով է տալի մըշակին:
Գիժ, լեռնային մի վըտակ
Խոխոջում է նըրա տակ,
Խաղում կանաչ մարգերին:
Էն առաւակում կէս օրին,
Երբոր շոգից նեղանում,
Գընում էինք լողանում:
Տըկլոր, աշխոյժ խըմբակով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում էինք, վազվըզում
Գոյն գոյն մանրիկ աւազում:
Կամ հետեւում հեւ ի հեւ
Թիթեռնիկին ոսկեթեւ,
Ու միշտ յոգնած ժամանակ,
Էն մենաւոր ծառի տակ
Նըստում տրխուր մի քարի,
Գերեզմանին Մարօի...

Մարօ՛, անբա՛խտ, վաղամե՛ռ,
Դու մանկութեան իմ ընկեր,
Ո՛րքան ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՛լ...

Գ.

Ժիր էր Մարօն, դուրեկան,
Նոր էր ինկը տարեկան,
Նըրանց տունը երբ մի օր
Եկան երկու եկաւոր:
Ու Մարօի մայրիկը
Երբոր բերաւ, դրաւ լիքը
Խոնչէն նըրանց առաջին,
— Շնորհակալ ենք մենք, ասին.
Տաշտներըդ լի հաց լինի
Դուռներըդ միշտ բաց լինի.
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տըւէք մեզ ձեր տանից...»
Էն ժամանակ Մարօի
Հայրիկն առաւ արաղի
Լիքը բաժակն ու ասաց,
— Կամքըդ լինի, Տէր Աստուած...»
Նըշանեցին Մարօին,
Տըւին չոբան կարօին:

Դ.

Չոբան Կարօն սարերի
Մի հովիւ էր վիթխարի.
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարգանդ էր գալիս.
Բայց զոքանչը անսահման
Սիրում, փարում էր նըրան:

Շատ էր սիրում եւ Մարօն,
— Լաւն է, ասում էր, կարօն,
Բերում է ինձ ամեն օր
Կանիւետ, չամիչ, ու խընձոր...»

Ե.

Մին էլ կարօն աղմուկով
Եկաւ զուռնով թմբուկով.
Ու Մարօին զուգեցին,
Երեսին քող ձըքեցին,
Հինա դըրին ձեռքերը...
Եկաւ խաչով տէրտէրը,
Տարաւ ժամում կանգնեցրեց.
— Տէ՞ր ես, որդեա՛կ, հարցըրեց:
— Տէր եմ, ասաւ մեր Կարօն,
Լուռ կանգնած էր միշտ Մարօն...:
Հայրն էլ եկաւ ու ծէսին
Էսպէս օրհնեց իր փեսին.
— Ջաղացիդ միշտ հերթ լինի
Մէջքըդ ամուր բերդ լինի...»
Իսկ երբ հնչեց «տարան հա՜»-ն,
Ներքան փեսի տուն տարան:
Պըսակեցին Մարօին,
Տըւին չոբան Կարօին:

Զ.

Թէ գըրբացի չար ջանքով,

Գիր ու կապով, բրժժանքով
Մանուկ սիրտը կըտրեցին,
Կամ թէ նըրա հանդերձին
Էն անհոգի չար ջադուն
Քըսեց գիլի ճըրագուն...
Էդ չիմացաւ ոչ ոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարօն ատեց իր մարդուն.
Փախաւ, եկաւ ետ հօր տուն:
Եկաւ լացեց նա վըշտոտ.
— Ես չեմ գնալ նըրա մօտ.
Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինեմ կին...»

Է.

Հայրիկն էնժամ բարկացաւ,
Ծեծեց նըրան ու ասաւ.
— Դուրս իմ տանից, սեւերե՛ս,
Ետ չը նայես դէպի մեզ,
Ոտ չը դնես էլ տունս,
Մըրոտեցիր անունս...»
Լալով, ծածկած իր դէմքը,
Թողեց Մարօն հօր շէմքը:

Ը.

Ու հալածւած իր հօրից,
Փախած չոբան կարօից.

Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով:
Կուչ էր գալիս խրճուկի
Օջաղի շուրջ օտարի
Կամ թափառում մէն մենակ
Մեր հանդերում շարունակ:

Բ.

Շատ ամիսներ անց կացան...
Դիմաց սարից մի չոբան
Ձէն էր տալիս մի օր մեզ,
Թէ՝ իմացէ՛ք, որ էսպէս
Կարմիր շորով մի խիզան
Ընկաւ ձորը, մի կածան...:
Դուրս թափուեցինք մենք գիւղից,
Հեռու կանգնած, երկիւղից,
Տեսանք, ահեղ էն ձորում
Ոնց էր լալիս ու գոռում,
Մարօի հայրն ալեւոր,
Մայրը ճըչում սրգաւոր:
Շատ լաց եղաւ եւ կարօն...
Մեռաւ, գընաց մեր Մարօն

Ժ.

Սակայն անբախտ նըրա դին
Պապի կողքին չը դըրին:
Գիւղից հեռու մինչ էսօր

Կայ ուռենի մի սրգուր:
Էն մենաւոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Առանց ժամ ու պատարագ
Մէջը դըրին Մարօին,
Էն սեւ քարն էլ տաշեցին,
Բերին վըրէն քաշեցին:

ԺԱ.

Շատ եմ տեսել, երբ սրգուր
Մայրը մենակ, սեւաշոր,
Կորանալով էն քարին
Ձէն էր տալիս Մարօին...
— «Ո՞վ քեզ ծեծեց, Մարօ ջան,
Ո՞վ անիծեց, Մարօ ջան,
Ո՞ւր փախար դու, Մարօ ջան,
Ծուն արի՛, տո՛ւն, Մարօ ջան,
Ախո՞ր ես քընել, Մարօ ջա՛ն,
Չես զարթնում էլ, Մարօ ջան...»
Կորանալով էն քարին
Ձէն էր տալիս Մարօին.
Խունկ էր ծըխում, մոմ վառում,
Որ գիշերուան խաւարում
Փայլփլում էր մեն մենակ:
Հեռւից երկար ժամանակ:

1887

ԼՕՌԵՑԻ ՍԱՂՕՆ

Ա.

Էն Լօռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նօթերը կիտած՝
Դէմու դէմ կանգնած, յամառ ու անթարթ
Հայեացքով իրար նայում են հանդարտ:

Ներքանց ոտքերում՝ գազազած գալի՝
Գալարւում է գիժ Դեւ-Բեդը մոլի,
Խելագար թրռչում քարերի գլխով,
Փրփուր է թրքում անզուսպ երախով,
Թրքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
—Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ . . .

Մութ անձաւներից, հազար ձեւերով,
Քաջքերն անհանգիստ՝ հրտպիտ ձայներով

Դեւի հառաչքին արծագանգ տալի,
Ծաղրում են նըրա գոռոցն ահռելի
Ու կըրկնում գիժ-գիժ.
— Վա՜շ-վի՜շշ, վա՜շ-վի՜շշ...

Գիշերը լուսնի երկչոտ շողերը
Հէնց որ մըտնում են էն խաւար ծորը՝
Ալիքների հետ խաղում դողալով,
Անյայտ ու մըռայլ մի կեանքի գալով
Ոգի է առնում ամեն բան այնտեղ,
Շրնչում է, ապրում եւ մութն եւ ահեղ:

Էս տախտի վըրայ աղօթում մի վանք,
Էն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպէս զարհուրանք,
Բուի կըռինչն է տարածւում մերթ-մերթ,
Իսկ քարի գըլխից, լուռ մարդու նըման,
Նայում է ծորին մի հին խաչարձան:

Բ.

Էն ծորի միջին ահա մի տընակ:
Էնտեղ այս գիշեր Սաքօն է մենակ:
Հովիւ է Սաքօն, ունի մի ընկեր.
Սատանի նըման՝ նա էլ այս գիշեր
Գընացել է տուն: Սարերի չոբա՜ն—
Գիւղիցը հեռու, հազար ու մի բան.
Ով գիտի՝ պարկում շընալի՞ր չըկար,

Աղ էր հարկաւոր ոչխարի համար,
Ուզեց զոքանչի ծըւածն՞ղ ուտել,
Թէ նըշանածին շատ էր կարօտել—
Ոչխարը թողել՝ գընացել է տուն:
Այն ինչ՝ համկալը հէնց առաւօտը
Դէպի սարերը քըշեց իր հօտը:
Ու Սաքօն անքուն,
Թաց տըրեխները հանել է, քերել,
Գուլպան բուխարու վըրա կախ արել
Ու թինկը տըւել,
Մեն-մենակ թըթւել:

գ.

Թէկուզ եւ մենակ լինի փարախում,
Աժդահա Սաքօն ընչի՞ց է վախում:
Հապա մի նայիր հըսկայ հասակին,
Ո՞նց է մեկնըւել: Ասես ահագին
Կաղնըքի լինի անտառում ընկած:
Իսկ եթէ տեղից վեր կացաւ յանկարծ,
Գլուխը մեխած մահակը ձեռին՝
Չէն արաւ, կանչեց զալում շընորհին
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպէս սար,
Էնժամ կիմանաս, թէ ընչի համար
Թէ գող, թէ գազան, հէնց դատարկ վախից,
Հեռու են փախչում նըրա փարախից:

Ու իրեն նըման իրեն ընկերները
Ապրում են սիրով երեխուց ի վեր:

Աստծու գիշերը գալիս են հանդէն,
Փէտ են հաւաքում, վառում են օդէն,
Ճրհուն ու պըկուն խառնում են իրար,
Ածում են, խաղում, խընդում միալար...

Դ.

Բայց խուլ ու խաւար օդում էս գիշեր
Մենակ է Սաքօն ու չունի ընկեր:
Բուխարու կողքին լուռ թինկը տըւած
Մըտածում է նա... ու մին էլ, յանկարծ,
Որտեղից որտեղ, էն ձորի միջին,
Միտն եկան տատի զըրոյցները հին...
Միտն եկան ու մեր Սաքօն ակամայ
Սկսաւ մտածել չարքերի վրա,
Թէ ինչպէս ուրախ խըմբով, միասին,
Ծուռը ոտներով, գիշերւան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած,
Երեւում են միշտ միայնակ մարդկանց...
Կամ ինչպէս քաջքերն այրերի մըթնից,
Երբ նայում է մարդ քարափի գըլխից
Կամ թէ ուշացած անցում է ձորով
Խաբում են, կանչում ծանօթ ձայներով,
Ու մարդկանց նըման խընճոյք են սարքում,
Ջուռնայ են ածում, թըմբուկ են զարկում...
Ու տատի խօսքերն անցեալի հեռուից
Ուրւածայն, երկչոտ հընչեցին նորից.

— Կասեն՝ Սաքօ՛, մեզ մօտ արի,

Արի մեզ մօտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Սիրուն-ջահել հարսն-աղջիկ:

Ինձ մօտ արի՝ ծըւածեղ անեմ...
Ինձ մօտ արի՝ բըլիթ տամ...
Ես քու հօքիրն... Ես քու նանն եմ...
Ես էլ ազիզ բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մօտ արի.
Էս աղջիկը, տե՛ս, ինչ լաւն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի.
Տարա նի նա՛... Տարա նա նա՛՛...»

Ու խօլ պատկերներ, տրգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքօի դիմաց
Երեւութք եղան, անցնում են կա:ռաց,
Խաւար ու դանդաղ, ըստւերների պէս,
Զար ժըպիտներով ժանտ ու սեւերես...

Ե.

Սըրընթաց պախրա թէ գայլ գիշատիչ
Շեշտակի անցաւ փարախի մօտով,
Այծեա՞մը յանկարծ մօտակայ ժայռից
Անդունդը մի քար գլորեց ուռով,
Գիշերւան հովից տերե՞ւն էր դողում,

Երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Թէ ոչխարների թոյլ մընչոցն էր այն,—
Սաքօին թըւաց, թէ մի ոտնաձայն
Եկաւ ու կանգնեց փարախի վըրա,
Կանգնեց ու լըռեց...
Ականջ դըրաւ նա...

Ջ.

— Ո՞վ հող թափեց բուխուրակից...
Էն ո՞վ նայեց լիսածակից...
Էս ո՞վ կըտրից անցաւ թևթեւ,
Շունչ է քաշում դըրան ետեւ...
Ո՞վ ես էհէյ... ինչ ես անում.
Ինչ ես լըռել, ձէն չես հանում...»

Պատասխան չըկայ. լըռութեան միջում
Զորագետն է միայն մըրափած վըշշում:
— Հա՛, իմացայ, Գէւօն կըլնի.
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...
Վախեցնում է... հա՛, հա՛, հա՛, հա՛...
— Գէւօ՛...»

Ձէն-ծուն չըկայ:

Միայն ահաւոր լըռութեան միջում
Զորագետն է խուլ, մըրափած վըշշում:
Եւ ո՞վ կըլինի զարթուն այս ժամին.
Քընած է աշխարհ, քընած է բամին.

Անքուն չարքերը չեն միայն քընած,
Վըխտում են ուրախ՝ ծորերը բըռնած,
Խաւարում կազմած դիւական հանդէս
Վազում, վազվըզում ըստուերների պէս,
Մինչեւ որ մենակ մի մարդ կը գըտնեն,
Ճիչով-քըրքիչով... փարախը մըտնեն...

Աչքերը հանգչող կըրակին յառած՝
Ծանըր է շընչում հովիւն ահառած,
Ու վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու:

— Չէ՛, քամին էր էն... էն գիլի շըւաք...
Էն աստղեր էին աչքերի տեղակ,
Որ լիսածակից ներս էին ընկել...»
Ուզում է վերեւ մըտիկ տայ մէկ էլ՝
Ու սիրտ չի անում:
Ականջ է դընում...
Գալիս են կըրկին թեթեւ, կամացուկ
Դրսան ետեւից փըսփըսում ծածուկ.
— Էստեղ է նա,
Հա՛, հա՛, հա՛, հա՛.
Տե՛ս-տե՛ս, տե՛ս-տե՛ս.
Նայիր էսպէ՛ս,
Մըտիկ արա՛,
Հա՛, հա՛, հա՛, հա՛...»
Սաքօն շարժւեց փըշաքաղած,
Դէպի շէմքը նայեց, դողաց...
Շըրը՛խկ... յանկարծ դուռը բացւեց,
Թուրք կանանցով տունը լըցւեց,

Տունը լըցւեց թուրք կանանցով,
ճիչ-գոռոցով, հըրհըռոցով...

է.

Ահռելի ծոր է: Մի կըտոր լուսին
Նայում է գաղտուկ, թագչում ամպերում:
Էն մութ, ահաւոր գիշերւայ կիսին
Վազում է Սաքօն լօռու ծորերում:
Ձարքերը ընկած նըրա ետեւից,
Հերարծակ խըմբով, ճիչ-աղաղակով՝
Հասնում են մէջքին, բըռնում են թեւից,
Ձարկում են, զարկո՛ւմ օձի մըտրակով...
Ֆաջքերն էլ այրից զուռնա — դըհօլով
Ճըչում են, կանչում ծանր ձայներով.

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մօտ արի,
Արի մեզ մօտ հարսանիք,
Տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք գալի՝
Սիրո՛ւն, ջահել հարսն-աղջիկ:

— Ինձ մօտ արի՝ ծըւածեղ անեմ...
Ինձ մօտ արի՝ բըլիթ տամ..,
Ես քու հ[illegible]քրն... ես քու նանն եմ
Ես էլ ազիզ բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մօտ արի.
Էս աղջիկը, տե՛ս ինչ լաւն ա...

Տե՛ս, ինչ ուրախ պար են՝ գալի.
Տարա նի նա՛... տարա՛ նա նա՛...

Այն ինչ Դեբեդից ալքեր են թըռչում,
Ալիքներն ելնում, ալիքներն ուռչում,
Խաւարի միջին ծըփում են կայտառ՝
— Բըռնեցէ՛ք, փախա՛ւ Սաքօն խելագար...»

ԴԷՊԻ ԱՆՀՈՒՆ

I

Հընչում էր փըրփրուն վըտակն արծաթի,
Աքեւը խաղում պայծառ կապոյտում...
Առանց հոգսերի ու առանց վըշտի
Խաղում էինք մենք էն երազ հովտում,
Ու թըննդում էր հեշտ ծիծաղը ծաղրող.
— Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող...

Չէի կարենում բըռնեմ ես նըրան:
Ձերմակին տալով ծառերի ետեւ
Ծածկըւում էր նա աչքէս անգուման,
Կըրկին յայտնըւում ճապուկ ու թեթեւ,
Ու թըննդում էր միշտ ծիծաղը ծաղրող.
— Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող...

Մին էլ ես ճարպիկ մի շարժում արի,
Բըռնեցի նըրան: Ցանկարծ նա ճըչաց,

Ձեռքումըս դառաւ ճերմակ աղաւնի,
Ու թեւին արաւ, ու թըռա՛ւ, գընա՛ց.
Գընա՛ց ճախրելով էն երազ հովտում,
Սուզւեց,չըքացաւ պայծառ կապոյտում...

II

Վեր թըռայ քընից, դուրսը նայեցի.
Արեւը ուրախ զարկել էր սարին,
Բնութիւնն անհոգ, թարմ ու նազելի
Ջուգւում էր, ժըպտում մանուկ արեւին:
Գիշերն անցել էր. բայց իր ետեւից
Մըռայլ էր թողել դեռ ցած՝ հովիտում:
Էդպէս տակաւին անցած երազից
Խաւար մի բան կար նըստած իմ սըրտում:
Թէկուզ երազին չես էլ հաւատում,
Բայց օտար տեղում, քո տանից հեռու,
Սիրտըդ մի յամառ կասկած է մըտնում.
Թէ՝ մի մահագոյժ սեւ բօթ է գալու...
Յաստիկն երազում աղաւնի դառաւ,
Աղաւնի դառաւ՝ իմ ձեռքից թըռաւ...
Լոկ երա՞զ էր այս: Բայց երազն ի՞նչ է:
Երազ, թէ իրօք — այդ միթէ մի՞ն չէ,
Երազն էլ երբոր կարող է կանչել,
Կարող է յուզել, խընդացնել, տանջել...
Յաստիկն ապրում էր - Յաստիկը մեռաւ...
Երազը եկաւ — երազը թըռաւ...
Կեանքը երազ է, երազն էլ մի կեանք,
Երկուսն էլ անցւոր, երկուսն էլ պատրանք:

Եւ թէ հաստատուն մի բան կայ անմահ,
Արդեօք իմաստուն հոգին չի՞ միայն նա,
Որ թէ յարթըմնի եւ թէ երազում
Ապրում է, տեսնում, ըզգում ու յուզւում...
Ու... գիր է գալիս ահա իմ տանից,
Թէ՝ կինըս հիւանդ — ըսպասում է ինձ...

III

Տո՛ւն, տո՛ւն, դէպի տուն
Թըռչում եմ արթուն,
Որպէս երազում:
Շուրջըս ամեն բան
Հշտապ, ինձ նըման,
Անցնում է, վազում:

Շըշմած գըլխիս մէջ
Գալիս են անվերջ
Ու ճընշում իրար
Զանազան դէպքեր,
Յուշեր ու մըտքեր,
Պայծառ ու խաւար...

Տեսնում եմ նըրան՝
Կանգնած է գարնան
Շողերի միջին,
Ու ժըպտում է ինձ
Իր պատուհանից՝
Ծաղիկը լանջին...

Տեսնում եմ մեռած,
Ծաղկով զարդարած,
Դրրած դագաղում.
Տըխրալի մի օր,
Աւտաստւք, սըգւոր.
Սեւեր ու թաղում...

Տո՛ւն, տո՛ւն, դէպի տուն.
Ու միւս իրիկուն
Մեր տան դէմ ելայ:
Մի սեւ-սեւ զանգւած՝
Կուտակուած, կանգնած
Մեր դրւանն ահա...

Պատոյտ է գալիս
Աշխարքը գըլխիս,
Երկինքը մըթնում...
Ողջ կանգնած են լուռ,
Ու ներսից տըխուր
Ձայներ են թընդում...

IV

«Ցա՛սմիկ ջա՛ն, եկա՛ւ... դէ վեր կա՛ց... վեր կա՛ց...»
Դուրս հոսեց դէմըս տըրտում ու յոգնած
Նըրա մօր ձայնը... խունկի ծըխի տակ
Աչքովըս ընկաւ դագաղը ճերմակ,
Ու շուրջըս մըթնեց: Տեղըս կորցըրի...
Մարդից, արեւից, աշխարքից հեռի,

Մի անտակ ծորում, սեւ ու խոր ջրում
Տարուում էի ես, խեղդուում, չարչարուում.
Բարձր էին ափերն, ողորկ ու դրժար,
Մի թուփ չը կար գէթ բռնելու համար,
Չը կար կենդանի ձայն, ըստուեր, նըշան,
Որ կարենայի կանչել օգնութեան...

V

Հա՛, հա՛, հա՛,հա՛,հա՛, զըւարթ քըրքիջով
Մի ծիծաղ անցաւ փողոցի միջով:
Ես ուշքի եկայ, աչքըս բաց արի,
Տեսայ աշխարքը ու լոյսն արեւի,
Տեսայ՝ նըստոտած մարդիկ շըշընջում,
Անտարբեր թեքւած՝ իրար ականջում
Խօսում են ուրիշ բանների վըրա,
Ու ոմանք ժըպտո՛ւմ, ժըպտում աշկարա...
Իսկ կողքիս նըստած ալեւոր մի մարդ
Խըրատում էր ինձ միալար, հանդարտ.
— Մի՛ լար, սիրելի՛ս, երեխայ չես դու,
Ինչքան էլ որ լաս — ի զուր ես լալու.
Քու ձայնը երբեք էլ չի լըսիլ նա,
Ոչ կը հասկանայ, ոչ էլ ետ կը գայ:
Այսպէս կամեցաւ Աստուած, երեւի,
Որ նըրա օրը շուտով խաւարի...
Մենք հողեղէններս՝ անճար ու չընչին,
Ինչ ենք Աստուծոյ կամքի առաջին...
Բաց է այս ճամբէն ամենքիս համար.
Ծեր, երիտասարդ, մեղաւոր, արդար,—

Ամե՜նք, ամենքը, այստեղ ինչ որ կան,
Այսօր թէ էգուց ամենքը կերթան.
Ով որ կը մընայ,
Թող նա պարծենայ:

VI

Ես լըսում էի... Ու յանկարծ ես էլ
Ուզեցի հաշտուել հըզօր մահի հետ.
Անճար, ակամայ սկսայ մըտածել,
Թէ մահը լաւ է, միայն մենք՝ տգէտ,
Մենք խեղճ, կարճամիտ, ու չենք հասկանում՝
Ինչպէս է գալիս եւ ուր է տանում,
Թէ՝ ե՛ւ կեանք, ե՛ւ մահ—անցաւոր, ունայն
Մի մեծ յաւերժի ձեւերն են միայն,
Ինչպէս որ ահա «երէկն» ու «այսօր»:
Այսօրն ինչ է որ,—մի երէկ է նոր,
Այսօրն էլ կանցնի, երէկ կը դառնայ,
Եւ սակայն կըրկին միեւնոյն է նա:
Եւ այսպէս անվերջ այսօր ու երէկ
Փոփոխւում են միայն, միշտ մընում է մէկ—
Մէկ մեծ ժամանակ: Էսպէս եւ հոգին
Փոփոխում է միայն կեղեւն արտաքին—
Մարմինն՝ այսօրւան օրին նըմանակ,
Իսկ ինքը անվերջ, ինչպէս ժամանակ:
Կամ եւս սիրուն,—հոսանուտ մի գետ,
Որ հազար ալիք ու ծըփանք ունի.
Գալիս են ալիք, անցնում են անհետ,
Անցնում են դէպի անդունդն ովկիանի,

Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ
Ապրում է դարձեալ անվերջ անընդհատ...
Այսպէս փոխելով հոսում է, գընում,
Գընո՜ւմ անհունի անճառ սահմանում,
Դէպի գերագանց վիճակն երջանիկ,
Ակն երջանկութեան, սիրոյ հայրենիք,
Ուր չը կան մարդիկ եւ ոչ ըզգացում,
Ուր ողջին մի մեծ կեանք է միացնում...
Եւ ի՜նչ է սիրոյ իմաստը վերին,
Ի՜նչ երջանկութեան խորհուրդը խորին,—
Հալե՛լ, միանա՛լ,
Իրեն մոռանալ . . .

Եւ անշուշտ մի օր, հանդերձեալ կեանքում,
Երկրում թէ այլուր, վերեւ՝ երկընքում,
Էն անյայտ ճամբով, որով նա գնաց,
Ես էլ կը թըռչեմ՝ աշխարքը թողած,
Ու կըզգամ նըրան, կապրեմ նըրա հետ
Մի ուրիշ անվե՛րջ կեանքով երկնաւէտ...

VII

Բայց ես միշտ թաքուն մի յոյս ունէի,
Թէ կարող էր նա լինել... կենդանի...
Մի տեղ մի անգամ էդպէս է եղել.
Տարել են մէկին, ուզել են թաղել,
Շիրմի փոսի մէջ զարթնել է յանկարծ,
Կարող էր եւ մեզ լինել պատահած...

VIII

—Մ՛չ, ո՛չ, նա գընաց, էլ ետ չի գալու,
Եւ էդպէս դու միշտ մեղք ես մընալու:
Թէկուզ եւ հագնես երկաթի տըրեխ,
Փընտրես՝ կանչելով աշխարհ բովանդակ,
Էլ չես հանդիպիլ նըրան ոչ մի տեղ,
Ոչ մի աշխարքում, ոչ մի ժամանակ . . .
Էն պաղ դիակն էլ, որ տեսնում ես դեռ,
Էն էլ հողի տակ կը ծածկեն հիմա,
Կըգա՛ն, կըգնա՛ն տարիքն անտարբեր.
Ու նա կը փըթի, նա հող կը դառնայ.
Անունն էլ ապրող աշխարքի համար
Դատարկ մի հընչիւն, անխորհուրդ մի բառ . . .
Էն էլ կը կորչի, ինչպէս որ չըկայ
Անունն ու հետքը էն հին աղջըկայ,
Որ ձեզնից առաջ հազար տարիներ
Նոյնպէս սիրահար ու ժըպիտ ունէր:

Եւ ի՛նչ է մարդը, եւ ի՛նչ իրեն կեանք.—
Եղծական ձեւեր, ձայներ, շարժումներ.
Յաւերժականը չունի կերպարանք,
Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր . . .

Անողոք մի ձայն էապէս ինձ կանչում,
Տանջում էր հոգիս, խորտակում, ճընշում:
Ճիգ էի անում նըրան լըռեցնել,
Սիրտըս էլ հետը պոկել, հեռացնել
Ու գըտնել մի ձայն, մի հընչիւն, մի բառ,
Որ կեանքի, յոյսի նըշոյլ ունենար . . .

Ուզեցի «Աստուած» մին աղաղակել,
Բայց չէ՞ որ նա էր էն մահն ուղարկել:

IX

Մի անհուն ցաւի մըրմունդի նման
Ծաւալւում էին զանգերը թաղման,
Ու ժամի ծըխուտ կամարների տակ
Կանգնած էր արդէն տըխուր պատարագ.
Տըխուր պատարագ, տըխուր մեղեդիք,
Տըխուր աղօթքներ ու տըխուր մարդիկ,
Մէջ տեղը ճերմակ դագաղը նրա
Դըրած սեւասքօղ սեղանի վրա,
Ու նա դագաղում, ասես թէ քընած,
Հարսնական ճերմակ շորով պըճնըւած,
Անփո՛յթ, անզգա՛յ կեանքին ու մահւան,
Իր գագաղն ածած վարդերի նման . . .
Էստեղ՝ բըռնըւած մի նոր տագնապով
Ուզեցի գըտնել մըտքի մի թափով,
Թէ ի՛նչ էր արդեօք, էն ի՛նչ էր լինում,
Ի՛նչ էր պատահել, նա ո՛ւր էր գընում . . .
Եւ իսկոյն, ասես, դիպայ մի քարի:
Մըտքերըս հատան: Առանց մըտքերի
Կանգնած էի ես խորտակւած ու պաղ:
Լուռ էր: Հոգեւոր երգերը մենակ
Ծաւալւում էին վըսեմ ու խաղաղ:
Ես լըսում էի, լըսո՛ւմ շարունակ:

«Էս անցաւոր երկրի վըրա
Լըցան օրերն պանդըխտութեան,

Երկնասըլաց գընում է նա,
Հագած մարմին անապական,
Անմահացած մահկանացուն՝
Միանալու իր Աստծուն :

Էնտե՛ղ, վերին երուսաղէմ,
Օթեւանում հրեշտակաց,
Ուր որ ենովք ու եղիաս,
Աղաւնակերպ կան ծերացած,
Էն աշխարհո՛ւմ անտրխրական
Արդարքն ապրում են յաւիտեան :

Եօթնաստեղեան լոյս խորանում,
Ուր ցաւ չը կայ, ոչ հեծութիւն,
Ընտրեալ հոգիքն ուրախանում,
Նայում են միշտ անվե՛րջ, անհո՛ւն
Բերկրանքներով յարազըւարճ,
Աստծոյ զըւարթ աչքի առաջ :

Էնտեղ նըրանք, միշտ բախտաւոր,
Նայում են Հօր լոյս երեսին,
Նըրա առջեւ պաղատաւոր
Նըրանց համար, որ թողեցին.
Ու իջնում են, մըխիթարում
Մեզ տըրտմալի էս աշխարհում . . .»

Թովւած, կախարդւած, տարւած էն երգին,
Վերացաւ, թըռաւ իմ վշտոտ հոգին
Դէպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,
Անյայտ ու հեռու, անծանո՛թ, օտա՛ր . . .

Եւ էն աշխարհը հըրաշալի էր.
Ոչ սուգ կար էնտեղ, ոչ վայելք, ոչ սէր,
Ոչ կարելի էր կորցընել մի բան
Եւ ոչ ունենալ քաղց ագահութեան.
Որպէս գերեզման եւ ունայնութիւն՝
Լուռ էր ու դատարկ, անփառք ու անհուն.
Որպէս հայեացքը մեռելի աչքի՝
Մի միտք ունէր միշտ առանց յուզմունքի,
Հողեղէն մարդուն անյայտ խորհըրդով
Յաւիտեան սառած, խաղաղ, անվըրդով . . .
Ու անշարժ կանգնած, դալուկ ու լըռիկ,
Ըստեըննե՞ր էին, անմարմին մարդի՞կ,
Տըժգոյն, անարեւ, աղօտ լուսի մէջ
Աղօթում էին անձայն ու անվերջ,
Աղօթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում.
Ոչ ազատութիւն, ոչ մահ, ոչ խընդում . . .

X

Յանկարծ լըռութիւնն ինձ ուշքի բերաւ,
Աչքիս առջեւից հըրաշքը թըռաւ :
Պատարագն արդէն վերջացրել էին :
Դագաղը շարժւեց, թընդաց ահագին
Սասանիչ երգը մահուան սարսափի,
Էն լացն ու կոծը, օրհներգը մահի,
Որով մեռելին հրաժեշտ են տալիս
Դէպի գերեզման ճամբու դընելիս,
Երբ ծառս է լինում վիշտը մայրական

Դէպ գահն Արարչի—ղըրկողը մահւան,
Արծակում ցասկոտ իր ճիչը յետին
Ու թոյլ, յուսահատ ընկնում է գետին:

XI

Դուրս եկանք դուռը: Նայեցի վերեւ:
Վերեւն, ինչպէս միշտ, փայլում էր արեւ.
Բոլորն աշխարքում կարգին ու հանդարտ,
Ու ինչպէս երէկ՝ էնպէս ամեն մարդ . . .
Բայց երկինքն էնքա՜ն պայծառ էր էնօր,
Եւ պայծառութիւնն էնքա՜ն էր տըրտում,
Տըրտմութիւնն էնքան խոր, հանդիսաւոր,
Որ թըւում էր ինձ, թէ ջինջ կապոյտում՝
Վերջին հըրաժեշտ տալով աշխարքին՝
Ձախրում էր նըրա հեռացող հոգին . . .
Ու մըտքովս անցաւ յանկարծ ակամայ,
Թէ արդեօք նըրա աչքերը անմահ
Նայո՞ւմ են ներքեւ, տեսնո՞ւմ են ինձ էլ,
Թէ ոնց եմ ցաւից տակին կորացել . . .
Եւ կամ ո՞րն է նա. էն շո՞ղն է պայծառ,
Որ զըւարթ խաղով, աշխոյժ ու կայտառ
Կորչում է, մըտնում թուխպ ամպի ետեւ,
Ազատ, երկնաչու էն ա՞մպն է թեթեւ,
Թէ՞ էն աղաւնին, որ հիմա թըռաւ,
Անփոյթ ճախրելով ջինջ օդում կորաւ . . .

XII

Ցանդո՜ւգըն մըտքեր, ո՞ւր էք սըլանում,

Ինչ էք որոնում այն մութ սահմանում:
Ահա մեր կեանքի սահմանը վերջին,
Էս սեւ ու տըխուր թումբերը չընչին . . .
Լո՛ւռ գերեզմաններ. քանի՛ սըգաւոր
Ձեր եզերքներին կանգնել են մի օր,
Էս դառարկ կեանքին, անհաւատատ բախտին
Անէծքներ տալով բեկւել, հեռացել,
Երբ որ սիրածի դագաղը մըթին
Վիհ են իջեցրել ու դէմքը ծածկել . . .
Եւ ո՛րքան ըղձեր, սըրտեր ու զգացմունք
Թաղւած են, մարած ձեր լուռ փոսերում.
Ահա ե՛ւ մի նոր բարձրացած սեւ թումբ,
Դեռ թաց է հողը, դեռ խունկ է բուրում,
Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,
Որ ապրում էր դեռ երկու օր առաջ . . .
Եւ անշուշտ մի օր սըրա շիրիմն էլ
Կը ծածկի նոյնպէս մամուռը կանաչ,
Կանի հաւասար քարին ու հողին,
Ինչպէս դըրացու անկողինը հին :
Ներանից յետոյ դէ՛ եկ՝ իմացի՛ր,
Թէ ով է թաղւած քու ոտի տակին,
Ինչ ցեղից էր նա, ինչ ձիրքեր ունէր.
Անահ հերո՞ս էր, գեղանի մի կի՞ն,
Անհոգ մի ջահի՞լ, անկըշտում ագա՞հ.
Աղքա՞տ, թէ հարո՞ւստ.—ծա՛յն, նըշան չը կայ...

XIII

Եւ . . . իջնում էր նա ընդմիշտ իմ աչքից.

Կեանքից, արեւից, էս լոյս աշխարքից . . .
Կորացայ, վերջին համբոյրըս տուի,
Ու էն համբոյրով դագաղում դըրի
Խընդուս, սէր, ըղձեր, ամէն, ամեն բան . . ,
Ինձ եւս քաշեցին, մի կողմը տարան :
Իսկոյն հետեւեց խուլ գըրգըռոցը,
Քարով ու հողով լըցրին էն փոսը,
Դագաղն էլ, ինքն էլ ծածկւեցին յանկարծ,
Ասես թէ բընաւ աշխարհ չէր եկած,
Եւ այսուհետեւ երբե՛ք, յաւիտեան
Էլ չի տեսնելու արեւը նըրան . . .
Յուղարկներն էն ժամ մօտ եկան մի-մի.
—Է՜հ, Աստուած նըրա հոգուն ողորմի.
Մի օր էլ մենք ենք էսպէս գընալու,
Ո՞վ է աշխարքիս վըրա մընալու.
կեանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
Անցաւոր են ողջ—բախտ, վայելք ու փառք . . .
Ասացին՝ հանգիստ հոգոց հանելով,
Ու դարձեալ հանգիստ գըրոյց անելով
Գընացին իրենց տրնները անհոգ :
Շուրջըս նայեցի, չէր լալիս ոչ ոք.
Երկինքն էլ էնպէս պայծա՛ռ ու հանդարտ.
Եւ ինչպէս երէկ, էնպէս ամեն մարդ . . .

XIV

Եկաւ գիշերը: Իմ յոգնած հոգուն
Իջաւ տանջալի մի խաղաղութիւն :
Վայր ընկայ, ինչպէս ուժաթափ մի բան,

Որ ըզգում է միայն կարօտ հանգըստեան,
Բայց ճըգնում է դեռ, աշխատում ունայն
Ուզում է յիշել, թէ ի՞նչ բան էր էն.
Մի խառն երա՞զ էր, մի աշխա՞րհք ուրիշ,
Գինու մի քէ՞ֆ էր, ծաղը՞ր, թէ՞ պատիժ...

Մըրափը սակայն ծանըր ու դանդաղ
Զոքեց ինձ վըրա՝ ահեւ թեւերը կախ,
Միտքըս իր թեւը կըտրեց ու թըռաւ,
Անհուն, խաւարչտին քաոսում կորաւ.
Մահ, մեռել, շիրիմ—թեթեւ հեռացան,
Ու հեռանալով փոխւեցին, դարձան
Ամպեր, ըստւերներ, կէտեր երերուն,
Դողացին, հանգան, ու մըթնեց հեռուն...
Կարճատեւ մի քուն եկաւ ինձ վըրա,
Եւ ես միւս անգամ երազում տեսայ.

XV

Հընչում էր փըրփրուն վըտակն արծաթի,
Արեւը խաղում պայծառ կապոյտում.
Առանց կորուստի ու առանց վըշտի
Կանգնած էի ես այն երազ հովտում:

Շուրջըս շուշաններ, անվե՛րջ շուշաններ,
Լիքն էր անտառը անուշ բուրմունքով,
Եւ եդեմական ներդաշնակ ծայներ
Փառք էին տալի Թովչական երգով.

«Փա՜ռք անպատում մըխիթարչին,
Փա՜ռք խորհուրդին անմահութեան.
Նա է կըրում յոյսը վերջին
Ու շողն անշէջ, արարչական.
Փա՜ռք խորհուրդին անմահութեան:

Նա տանում է բարձր ու անվերջ
Դէպի անհունն ու յաւիտեան,
Վիշտը հանգչում է նըրա մէջ,
Ապրում սէրը անապական.
Փա՜ռք խորհուրդին անմահութեան...»

Ու լըսում եմ ես այն խաղաղ օդում
Ջրնքոյշ ու գըւարթ ձայնը սիրելի,
Անյայտ ու անտես կանչում է նա ինձ,
Կանչում գերազանց մի ուրիշ կեանքի.

«Արի՛ ինձ հետ, իմ թըշուա՛ռ,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չը կայ մահ, անջատում,
Ու սէրն անվե՛րջ, անհատնո՛ւմ...

Արի՛, թըռի՛ր, գընա՛նք ինձ հետ,
Անցա՛ւ, անհո՛գ, անյո՛ւշ, անհե՛տ...»

1894

Ա Ն Ո Ւ Շ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

(Համբարձման գիշերը)

Բազմած լուանի նուրբ շողերին,
Հովի թեւին՝ թըռչելով
Փէրիները սարի գլխին
Հաւաքուեցին գիշերով :

—«Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զըքնաղագեղ ոգինեը,
Եկէ՛ք, ջահել սիրահարի
Սէրը ողբանք վաղամեռ :

Օխտն աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ :

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըրտով խնդիրք արել՝
Բարի ժըպտան իր սէրին . . .

Ափսո՜ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու եարին.
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերին . . .»

Ու նրանց հետ՝ ցօղ-արցունքով
Լըցւած սըրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխուր սիւքով
Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վո՛ւշ, Անուշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սէրին, քու եարին . . .
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վուշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին . . .»

—Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զըքնաղագեղ ոգիներ . . .»
Ու փէրիներն էսպէս տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հընչիւններով դիւթական,
Ու հէնց շողաց ցոլքն արեւի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուզւեցին ակն աղբիւրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վըտակների
Ալիքները պաղպաջուն:

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Ա.

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Էն չըքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու՝ թեւերն ահա փըռած տիրաբար՝
Թըռչում է հոգիս, թըռչում դէպի տուն:
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղո՛ւց կարօտով ըսպասում են ինձ,
Ու ձըմրան երկար գիշերը նըստած
Խօսում են Լօռու հին-հին քաջերից:

Դէպ էն սարերը, որ վէս, վիթխարի,
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկայ շուրջպարի բըռնած երկընքում,
Հըրճւում են, ասես էն մեծ հարսանքում
Պերճ Արագածի նազելի դըստեր,
Որ Դեւ-Ալ, Դեւ-Բէթ եւ այլ հըսկաներ,
Խօլ-խօլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լօռի:

Բ.

Էյ հին ծանօթներ, էյ կանանչ սարեր,

Ահա ձեզ տեսայ ու միտըս ընկան,
Առաջըս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դէմքեր, որ հիմի չըկան:
Անցել են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,
Որ անցած գարնան կայլին ձեր լանջում.
Անցե՛լ ձեր գըլխի հէրւան ծիւնի պէս,
Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
Որքացած հոգիս ողջունում է ձեզ,
Թըռչուն կարօտով փընտրում ծոր ու լեռ,
Դիւթական ձայնով կանչում է հանդէս:
Դո՛ւրս եկէք կըրկին շիրմից, խաւարից,
Դո՛ւրս եկէք տեսնեմ, շօշափեմ, լըսեմ,
կեանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
Լըցրէք պօէտի հաճոյքը վըսեմ. . .

Գ.

Եւ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թաւուտ ծըմակի լըռին խորքերից
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արձագանքն ահա լըսում են նորից:
Թընդում է զըւարթ աղմուկը բինի.
Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,
Ու բոլորն, ահա, նորից կենդանի
Ելնում են աշխոյժ վաղորդեան մութից,
Ու թա՛րմ, ցօղապատ լեռների լանջում . . .
Սո՛ւս . . . ականջ արա,—հովիւն է կանչում. . .

Գ.

—Աղջի՛, անաստուած, նըստի՛ր վըրանում,
Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,
Խաղեր կապելով,
Զօլեր չափելով,
Ոչխարըս անտէր,
Ընկել եմ հանդեր:

Ամէն էրեցիր սիրտըս քու սիրով,
Ոտըս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանալ, կը փախցնեմ գօռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ,
Թուխամազ Անուշ:
Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չըտան,
Արին կը թափեմ ես գետի նըման.
Սարերը կընկնեմ կորչեմ անգիւման,
Ա՛յ սեւ աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
Աղջիկ քեզ համար:

Ե.

Երգում է Սարօն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստի վըրանում:

—Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ,
Դու չե՞ս իմանում... ականջ դի՛ր, տե՛ս...
—Հերի՛ք է, Անո՛ւշ, ներս արի դագէն,
Քանի՛ դուրս թըռչես, նայես դէս ու դէն,
Տեսնողն էլ կասի—ի՞նչ աղջիկ է սա...
Հազար մարդի մօտ կերթայ կը խօսայ:
—Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջին,
Ինչքան աւլուկ է տալիս կանանչին . . .
Նանի՛, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
Էն սարի լանջին «ջան գիւլում» ասեմ:
—Հանգի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունիս ջահել չոբանների մօտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ.
Պարկեշտ կաց, աղջի՛, ամօթ է, ամո՛թ:
—Ախ, սիրտըս, նանի՛, չը գիտեմ ընչի,
Մին լաց է լինում սեւակնա՛ծ, տըխո՛ւր,
Մին թեւ է առնում, ուզում է թըռչի.
Չըգիտեմ՝ թէ ո՛ւր, չըգիտեմ՝ թէ ուր . . .
Նա՛նի ջան, նա՛նի, ես ի՞նչպէս անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալէդ
Նա՛նի ջան, նա՛նի, կուժը թող առնեմ
Աղբիւրը գընամ աղջիկների հետ. . .»

2.

Կըժերն ուսած՝ թըրւըռալով
Ջուրն են իջնում աղջիկները,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը զընգում սարն ի վեր:

—Ամպի տակից ջուր է գալի
Դօշ է տալի, փըրփըրում.
Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
Հօնգուր-հօնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խըմե՞ց էդ ջըրից:

Եարաբ խըմե՞ց, եարաբ հովցա՞ւ
Վառւած սիրտը էն եարի,
Եարաբ հովցա՞ւ, եարաբ անցա՞ւ
Անքուն ցաւը ջիգեարի . . .

—Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ
Վառւած, տարւած քու սիրով,
Էրւած ջիգեարն՝ եկաւ անցաւ,
Զըհովացաւ պաղ ջըրով . . .»

Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում.
Ա՛խ, իմ ազիզ եարն է լալի
Հօնգուր-հօնգուր էն սարում:

Է.

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
Չէն տըւաւ թաքուն մի խաւար կասկած.

—Էն ե՞րբ էր Անուշն իր կուժը առաւ,
Աղբիւրը գընաց ու ետ չըդառաւ . . .
Ամպերն եկել են սարերը պատել,
Ձորերը լըցւել, իրար փթթաթւել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի . . .»
Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ.
—Մ՞ւր կորար, Անո՛ւշ. ա՛յ մազըդ կըտրած . . .»
Ու ծորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զաւակին:
—Աղջի՛, սեւասի՛րտ, քու ահը կըտրի,
Աղջիկը մենակ ծո՞րը կը մրտնի:
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՞նչ ես կորցըրել, չես կարում գըտնել . . .
Աղջի, հէ՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ . . .»
Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ»,
Ու ծորի գըլխին մոլորւած կանգնած
Նայում է ներքեւ սիրտը սեւակնած:
Ամպերն եկել են սարերը պատել,
Ձորերը լըցւել, իրար փաթաթւել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի:
—Թո՛ղ, կանչում են ինձ . . . մէրըս կիմանայ...»
—Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի՛ քիչ էլ մընա...»
—Չէ՛, թողւ ես գնամ... ա՛խ, ի՞նչ խեղճ եմ ես..
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,
Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջւում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...

Ես ե՛րբ եմ եկել էստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրա՛ւ,
Էնքան մընացի՝ աչքըս ջուր դառաւ
Ինձ չես լըսում,
Ջես ափսոսում,
Էլ չէս ասում
Ինչ կըլնեմ ես . . .
Ես կը վառւեմ,
Հուր կը դառնամ,
Ես կը հալւեմ,
Ջուր կը դառնամ,
Ես չը գիտեմ
Ինչ կը դառնամ,
Թէ որ մին էլ
Էսպէս մընամ . . .

Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պէս,
Մընում էր եարին,
Ու չեկաւ նա տես:
Խեղճը դողալով
Անյոյս կըռացաւ,
Դարդից չորացաւ,
Ուռենի դարձաւ:
Ջըրերի վըրա
Գլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին

Մի միտք է անում,
Թէ եարը եարին
Մնց է մոռանում...
—Ախ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում.
Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խօսում...
Էն, որ գիշերով շրհու եմ փըչում,
Էն ո՞ւմ եմ կանչում...
Էն, որ մոլորած նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում...
Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ յիշում...
Ախ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անաստուա՛ծ Անուշ...»
Արբեցա՛ծ, անո՛ւժ
Հառաչեց հովիւն ու սըրտին ընկաւ,
Հալւեցա՛ւ, հանգա՛ւ...

❧

—Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...»
կանչում է մէրը, հառաչում, կանչում:
—Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛...»
Ջորից աղջկայ ձէնն է ղօղանջում:
Ու մազերն անկարգ տըւած թիկունքով
Ու ցըրւած շիկնած այտերի վըրան,
Դուրս եկաւ թեթեւ ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նըման:
Նա կուժը դատարկ ետ բերաւ կըրկին,

Իսկ ուսին տարած ուսաշոր չըկայ,
Թողել է էն էլ ջըրի եզերքին...
Ախ, անհոգութիւն ջահել աղջկայ...
—Նանի՛, վախեցի, գանգատւում է նա,
Եւ ուզում է լալ, չի կարողանում.
—Նանի՛, ներքեւում ես մարդիկ տեսայ,
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում...»
Անիծում է ծեր մէջըը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ եւ բերած հին կուժը ուսին :

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

ԺԴ.

(Համբարձման առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալւան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

«Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Սեւ սարեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա:

Երգ ու բոյր խառնած,
Թեւ-թեւի բռնած
Ջուգում են լեռները,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպէս թիթեռները:

Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Լաւ օրեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա:

Եկաւ համբարձում
Ծաղկով զարդարուած,
Մեր բախտին հարցում.
—Ո՞վ է մեզ գըրուած:
—Ա՛յ ջան տըղայ, չոբան տըղայ, ո՞ւմն ես դու:
—Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դէ հանի՛ր, ա՛ղջի,
Վիճակն ՚ի բարին,
Երգերով գովենք
Էն իգիթ եարին:

Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն եարի,
Ինչ դարդ ունեմ քանի նա կայ աշխարհի:
Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Հուր սըրտեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա:

Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մէկին իր երազն ու սէր,
Միւսի մուրազը սըրտումն է մընում:

ԺԱ.

Պըտույտ է տալիս վիճակը նորից
Քուշուշքը գըլխին ծաղիկ Ծաղկամէր,
Թընդում «ջան գիւղում» մատաղ սըրտերից,
Հետը գըւգըւում էն ծաղկոտ սարեր:

«Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգեարին գիւլլա դիպչի
Քեզ սիրի ով որ աղջիկ:

—Ա՜հ, ինչ սեւ վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սեւաբա՛խտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...»
Ու ողջ մընացին մոլորւած, ապուշ:

—Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա՛, ջան գիւղում ասա:

—Ախ, չէ՛, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
Ես երբեք երբեք, բախտ չեմ ունեցել . . .
Ես միշտ էլ էսպէս անբախտ կըլինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել...
Ասում են՝ մի օր, ես օրօրոցում,
Մի պառաւ դարւիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նրրան բաժին չի տալի:
—Կորի՛, ասում է, կորի՛ մեր դրռնից,
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա՛...»
Ու դարւիշն էնտեղ անիծում է ինձ,
Թէ՝ դըրա օրը լացով անց կենայ...
Ախ էն դարւիշի անէծքին անգութ
Ու էս վիճակին տեղեակ է Աստուած.
Սիրտըս էլ միշտ փա՛կ, սիրտըս էլ միշտ մո՛ւթ,
Ինչ կայ, չըգիտեմ, իմ առջեւ պահւած...
—Մի՛ տըրտմիր, Անո՛ւշ, մի՛ լինիր յամառ,
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դարւիշ, մի անէծք յիմար,
Ու լալիս ես դու էդպէս սըրտաճա՛ք...
Հանգի՛ստ կաց, քուրի՛կ, մի՛ վախիր էդքան,
Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Էդ քո նորահաս մատաղ կուսութեան
Առաջեւ դեռ կան երջանիկ օրեր :
Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա:

(Խումբը երգում է)

Աղջի, բախտաւո՛ր,
Երնէ՛կ քու սէրին,
Քու սարի սովոր
Սեւ-սեւ աչքերին:

Համբարձում, եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա,
Սէր-օրեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա:

Մեռնեմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Սարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունես:

Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Սար-եարեր, եա՛յլա
Եա՛յլա ջան, եա՛յլա:

(Աղուջը մենակ)

Ախ, իմ բախտը կանչում է ինձ՝
Ձեմ հասկանում դէպի ուր...
Դողում է պաղ նըրա ձէնից
Իմ սիրտը սեւ ու տրխուր:

Դուք էլ տարի սիրուն ծաղկունք
Թաքուն մի ցաւ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն է արցունք,
Սիրտներըդ սեւ ու տրխուր:

Ախ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջւում են միշտ էսպէս զուր,
Տըրորւում են ու թառամում
Սիրտները սեւ ու տըխուր:

(խումբը հեռւից)

Համբարձում, եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա,
Վառ ցաւեր, եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

ԺՈՂ.

Ձըմրան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճւում էր անզուսպ ամբոխը գիւղի.
Գիւղն էին իջել հովիւ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից յետոյ լէն հըրապարակ
Բաց արին մէջ տեղն արծակ գըլխատան,
Ջուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
Հարա՛յ են տալի—«քաշի՛ հա, քաշի՛...»
Ու դուրս քաշեցին զօռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայր գառնարած Մօսին:
Ողջ գիւղը կանգնեց պարըսպի նման,

Ջոկուեց, բաժանուեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլեւան,
կանգնեց թիկունքին տըղերանց մէկի։
Գոռում են, գոչում երկու բանակից.
—Սրտապինդ կացէ՛ք, մի՛ վախէք, տըղե՛րք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
Փէշերը հաւաք խըրում են գօտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
Ադաթ կայ սակայն էն մութ ծորերում,
Ու միշտ հընազանդ հընոց ադաթին,
Ամբոխի առջեւ իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին:
Ու իրար բըռնած Սարօն ու Մօսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դըժւար է իբրեւ յաղթել մէկ մէկի:
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սըրտատրոփ նայում աղջիկները,
Եւ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել ինչպէս մի պատկեր:
Անուշը կանգնա՜ծ... Սարօն նըկատեց,
Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ
Աչքերի առջեւ մըլարը պատեց,
Մոռացաւ ընկեր, ադաթ ու աշխարհք,
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,

Ուժ արաւ Սարօն, ծրնկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրէն:
Ամբոխը թափւեց հարա հըրոցով,
Վեր թըռցրեց ջահել փահլեւաններին,
Եւ՝ ուրախութեան աղմուկ գոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին:
Ցընծութեան ձայնից, ծափերի զարկից
Շարժւում են դողում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:

ԺԳ.

Վեր կացաւ Մօսին. իրեն կըտրատում,
—Թող գա՛յ, գոռում է, որ բըռնենք նորից,
Թէ չէ նամարդը, արեւս եմ երդւում,
Էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից:
Վէ՛ր չի գըցել ինձ... ինձ խաբել է նա...
Մէյդան քաց արէք, թող մին էլ մէջ գայ. .»
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում:
Թունալի ծաղրով կանչում են, գոռում,

—Չէ՛լաւ, էդ չէլաւ,
Վէր չի գըցել դեռ,
Մօսին թօլ էլաւ—
Խոզապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
Շատ էլ լաւ կանի .

Մէջքը թափ տուէք,
Թող մին էլ բրռնի...
Հա՛, հա՛, հա՛, տղերք.
Մէջքը թա՛փ տուէք...»

ԺԳ.

Եւ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արիւն է կաթում սեւակնած սրտից,
Գրնում է ըշտապ, քայլերը մոլոր:
—Ամո՛թ քեզ, Մօսի՛, թո՛ւք ու նախատինք,
Ամո՛թ քեզ նըման գոված իգիթին,
Մի անունդ յիշիր, մի բոյիդ մըտիկ.
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:
Ինչպէս վէր ընկար դո՛ւ սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...:
Դո՛ւ... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
Ներանից յետոյ երեւաս կանա՛նց...
Եկա՛ծ էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դէ մեռիր էլի՛, գետինը մըտի՛ր,
Տանը վեր ընկիր՝ իլիկ պըտըտիր...»

ԺԴ.

—Վա՛յ, վա՛յ, Մօ՛սի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
Սրբանից յետոյ չե՛մ սիրիլ նըրան...

Վախենում եմ ես... դամէդ տեղը դիր...
Սիրտս դողում է տերեւի նման...»
Խընդրում էր լալով եղբօր առաջին
Անզօր ու դալուկ իր քոյրը չոքած,
Մօսին փայլկըտուն խանչալը ծեռին՝
Ուզում էր մորթել նրան աչքը բաց:
—Դէ իմ անունով երդւիր, անըզգա՛մ,
Որ էլ Սարօին դու չես սիրելու,
Թէ չէ՝ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
Մինչեւ դաստակը սիրտդ եմ խըրելու:
—Քու ոտի հողն եմ, Մօ՛սի ջան, Մօ՛սի,
Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս...
Ես էլ Սարօին չեմ սիրում, ասի,
Տեսնո՞ւմ ես չոքած ինչպէս եմ լալիս...
—Դու խաբո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ խաբեբա՛յ.
Ձե՞ս սիրում ասիր. էն ինչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մըտնում՝
Հեկեկում ես դու գիշերւայ մըթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարօ ջան, Սարո՛, Սարօ» ես ասում...
Մօսի ջան Մօ՛սի, գըլխովըդ շուռ գամ.
Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
Ինձ մի՛ ըսպանիր, դամէդ տար հեռու...
Քու քոյրը չե՞մ ես... իմ Մօսին չե՞ս դու...

ԺԲ.

Ու էն հարսանքից թըշնամի դաբծան

Ախպէր տղերքը էս դէպքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար:
Անկոտրում Մօսին էլ ո՞ր Մօսին էր,
Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարհքում,
Իրեն հարազատ քրոջը տեսնէր
Նամարդ ընկերի—Սարօի գըրկում,
Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի.
Սարօի անունն ու սէրը թաքուն
Խանչալի ծէրով սրտիցը հանի:
Ով գիտի, գուցէ հէնց էս գիշերն էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
Մէկմէկու հօտից ոչխար են քըշել,
Մէկմէկից վըրէժ առնելու համար:
Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
Որ մէկի դէզը, արդիւնքը հընձի,
Գիշերւայ ժամին հըրով բըռընկած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

ԺԷ.

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
Նոր են ջուր խըմած ծորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Զաթինդաղ լերան
Նոր է արեւը պըռունգը հանում,

Գիւղում աղմուկով իրար են անցնում,
Կրտեր ծերերին կանայք հաւաքւած,
Տղերքը դէպի քարափն են վազում
Հրացաններուի կիսերից բռնած:

ԺԴ.

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովւած տղերանց միջին.
Մատը դէպի ծոր մեկնելով հանդարտ
Էսպէս նա պատմեց զօռ տալով չիբխին:
—Էս գիշեր, կէսը կըլնէր գիշերւայ,
Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մէջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղւայ,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա՛, հալալ կէսը կըլնէր գիշերւայ,
Շունը վերկացաւ էս կրռան վրայ.
Հէյ հէյ կանչեցի, ձէն տըւող չէլաւ.
Շունը գազազեց, շունը վեր կալաւ...
Հէյ գիդի, ասի ինքըս իմ միջում,
Ինչ է մըննացել առաջւան տղից:
Քընում էի վաղ մենակ արխաջում,
Մի ձէն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն էի ասում, քընել չէի դեռ.
Կը լինէր դառը գիշերւան կէսը,
Երկու մարդկային սեւ կերպարանքներ
Շան առջեւ փախած՝ ցած իջան դէսը...

ԺԶ.

Էս որ լըսեցին, դէս ու դէն ցըրւած
Տղերքը ճեպով ծորը ներս մըտան,

Ու մըտի տակին, ճամբիցը ծըռւած,
Երկու մարդու թարմ ոտնաւտեղ գըտան:
Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ոտնաւտակ տըւեց
Զոբան Սարօին գըտնելու համար,
Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց:
Մի ամսից յետոյ տըղերքն եկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.
—Հալալ է տըղին, ա՛յ իգիթութիւն,
Ահա թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ:
Մենակ Անուշի ախպէրը—Մօսին
Մընաց հանդերում. երդում կերաւ նա,
Ուր որ էլ լինին՝ նըրանց միասին
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանայ:
Մնաց հանդերում: Եւ ահա մի օր,
Քաղւոր կանանց մէջ, մըթան հետ, թաքուն,
Շորերը պատռւած, տխուր, գըլխակոր
Անուշը ձորից եկաւ հօրանց տուն:

Ե.

—Աղջի՛, Վա՛րդիշաղ, թէ հոգիդ սիրես,
Մի գարի՛դ գըցիր, տես ինչ է ասում.
Աչքըս խաւարի, տեսիլք դառնամ ես,—
Տեսիլ եմ տեսիլ գիշերս երազում:
Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
Անբախտ Սարօի ոչխարը կանգնած,
Լեզու էր առել ու խաղ էր կանչում,

Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տրւած...
Մի գարի՛դ գըցիր, թէ որդով խընդաս,
Էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
Ողորմած Աստւած, Քու դուռը բանաս,
Քու ոտի հողն ենք—Դու ես ըստեղծել...
Անբան գառները մութ ծորի միջին
Խաղ էին կանչում ու ձէնով լալիս,
Սարօի նանն էլ նըրանց առաջին
Աղլուխ էր առել ու պար էր գալիս...
—Աղջի՛, Մա՛նիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
Էս չարն, էս բարին... Սարօն է էս էլ...
Տե՛ս, ահա, Սարօն սեւ ճամբէն ընկաւ...
Աստւած խընայի ջահել—ջիւանին,
Աստւած խընայի իր անբախտ նանին...

ԻՆ.

Ու ման է գալի սարերը ընկած
Սարօն փախցըրած եղջերւի նըման,
Օրհասն առաջին, գընդակն ետեւից
Հանդերը դըժոխք, ընկերը դուշման:

Եւ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խաւարն է պատում,
Նըրա բայաթին ողբում է տըխուր,
Ընկեր սարերին խօսում, գանգատւում:

«Բարձըր սարեր, ա՛յ սարեր
Ձէն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք,
Իմ դարդերի թայ սարե՛ր:

Որս եմ՝ բութէս ձեզ արած,
Ձեր ծորերին, ձեզ արած,
Կուզեմ կորչեմ անգիւման,
Էս աշխարհքից բէզարած:

Կորչեմ բէզար դաւսարկուն,
Քար-սարէսար դաւսարկուն,
Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար-բուն:

Ախ կը մեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թէ յանկարծ իմանայ,
Ես ազատւեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մընայ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

ԻՌ.

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարեւան,
Ու խօսք չեն գըտնում ասեն անարգւած,

Տարած ետ բերած, անբախտ աղջկան:
Աստած խընայեց՝ կոպիտ ախպէրը
Հետու հանդերից դեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռադէմ ալեւոր հէրը
Ըսկսաւ փըրփըրած թըքել, անիծել:
—Դո՛ւրս գընա, կորի՛, ա՛յ լիրբ, անըզգա՛մ,
Սեւ ու սուգ լինի թագ ու պըսակըդ.
Կորի՛, չերեւաս աչքիս միւս անգամ,
Գետինը մըտնի երկար հասակըդ:
Տեսա՛ր, որ նըրան աստում է Մօսին,
Չեն ուզում, տեսար, նըրան հէրն ու մէրդ,
Դու քանի՞ գըլուխ ունիս քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նըրա հետ»:
Խըռնւած գիւղացիք կըտուրից իջան
Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
Յայտնըւեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հրսկայ ալեւոր:
—Դո՛ւրս գընացէք՝ դո՛ւրս, գոչեց տէրտէրը,
Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
Նըրանից յետոյ բանը կը պարզի:
Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
Սիրո՞ւմ ես նըրան, քու կամքո՞վ փախար...
Եթէ սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
—Ինչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տե՛ս,
Որ դուրսը յանկարծ աղմըկեց էապէս...
Ո՞վ է ըսպանել... Մօսի՞ն... ո՛ւմ... ո՛ւր...»
—Անո՛ւշ, հէ՛յ Անո՛ւշ... ջուր հասցրէ՛ք, ջո՛ւր...»

Ի՞Գ.

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկրնքի մըթնած ամպերից իջնէր.
Ինչպէս փոթորիկ սաստիկ սըրընթաց,
Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ:

Ցաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թրռչում են, ասես ահից հալածւած,
Ու նըրանց առջեւ ահռելի բացւում,
Թըշշում է ծորը արիւնով լըցւած:
Գիւղը դառարկւեց մի ակընթարթում,
Ջարափի գըլխին կանգնած անհամբեր,
Լո՜ւռ, սըրտաճըրոփ ականջ են դընում,
Նայում են ներքեւ... ձէն չի գալիս դեռ.
Դեքեդն է մենակ անդընդում՝ յուզւած՝
Խըլածայն ողբով սողում դէպի ցած:

Ի՞Դ.

Ու մարդասպանը դուրս եկաւ ծորից,
Դէմքը այլայլւած, քայլւածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխւած է բոլոր:
Առանց նայելու մաքդկանց երեսին,
Առանց խօսելու, սեւակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տրւաւ սընին
Սեւ հրացանը, սեւ օձի նըման:
Պապանձւեց նոյնպէս ամբոխը մեխւած,

Ոչ ոք ծըպըտալ չի համարձակւում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
Մեռած չոբանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբա՛խտ ծընող, վազում է ահա,
Զորիցն է տըխուր գոռոցը գալիս:

ԻԵ.

Սըգաւոր կանայք նըրա ետեւից
Հարա՛յ կանչելով ծորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարւեցին:
Իգիթին վայել սըրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին ձէն ձէնի տըւած:
Տըղերքն էլ մըթին, լուռ ու գլխակոր,
Մընացին մօտիկ քարերին նըստած:
Ողբացին անշունչ դիակի վըրա
Անտէր մընացած ոչխարի մասին,
Անսիրտ անէծքով յիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ եարի մասին:
Եւ նըրա մասին, որ ընկերները
Հանդը գընալիս Սարօ կը կանչեն,
Որ սարից փախած սոված շընները
Կրտերը պիտի ոռնան, կըլանչեն:
Ծանրը չոմբախը, գըլուխը մեխած,
Օճորքում դըրած պիտի մըրոտի,
Երկար խանչալը, պատիցը կախած,

Պատենում մընայ ու ժանգը պատի...
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գընալ առանց Սարօի,
Սեւ շորեր հագած կը նըստի տանը,
Անցած օրերը միտը կը բերի:
Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
Կըտրատում էին սիրտը ծեր նանի,
Եւ աղաչում էր նա մեռած որդուն
Մի անգամ խօսի, աչքը բաց անի:
—Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արեւ, կեանք ու ջան՝ որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Թըշնամի որդի, դաւաճան որդի...»
Բայց չէին բացւում աչքերը փակւած,
Շուրթերը սառել, չորացել էին,
Նըրանց արանքից ատամները բաց
Սիպտակ շարքերով երեւում էին:
Ու նա կատաղած՝ յանդուգն անէծքով
Ծառս եղաւ դուշման երկընքի դիմաց,
Եւ հայհոյում էր, եւ կուրծքը ծեծում,
Եւ լալիս էին ձէն ձէնի տըւած...
«Կարմիր արեւից ընկած, Սարօ ջա՛ն,
Կանանչ տերեւից ընկած, Սարօ ջա՛ն...
Աբեւս հանգաւ, Սարօ ջա՛ն,
Գիշերս ընկաւ, Սարօ ջա՛ն...»
Գիշերը ընկաւ, թանձրացաւ մութը
Ու նըւաղեցին ձէնները տըրտում,
Յոգնեցի՛ն, հանգա՛ն... Ծերուկ Դեբեդը
Սըգում էր մենակ խաւար անդընդում:

Սրգւոր գետը
Ծեր Դեբեդը,
Սիրտը քըրքրած,
Ջուրը փրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է . . .

ԻՋ.

Եւ մի քանի ընկեր տըղերք
Ջորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սրրտաբեկ
Հողին տըւին հովւի դին.
Ծառ ու ծաղիկ՝ սըւսըւալով
Բոյր խըւնկեցին դիւրեկան,
Ծեր Դեւ-քեդն էլ աչեղ ձէնով
Երգից վըսեմ շարական:
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դէպի տուն,
Ջորում թողած մի սեւ քըլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

ԻԲ.

Գարունը եկաւ, հաւքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.

Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղուր,
Գետի եզերքին շրջում է մոլոր,
Շրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս:

— Սիրուն աղջի՛կ, ի՞նչ ես լալիս
Էդպէս մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
Էս ծորերում ամեն օր,
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կը գայ, մի քիչ կաց,
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում,
Ախ նա գընա՛ց, նա գընա՛ց...
Արտասուելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգցընում ես
Ջահել կըրակն աչքերիդ:
Ընըրա անքախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբիւրի,
Դու էլ գընա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի:

—Շնորհակա՛լ եմ, անցո՛ր ախպէր,
Ա. ուուած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք սէրը
Վայելեցէք անթառամ,

Ինձ արցունք է տըւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...»

Ու ման է գալիս,
Երգում ու լալիս:
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ էն անմիտ տրտունջն է խօսում,
Թէ ինչպէս յանկարծ աշխարքը փոխւեց,
Ինչպէս դառարկւեց կեանքում ամեն բան,
Սարերը մնացին որք ու անչոքան,
Թէ ինչպէս յանկարծ նա գընաց հեռու,
Էլ չի՛ դառնալու, էլ չի՛ դառնալու...
«Ե՛տ դառ, ե՛տ, իգի՛թ.
Ետ դառ, անիրա՛ւ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ:
Ոչխարդ էն սարով
Շուռ տուր, տո՛ւն արի,
Փախի՛ր գիշերով
Ու թաքուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
Ով է քընած էն տըղէն,
Վըրէն քաշած սեւ եափընջին
Կուռը հանած էն տըղէն.,.
Ջա՛ն, իմ եարն է, ջանին մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,

Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մուշ, անուշ մըրափել:

Վե՛ր կաց, վե՛ր, իգի՛թ,
Վե՛ր կաց, անիրա՛ւ,
Ոչխարըդ բեր կիթ,
Օրը ճաշ դառաւ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Ձու գալուն մեռնեմ,
Թուխ չոբան, արի՛,
Կարօտըս առնեմ...

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դաշի ու զուռնով
Ինչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թօն ու ծիւնով
Չի են խաղում, չափ տալի...
Աղջի՛, աղջի՛, մըտիկ արէ՛ք,
Էս ինչ տեսիլք ես տեսայ.
Ո՞վ էր տեսել էսպէս հարսնիք—
Ոչ հարս ունեն, ոչ փեսայ...

Բ[illegible]երում են հըրէն
Ամա՛ն, մեր տան դէմ...
Վէ՛ր դըրէք, վըրէն
Հիւսերըս քանդեմ...
Ես էլ եմ գալի՛ս,
Էդ ո՞ւր էք տանում...
Ինձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...

Ախ, չէ՛, ամա՛ն, ասում են դա
Մի դիակ է լո՛ւռ, հոտած,
Արիւնը չոր դէմքի վրրա,
Աչքերն անթարթ, սիպտակած:

Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցօղոտ, շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՛, ջա՛ն իգիթ,
Արի՛, անիրա՛ւ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ:
Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի,
Ես շատ եմ լացել...

Տե՛ս, կը խըռովե՛մ,
Լաց կըլեմ ես էլ...
Չեմ խօսիլ քեզ հե՛տ...
Չեմ սիրիլ քեզ էլ...»

ԻԷ.

Անլըռելի վըշվըշում է
Պըղտոր ջուրը Դեբեդի,

Ներա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի:
Ներա շուրջը հէգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ջէն է տալիս իր Սարօին
Ու պըտըտւում մոլորւած:
Ու հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անքախտ աղջըկայ,
Բայց իր սիրած տըղան երբեք
Ջըկայ, չըկայ, ու չըկայ...
Վըշվըշում է գետը—վո՛ւշ, վո՛ւշ,
Ու յորձանք է տալիս յորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ...»
—Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...»
կանչում է մէրը վերեւից, կանչո՛ւմ,
Լո՛ւռ են ծորերը, լո՛ւռ են ահռելի,
Դուշման Դեբեդն է մենակ մրոնչում:

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՛ւշ, Սարօ, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

Թ.

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր,
Կայ հըրաշալի, երջանիկ վայրկեան.
Բացւում են ոսկի երկընքի դըռները,

Ներքեւ պապանձում, լըռում ամեն բան,
Ու Աստւածային անհաս խորհըրդով
Լըցւում բովանդակ Ներա սուրբ գըթով:

Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարօտով մի հեղ համբուրւում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում:

ՀԻՆ ԿՈՒԻՐԸ

Ա.

ՏԱՆԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Մենք կարծում էինք թէ իր շանթերով
Հրսկում է Աստուած Սամայ սարերին.
Մենք ասում էինք՝ անթիւ նաւերով
Կրգան օգնութեան մեր ծանրը օրին...
Աւաղ մեր պայծառ յոյսերի համար.
Ահա խորտակւած, եւ ահա կըրկին
Նայում ենք անյոյս, մենակ, դալկահար՝
Մորթող թըշնամու արիւնոտ ձեռքին:
Երկրի մեծերը չեն փոխում իրենց
Մեռելի ոսկրին ողջ ազգը հայի,
Մեր տունն են ուզում, մեր տեղն եմ ուզում,
Մեր բուն երկիրը՝ մեզնից ամայի...
Նա էլ, որ Աստծու անունով եկաւ,

Փըրկչական խաչով, խօսքով գրքութեան,
Նա էլ Աստրծուն՝ կանգնեց՝ փառք տըւաւ,
Ու մենք յօշոտած, տանջւած ենք էսքան...
Ու հոսո՜ւմ, հոսո՜ւմ, հոսում է անմեղ
Արիւնն-արցունքը տարաբախտ ազգի,
Հոսում ամեն օր, հոսում ամեն տեղ,
Եւ դեռ սոսկալին չի եկել իսկի...
Եւ ահա մենակ, խոցւած ու ցաւոտ,
Թէ մարմնով տանջւած՝ հոգով առաւել,
Մենք միտք ենք անում մինչեւ առաւօտ,
—Տէ՛ր ամենագէտ, մենք ի՞նչ ենք արել...»

Ա.

Հայի չար բախտը ինձ ներքեւ բերաւ
Բարձր Գուգարքի ծաղկուտ սարերից,
Իմ հոգին լըցրեց հառաչանք ու ցաւ,
Տըխուր երգերի քընար տըւաւ ինձ:
Դէ՛, հեծծի՛ր, իմ երգ, ինչպէս կը հեծծի
Բուքն իմ ամայի աշխարհքի վըրայ,
Անքուն կարօտի դուռը կը ծեծի,
Թէ՝ քու անբախտը չըկայ ու չըկայ...
Դէ՛, հեծծի՛ր. իմ երդ, ինչպէս սրգաւոր
Հայի հեծեծանքն ու բողոքն անվերջ,
Ինչպէս պանդուխտի թառանչ սըրտախոր
Օտար դըռներում, անյայտ ճամփի մէջ...

Բ.

Իմ միտքն էլ, աւա՜ղ, չըրջում է մոլոր

Հայի հալածված պանդուխտի նման,
Մենակ ամեն տեղ, տրխուր ամեն օր,
Ցաւերով լըցված պանդուխտի նման:
Կորցրել է վաղուց ամենն, ինչ ունէր,
Փընտրածն էլ, էապէս, չի գըտնում երբեր,
Անքուն ջըրի պէս գընում է երեր,
Աշխարհքից աշխարհք, մի ցաւից մի ցաւ:
Ու, ինչպէս օտար աշխարհքից դարձող
Կարօտցած ճամբորդ, նըկատում է նա՝
Հեռո՛ւ, մըթան մէջ, վառ կարմիր լուսով
Ծաղկում է ծանօթ լուսամուտն ահա...
Մենակ ու խաղաղ ճրագի առջեւ,
Զոր ձեռքը տըւած դալուկ ճակատին,
Մըտքի ծովն ընկած մըտածում է նա,
Հին տառապանքի, հին ցաւի որդին:
Գըլխի վերեւը տրխուր պատկերներ,
Գըրքե՛ր ու գըրքեր իր շուրջը բոլոր...
Ու ներս է մըտնում մի բարի ըստուեր,
Իր մայրը ցամքած, մայրը սեւաշոր:
— Ի՛նչ ես միտք անում, Վահա՛ն ջան, էդքան,
Աւա՛, քեզ ղուրբան, քո մըտքին ղուրբան,
Ի՛նչ ես միտք անում ու հալւո՛ւմ, հալւո՛ւմ...»
— Բան չըկայ, մայրի՛կ. գըլուխս է ցաւում...»
— Չէ՛, սուտ ես ասում, ինձ չես խաբել էլ.
Էդ ո՞վ է, ասա՛, քո քունը կտրել,
Էդ ո՞ր սիրուն, ո՞ր անուշ հոգին...»
— Հա՛, գըտար, մայրի՛կ... սիրում եմ մէկին...»
Տեսա՞ր, ինչպէս եմ ցաւըդ իմացել...
Ինչո՞ւ ես ապա ծածկում ինձանից

Ծածկում ինձանից — քեզ սիրող նանից...
Դէ ո՞վ է, ասա՛, ես էլ կը սիրեմ...
Դէ ո՞ւր է, ասա՛... ո՞ւր է, որ բերեմ.
Բերեմ, որ էդքան միտք չանես էլ դու...»
— Չես կարող, մայրի՛կ, նա շատ է հեռու...
Նա շատ է հեռու, գերութեան միջում,
Դու չես իմանում, դու չես ճանաչում...
Էնպէս մի դըժար տեղ եմ սիրել ես...
Չես կարող հասնես, չես կարող բերես...»
Ու դուրս է գընում յուսահատ, մոլոր
Իր մայրը ցամքած, մայրը սեւաշոր,
Աղօթում իրեն Վահանի համար,
Աշխարհքի համար, ամենքի համար...

Գ.

Ցայտնըւեց ապա մի օտար տըղայ,
Մի ուրիշ տըղայ երեւաց էլի,
Խօսում են անքուն գիշերներն երկար,
Խօսում են տաք-տաք, մո՛ւթ, կասկածելի...
— Ո՛վ են, Վահան ջան, գալիս են քեզ մօտ,
Էդ ինչ տըղերք են՝ գունա՛տ, անծանօթ...
Երնէկ իմանամ՝ էդ ինչ էք ուզում,
Էդ ի՞նչ էք էդքան խօսո՛ւմ ու խօսում...»
— Պանդուխտ են, մայրի՛կ, ընկեր տըղերք են,
Քըշւած, հալածւած, ընկած դէս ու դէն.
Տուն ու տեղ չունեն, ինձ մօտ են գալիս,
Զըրոյց ենք անում, իրար սիրտ տալիս...»
— Իմ անբախտ զաւակ, մանկուց վըշտակոխ.

Ընկերներդ էդպէս հալածւած, անհող,
Սիրածդդ հեռու, գերութեան միջում...»
Լսում է մայրը, խօսում, հառաչում,
Ու դուրս է գընում կըրկին շըւարած...
Ամեն տեղ քընած, ամենքը լըռած...
Մենակ՝ մընում է իր անհոգ մարդուն,
Չի գալիս նա էլ, դեռ չի գալիս տուն.
Իր պէսների հետ էլի էն անտէր
Գինետանն ընկած ու խօսում է դեռ...

Դ.

(Գինեսաներ)

Կըտրել է վաղուց ամեն ձէն ու ծուն:
Գիշերւան կէս է: Ցոգնած ու անքուն,
Գըլուխը գինուտ դազգահին դըրած՝
Գինետան տէրն էլ քուն մըտաւ թըմրած:
Կեղտոտ լամպարի աղօտ լուսի տակ,
Մէջ տեղը մի գաւ, աղքատ ու անկարգ
Սեղանի շուրջը, իրենց անկիւնում,
Երեք ծերունի զըրոյց են անում:
— Ցաւ-կըրակ դառաւ էս լակոտն, ախպէր,
Էլ բան չի աւում, հետը չի խօսւում,
Ուշքըն ու միտքը միշտ հեռու տեղեր՝
Չես էլ հասկանում, թէ ինչ է ուզում...
Հաւան չի կենում աշխարհքի կարգին.
Աւում է՝ մարդիկ բըռնութեան տակին...
Միտս էլ չի գալիս՝ ինչպէս է աւում.

Խըրթին, գըրաբառ բաներ է խօսում.—
Էս մէկն՝ էապէս է, էն մէկէլն՝ էնպէս...
Երկուսից մինը — կամ նրանք, կամ ես...»
Սո՛ւս կաց, ասում եմ, էդ ի՞նչ ես անում...
Թէ՝ դու հին մարդ ես, դու չես հասկանում...»
— Հա՛, հա, հա՛, հա՛ հա՛.
Ա՛յ քեզ նոր տըղայ...
Դէ բաժակըդ բե՛ր,
Մարտիրոս ախպէր,
Բեր մի մի բերան
կեանք խըմդրենք դըրան:
Էդ, ինչ որ դու ես խաբարը տալիս,
Մի ուրիշ տեսակ բան է դուրս գալիս...
Բարի յիշատակ լինի քեզ համար,
Տունըդ շէն պահի ու ծուխըդ վարար»:
Ա.ծում են կոնծում ընկեր ծերերը,
Բայց նոր է բացւել պատմութեան ծէրը:

— Հա՛, ախպէր ուրիշ բան է դուրս գալիս.
Ես էլ հէնց էդ եմ գըլխիս վայ տալիս,
Թէ սըրա վերջը ուր պիտի գընայ.
Տանից ու բանից եղած աւարա,
Աշխարհքի դարդը շալակն է առել՝
Ամենքի համար դարդաքաշ դառել...
Ընկեր թէ օտար, ծանօթ, անծանօթ —
Ով վեր է կենում — վազում է իր մօտ.
— Վահա՛ն, ի՞նչ անենք... Վահա՛ն, ո՞նց կենանք...
Վահա՛ն, ի՞նչ կասես... Վահա՛ն, ե՞րբ գընանք...»
Գըլխի՞ էք ընկնում՝ «էնտե՛ղ» են գընում...

«Էնտեղ» հօ գիտէ՞ք, լաւ էք իմանում...
— «Էնտե՛ղ», օ՛ֆ. «էնտե՛ղ»—
կըրակ է անթեղ...
Դէ բաժակըդ բեր,
Մարտիրոս ախպէր.
Արի՛, մի սըրտանց
կեանք խըմդրենք դըրանց...
Ջահել ժամանակ ինչքան եմ ես էլ
էդ ճամփի վըրայ անքուն երազել,
Ինչքան եմ ուզել թէ փախչեմ ծածուկ...
Հիմի դըրանցն էք թարիփ անում դուք...
Ուր գընան՝ Աստւած բաններըը աջի.
Ջարը խափանի, բարին առաջի...»
Ածում են կոնծում ընկեր ծերերը,
Բայց հեռու է դեռ պատմութեան ծէրը:

— Շընորհակալ եմ, ողջ կենաք, ախպէ՛ր:
Էս տեսակ մի բան չեմ տեսել ես դեռ.
Տեղ ունես թէ չէ՝ մըտիկ չեն տալիս,
Տասը գընում են՝ քըսանը գալիս,
Ինչ որ ճանկում են՝ ուտում են, թափում,
Ամբողջ գիշերը վիճում, աղմըկում.
Ամպի պէս ծըխով սենեակը լըցնում...
Էլ ոչ մահճակալ, ոչ տեղ են հարցնում.—
Մինը բարձրանում՝ սեղանին պառկում,
Միւսը յատակին լէն-արձակ ծրգւում...
Ոչ աղք են նայում, ոչ փոշի, ոչ ցեխ,
Պառկում են էստեղ, պառկում են էնտեղ...»
— Հա՛, հա՛, հա՛, հա՛. հա՛.

Թամաշա է հա...
Դէ բաժակըդ բե՛ր,
Մարտիրոս ախպէր.
Ա՛րի՛, մի սըրտանց
կեանք խընդրենք դրանց.
Շատ լաւ տըղերք են, ես ջու իմ հոգին,
Հաւան են կենում դըրանց արարքին.—
Մարդը նա հօ չի՝ հենց իրեն նայի,
Մարդը նա է, որ աշխարհքը շահի...
Տէր Աստուած պահի իրեն խընամում...»
Ա՛ծում են՝ վերջին բաժակն էլ քամում,
Չեն հասնում սակայն պատմութեան ծէրը,
Ու միշտ ընկնում է էգուց գիշերը:

Ե.

Դաստարկ փողոցով, բարձրը հազալով,
Ինքը իրեն հետ մենակ խօսելով,
Թըրը՛խկ հա չըրը՛խկ, գիշերւայ մըթնում
Մարտիրոս ախպէրն իր տունն է գընում:
Եւ ուշ գիշերով հասնում է նա տուն:
Ձըրագը վառ է, «նըրանք»էլ զարթուն,
Աղմըկում են դեռ կողքի սենեակում,
Էն նոր դուրս եկած երգերն են երգում:
Պառաւն էլ անքուն իրեն է մընում,
Ջեռները ծոցին դուրս ու տուն անում,
Ու մարդը շէմքից մըտած—չըմտած՝
Դիմացն է գալիս հանգած ու հատած:

— Բա՛, գիտե՞ս, ա՛յ մարդ, ինչ իմացայ ես,
Գիտե՞ս ինչից է մաշում երեխէս,—
Սիրո՛ւմ է մէկին...»
— Վա՛յ քու կարճ խելքին...
Ինչ սիրահարած բան է գիտես իսկի.— կարճամի՛տ յիմար,
Ազգի համար է միաք անում, ազգի,
Ուրիշի համար, խեղճերի համար...
Ինչ սիրահարած,
Ինչ ես հասկանում՝ ինչ կայ աշխարհքում.
Ականջդ մի բաց, տես ինչ են երգում...»

(Տղերքը երգում են)

Մեւ սարերի ետեւ նըրանք
Տառապում են խաւարում,
Լոյս են ուզում ու ազատ կեանք
Աստծու ազատ աշխարհում:
Կանցնենք թափով
Սարերն ամպոտ,
Կերթանք խըմբով
Մենք նըրանց մօտ:

Էյ, հերիք էր, չար բռնակալ,
Քանի՞ տանջես խեղճերին.
Խեղճը պիտի ապրի դարձեալ,
Վայն եկել է քու օրին...
. . . . . .

Ազատութեան որդիքն ենք մենք՝

Թրռած դէպի ապագան:
Էսպէս խըմբով սըլանում ենք,
Ո՞վ կը փակի մեր ճամփան.
Կայծակ կըլնենք
Կիջնենք ամպից.
Հեռո՛ւ ճամփից,
Հեռո՛ւ ճամփից...

Հէ՛յ, գալիս ենք, ո՛վ տանջւածներ,
Գալիս ենք մենք զինաւառ,
Եւ ազատ օր, ե՛ւ կեանք, ե՛ւ սէր —
Ողջ բերում ենք ձեզ համար:
. . . . . .

2.

Դողդոջ ու գունատ պառաւները լուռ
Ականջ են դընում: Սարսափ ու սարսուռ
Պատել է նրանց և սարսափահար,
Տեղները սառած, նայում են իրար,
Ինչ է կատարւում իրենց հին տանը,
Ինչ երգ է երգում իրենց Վահանը.
Ինչ երգ են երգում էս տղերքը նոր,
Ինչ երգ են երգում անգո՛ւսպ, ահաւոր...
Ամբողջ գիշերը կըրակի վըրի
Էն շամփրի նըման, անքուն ու ցաւոտ,
Պըտուտ են գալիս անկողնի միջին,
Պըտուտ են գալիս մինչեւ առաւօտ:

—Վահա՛ն ջան, Վահա՛ն, ի՞նչ երգեր են էդ.
Ինչ վըտանգաւոր երգեր էք երգում...
Էդ ո՞ւր ես ուզում գընաս դըրանց հետ...
Ի՞նչ է պատահել, ի՞նչ կայ էն երկրում...»
— Էհ, մայրի՛կ, դու էլ՝ ինչ երգեր են էդ...
Ջահել տըղերանց-երգեր են էլի...
Ջահել տըղերք ենք, միտքներըս թըռչում՝
Հազար մի հեռու տեղ են ման գալի...»
Ու ժողովները դարձան աղմըկոտ,
Աշնան հաւքերի էն տարմի նըման,
Որ ղըժվըժում է՝ չըւելուց առաջ
Դէպի արեւոտ կողմերը գարնան:
Մի օր էլ յանկարծ աղմուկը լըռեց,
Վահանը չեկաւ էն գիշերը տուն:
Ջրկայ միւս օրն էլ, չըկայ ոչ մի տեղ,
Ամեն հարց ու փորձ անցաւ ապարդիւն:
Եւ ահա նամակ կորած Վահանից:
Բանում են ըշտապ, դողդոջ ձեռքերով.
Ասում է՝ ի զուր էլ մի՛ փնտրէք ինձ,
Էլ մի՛ փնտրէք ինձ ու մընաք բարով...
—Դուք ինձ կեանք տըւիք, դուք ինձ մեծացրիք.
Բայց քանի էսքան ցաւ կայ աշխարհքում,
Իմ կեանքն իմը չի, իմ սիրտն իմը չի,
Չեմ կարող հանգիստ մընալ ձեր գըրկում:
Ցաւի աշխարհքում արնոտ ու ահեղ
Ուրիշ նոր կեանք է բացւել ինձ համար.
Ուրիշ հայրեր են մընում ինձ էնտեղ,
Ուրիշ մայրեր են կանչում անդադար...
Ներեցէ՛ք, որ ձեզ թողնում եմ էդպէս

Անկա՛ր, անխընդում, ծերութեան օրով,
Ներեցէ՛ք ձեր խենթ, խելագար որդուն,
Մոռացէ՛ք նըրան ու մընա՛ք բարով...»

է.

Որդու նամակը ծընկանը դըրած,
Աչքունքը ցամքած էն մաշած դէմքին,
Խաղաղ իրիկւան դէմ ու դէմն ահա
Նըստած է մայրը իր դատարկ շէմքին:
Կատուն է կողքին մըռռում միալար,
Փոքրիկ Սէրիկն էլ, կուչ եկած իր մօտ,
Էնպէս միամի՛տ, տխո՛ւր, դալկահար
Պըռըշկել է մօր դէմքին արցունքոտ:
Նայում է մայրը, նայում է հեռուն,
Էն անյայտ հեռուն, ահաւո՛ր, անվե՛րջ,
Ուր գընաց իրեն զաւակը սիրուն,
Գընաց «նրանց» մօտ, արեան ծովի մէջ..
—Ո՛վ քաղցրահայեաց սուրբ Աստուածածին,
Ո՛վ արագահաս գինւոր սուրբ Սարգիս,
Դուք օգնէ՛ք խեղճին, հասնէ՛ք նեղւածին,
Դուք տաք հովութիւն արար աշխարհքիս.
Բարեհաս լինէ՛ք «նրանց», ամենքին,
Ամենքի հետ էլ իմ ճար ու մէկին...»
Աղօթք է անում իր մէկի համար,
Աշխարհքի համար, ամենքի համար,
Մինչեւ թըռչում է ճաճանչը եռին,
Մինչեւ որ մութը առնում է գետին...

Ը.

Մըթնեց: Կըտրել է ամեն ձէն ու ծուն:
Գիշերւան կէս է, խաղաղ լըռութիւն:
Հին գինետանը, իրենց անկիւնում,
Երեք ծերունի զըրոյց են անում:
—Ի՞նչ ես միտք անում, Մարտիրոս ախպէր,
Լա՛ւ կըլնի վերջը... բաժակըդ մի բե՛ր...
Բե՛ր մի մի բերան
կեանք խընդրենք նըրան...
Տէր Աստուած բարի ճամփայ տայ իրեն,
Նըրա բաց աչքը լինի միշտ վըրէն...
Վատ բանի համար հօ չի գընացել...
Ի՞նչ ես մոլորւած նըստած մընացել,
Բաժակդ էլ լիքը առաջիդ է դեռ...
Վերցըրո՛ւ, խըմի՛ր, Մարտիրո՛ս ախպէր...»

ԵՐԿՈՒՄ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հէքեաթին ասում է, թէ՝ մի աշխարհքում
Բըխում էր առատ ջուրն անմահական,
Բայց ագահ վիշապն առաջը փակում,
Ծարաւ էր թողնում աշխարհքն աննըման:

Նա զոհ էր ուզում սիրուն աղջիկներ,
Որ ջուր բաց թողնի ծարաւ աշխարհքին,
Եւ, անմահութեան ջըրի փոխարէն,
Մարդիկ շատ դարեր արցունք խըմեցին:

Մինչեւ մի տղայ, Լոյս երկրից եկած,
Կըռւեց էն գերի աշխարհքի համար,
Յաղթեց, ազատեց աղբիւրը փակւած,
Տանջւող հոգիներ փըրկեց անհամար:

Ո՛չ, հէքեաթ չի սա լիքը հըրաշքով,
Եղած թէ չեղած մըթին աշխարհքում,
Ճըշգրիտ դէպք է սա տեսած իմ աչքով,
Եւ հէքեաթ չըկայ մեր անբախտ կեանքում...

Մեր երջանկութեան աղբիւրը փակած՝
Մեր վարդ քոյրերին յօշոտում է նա...
Ախ, ինչքան արիւն, արցունք է թափւած
Մեր սիրուն երկրի սարերի վըրայ...

Ա.

«Լո՛-լո՛, լո՛-լո՛, մերն են սարեր,
Ծաղկուտ սարեր Տարօնի,
Ծաղկուտ սարեր, ազատ օրեր,
Սէքն ու գըգւանք սիրունի...
Լո՛-լո՛, լո՛-լո՛»...

Գըլո՛ւխ տըւէք, գոռոզ սարե՛ր,
Անց է կենում Մուսաբէկ,
Գըլո՛ւխ տըւէք, վախկուտ հայե՛ր,
Ձընչին գիւղեր ու օբէք:
Ո՞ւր կայ ոսկի, ո՞ւր սիրուն կին,
Առաջ բերէք գըլխաբաց.
Ո՞վ կայ ընդդէմ նըրա կամքին,
Ո՞վ է կեանքից կըշտացած...
Մըշու երկրում թուր է զարկում

Դողում են Վան իր թաւիից,
Դողում են Վան, մինչ Արզըրում,
Ահեղ թաւիից, սարսաւիից...

ԳԼ.

Գըլո՛ւխ տըւէք, վախկո՛տ հայեր.
Զըրը՛նգ, եկաւ Մուսաբէկ.
— Հէյ, դո՛ւրս արի, քէշիշ բաբա՛.
Ո՞վ կայ տան մէջ, դո՛ւրս եկէք...»
Ու սըրահի կէսմութի մէջ
Գուճհուպ եկաւ քահանան,
Դողդոջելով, ծերուկ ու խեղճ,
Բըռնած սարսափն իր մահուան:
— Հաւա՞ն ես ինձ, քէշիշ բաբա՛,
Հապա նայիր մի վերես...»
— Աստւած է քեզ հաւնել, աղա՛,
Աստւած կեանք տայ ու արես:
— Դէ բե՛ր, հապա՛, որ հաւան ես,
Աղջիկըդ բեր, տուր ինձ կին.
Դէ՛հ, շո՛ւտ արա, քէշի՛շ բաբա,
Դուրս բեր սիրուն Շողիկին:»

Լուռ կանգնած է ծեր քահանան,
Դէմքը դեղին, միրքի պէս,
Ծիծաղո՛ւմ է լացի նըման,
Թէ լալիս է ժըպտերե՛ս...

—Հա՛, հա՛, հա՛, հա՛... հաւա՞ն չես ինձ...»
Խընդաց խումբը՝ հա՛, հա՛, հա՛...
Ու սոսկալի էն ծիծաղից
Սարսափն ընկաւ տան վըրա:

—Ո՛վ չի հաւան Մուսաբէկին...
Մի Մուսաբե՛կ—մի աշխարհք...
Բաղդաւոր ենք՝ ես... իմ որդին...
Ո՞վ է տեսել էսպէս փառք...
Միայն թէ, աղա՛, գութ արա մեզ,
Ժամանակ տուր երկու օր,
Որ պատրաստենք բէկին վայել.
Ոտիդ հողն ենք նորից նոր...»
— Մի երկու օ՛ր... բայց իմացի՛ր,
Ետ եմ գալու ես նորից.
Երկի՛նք թըռիր, գետի՛ն անցիր,
Չես ազատիլ իմ ձեռից...

«Լօ՛-լօ՛, լօ՛-լօ՛, մարն է Տարօն
Վայելքներով իր բոլոր...
Լօ՛-լօ՛, լօ՛-լօ՛...» Հանգաւ «լօ՛-լօ՛»-ն
Սարի ետեւ հեռաւոր:

4.

Ինչ է ղօղանջում զանգակը գուժկան,
Գիւղի զանգակը էս անվախտ ժամին.
Կարկո՞ւտ է գալիս մըթնած երկընքից,

Հրդեհ է ծլգել գիւղը թըշնամին...
— Ի՞նչ է պատահել, ծերունի տէրտէր,
Ինչ ես վրդովում էս յոգնած խաչխին:
— Եկէ՛ք, իմ որդի՛ք, եկէ՛ք, իմ որբեր.
Երկինքը փըլաւ իմ ճերմակ գըլխին...»

Ու լաց է լինում զանգակը ժամի,
Գալիս է կանգնում ամբողջ Տալուրիկ,
Ու ձայն է տալի, գոչում ծերունի
Իրենց քահանան ձայնով զարհուրիկ:
— Եկէ՛ք, ընկե՛ր-հարեւաննե՛ր,
Իմ Շողիկի հարանիքին.
Ծաղի՛կ բերէ՛ք ալ ու կարմիր
Իր անթառամ պըսակին...
Դուստր եմ պահել ես նազելի,
Սըրտիս խընդում, աչքիս լուս.
Քուրդը եկաւ դուստրըս խըլի,
Կեանքը խըլի ծերունուս:
Հայր էք դուք էլ, զաւակի տէր,
Մի ճար գըտէք իմ ցաւին...»
Ու ծերերը՝ չո՛ր, ալեհե՛ր,
Հառաչում են խըմբովին.
— Ափսո՛ս Շողիկ, սիրո՛ւն Շողիկ,

Մեր աչքի լուս, մեր ալ ծաղիկ...
Վա՛յ խե՛ղճ ծընող, ծեր քահանայ.
Քըրդի ճամփէն տատասկ դառնայ...»

Հընչում է դարձեալ զանգակը ժամի,

Կանչում է, գոչում հայրը ծերունի.
—Հասա՛ր ձրգէք հետու տեղեր,
Ազգ ու ազինք խմանան,
Դրրօշ բանան, զօրքեր կապեն,
Թող գա՛ն, հասնեն օգնութեան...»
Եւ զուր ծերունու աչքերը անզօր
Հրրաշք են փրնտրում մըշուշոտ հետուում,
Լուռ են ու դառարկ ճամփէքը բոլոր,
Փոշի չի երևում հայոց դաշտերում:
Լալիս է սակայն զանգակը կըրկին
Ու գոչում է ծերն առաւել ուժգին.
— Լըսի՛ր, Աստուա՛ծ, եթէ մի օր
Բոյր եմ խընկել քո անուան,
Թէ դու էլ ես ծե՛ր, ալեւո՛ր,
Ու գութ ունիս հայրական...»
Բայց ծածկում է դէմքը Աստուած՝
Հայից դարձած ու խըռով,
Սեւ սեւ գիշերն իջնում է ցած,
Լիքը անքուն ցաւերով...

Գ.

Հայի գիշե՛ր, հայի գիշե՛ր ,
Ցաւի անդունդ անյատակ...
— Աղջի՛կս, ինչո՞ւ չես քընում դեռ,
Ի՞նչ ես լալիս տեղի տակ:
— Ջ'իտեմ, մայրի՛կ, ինչու էսպէս
Քուն չի գալի էլ աչքիս.

Աչքըս քանի փակում եմ ես՝
Ջուրդն է կանգնած առաջիս...
— Քընի՛ր, բալա՛ս, մի՛ վախենար,
Աստւած կայ դեռ երկընքում.
Ջուրդ ու տաճիկ, զարկ ու աւար
Շատ ենք տեսել մեր կեանքում...
— Մայրի՛կ, մայրի՛կ, չե՞ս իմանում,
Ո՞վ է լալիս դուրսն անտէր...
Մայրի՛կ, մի տես՝ չի լուսանո՞ւմ...
Ախ, ինչ ծանր է էս գիշեր...
—Քնի՛ր, բալա՛ս, Որբն է մենակ
Իր Սրհակին որոնում,
Է՛, քեզ նըման, մի ժամանակ
Նա էլ աղջիկ է լինում,
Հաւանում է չար տաճիկը,
Գալիս եղբօրն ըսպանում,
Ձարը հատած հէգ աղջիկը
Աստծուն աղօթք է անում.
— Ո՛վ Տէր Աստւած, թեւեր տուր ինձ,
Թեթեւ թեւեր թռչունի,
Թըռչե՛մ, կորչե՛մ էս աշխարհքից,
Անգութ ձեռից դուշմանի...»
Էն օրւանից ման է գալի
Թեւեր առած, անդադար,
Կանչո՛ւմ, կանչո՛ւմ, ձէն է տալի
Իր Սրհակին ջրատար..
Քնի՛ր, բալա՛ս, Աստւած դեռ կայ,
Աղօթք ասա մըտքիդ մէջ,
Հիմի շուտով լիան էլ կը գայ,

Էս գիշերն էլ ունի վերջ...»
— Թրը՛խկ... Թրը՛խկ...
— Ով է ծեծում
Կէս գիշերին դուռն էդպէս...
— Թրը՛խկ, թրը՛խկ...
Հէյ, չե՞ս լսում,
Վեր կաց, տէրտէ՛ր, ներս թող մեզ...,»

Ու անվերջ քրրդի նըմման
Սարսափն յանկարծ ընկաւ տուն,
Տեղի տակին կրծիկ եկան
Մանուկները դէռ անքուն:
Մարեց մայրը լուսապատառ,
Աղջիկն հանգաւ մօր գըրկում,
Իսկ դուռն ուժգին ու անդադար
Չա՛ զարկում էին ու զարկում:

Էոյսը ծնօքին ծերը գունատ
Դողդողում է, երերում...
Չեռքը փակին տարաւ յանկարծ,
Դուռը բացուեց խաւարում,
Շառաչեցին, շողշողացին
Չէնքերն լուսումն էն աղօտ,
Ու զինավառ ներս խուժեցին
Երեք ջահել անծանօթ:
— Օրհնեա՛ ի Տէր, հայի լեզուով
Ողջունեցին ու մրտան.
Մութ խըրճիթը լըցուեց լուսով
Անակընկալ խընդութեան:

— Էսպէս անժամ, զարիք եղբա՛րք,
Մ՞ւսկից էք դուք գալիս ինձ...»
— Հեռու տեղից, Կովկասից...»
— Բայց մեր երկիր ամեն անկիւն
Մահւան երկիւղ ու վտանգ...»
— Դրրա համար մենք եկանք...»
-- Իսկ դուք չունէ՞ք ձեր աշխարհքում
Տուն, տեղ, ծընող, քոյր կամ կին...»
— Ունենք, թողինք ամենքին...»

Հայի գիշե՛ր, անքո՛ւն գիշեր,
Լի տանջանքով ու մոեթով,
Հայի գիշե՛ր, անհո՛ւն գիշեր,
Լի ահաւոր խորհուրդով...:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԹԸ

I

Առիւծ-Մրհերը, զարմով դիւցազուն
Քառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր ահեղ, ու նրբա օրով
Հաւքն էլ չէր անցնում Սասայ սարերով:
Սասայ սարերից շա՜տ ու շատ հեռու
Թընդում էր նրբա հրուչակն ահարկու,
Խօսւում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր—մի Առիւծ Մրհեր:

II

Էսպէս, ահաւոր առիւծի նման,
Սասայ սարերում նրատուած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ամ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.

Բայց հիմի, երբ որ եկաւ ծերացաւ,
Էն անահ սիրտը ներս սողաց մի ցաւ:
Սկըսաւ մըտածել դիւցազուն ծերը,
— Հասել են կեանքիս աշնան օրերը,
Շուտով սեւ հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծրխի պէս փառքը Մրհերի,
Կ'անցնեն ե՛ւ անուն, ե՛ւ սարսափ, ե՛ւ աճ,
Իմ անտէր ու որբ աշխարքի վըրա
Ոտի կը կանգնեն հազար քաջ ու դեւ...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման եւ՛
Իմ Թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք էր անում հըսկան ծերունի:

III

Մի օր էլ էն գորշ յօնքերը կիտած
Երբ միտք էր անում, երկնքից յանկարծ
Մի հուր-հըրեղէն յայտնըւեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին:
— Ողջո՛յն մեծազօր Սասմայ հըսկային,
Քու ձէնը հասաւ Աստծու գահին,
Ու շուտով նա քեզ մի զաւակ կըտայ:
Բայց լաւ իմանաս, լեռների՛ արքայ,
Որ օրը որ քեզ ժառանգ է տըւել,
Էն օր կը մեռնէք քու կինն էլ, դու էլ:
— Իր կամքը լինի, ասաւ Մրհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,

Մենք էլ նըրանով անմեռ կը մընանք:
Հըրեշտակն էատեղ ցոլացաւ նորից,
Ու էս երջանիկ աւետման օրից
Երբ իննը ամիս, իննը ժամն անցաւ,
Առիւծ-Մըհերը զաւակ ունեցաւ:
Դաւիթ անուանեց իրեն կորիւնին,
Կանչեց իր աչապէր Ջէնով Օհանին,
Երկիրն ու որդին աւանդեց նըրան,
Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան:

IV

Էս դարում Մըսըր անյաղթ ու հըզօր
Մըսրա-Մելիքն էր նըստած թագաւոր,
Հէնց որ իմացաւ՝ էլ Մըհեր չը կայ,
Վեր կացաւ կըռւով Սասունի վըրա:
Ջէնով Օհանը ահից „արսափած՝
Թըշնամու առաջն ելաւ գըլխաբաց,
Աղաչանք արաւ, ընկաւ ոտները.
— Դու եղիր, ասաւ, մեր գըլխի տէրը,
Ու քու շըւաքում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
— Չէ՛, ասաւ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դէմ:
Ու գընաց Օհան՝ բոլոր-բովանդակ

Սասունը բերաւ, քաշեց Թըրի տակ.
Մենակ Դաւիթը, ինչ արին-չարին,
Մօտ չեկաւ դուշման Մելիքի Թըրին:
Եկան քաշեցին՝ Թէ զօրով տանեն,
Թափ տըւաւ, մարդկանց գըցեց դէս ու դէն,
Փոքրիկ ճըկոյթը մի քարի առաւ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռաւ:
— Պէտք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,
Ասաւ Թագաւորն իրեն մեծերին:
— Թագաւո՛ր, ասին, դու էսքան հըզօր,
Թըրիդ տակին է ողջ Սասուն էսօր.
Ինչ պէտք է անի քեզ մի երեխայ,
Թէկուզ իր տեղով հէնց կըրակ դառնայ:
— Դուք գիտէք, ասաւ Մըսրայ Թագաւոր,
Բայց Թէ իմ գըլխին փորձանք գայ մի օր,
Էս օրը վրկայ,
Սըրանից կը գայ:

V

Էս որ պատահեց, մեր Դաւիթ հըսկան
Մի մանուկ էր դեռ եօթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նըրա համար Թէ մարդ,—Թէ մըժեղ:
Բայց վայ խեղճ որբին աշխարքի վըրա,
Թէկուզ Առիւծի կորիւն լինի նա:
Ջէնով Օհանին ունէր մի չար կին:
Մին-երկու լըռեց, մի օր էլ կարգին

Իրեն մարդու հետ սկըսաւ կըռւել.
— Ես մենակ հոգի, հազար ցաւի տէր:
Ինչ ես ուրիշի եթիմը բերել,
Նըստեցրել գրկիս պարապ հացակեր...
Հո՞ղեմ գլուխը... ես գերի հօ չե՞մ
Ամենքի քէֆի ետեւից թըռչեմ...
Մի կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
Գրնա, իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսաւ ողբալ ու կոծել,
Իր օրը սրգալ, իր բախտն անիծել,
Թէ անբախտ եղաւ աշխարքի միջում,
Ոչ մի տէր ունի, ոչ մարդն է խըղճում...
Գրնաց Օհանը երեխի ոտի
Մի զոյգ ոտնաման բերաւ երկաթի,
Երկաթի մի կոռ շալակին դըրած,
Ու արաւ Սասայ քաղքի գառնարած:

VI

Քըշեց գառները մեր հովիւ հըսկան,
Ելաւ Սասունի սարերն աննըման.
«Էյ ջան, սարե՛ր
Սասման սարե՛ր»...
Որ կանչեց, նըրա ձէնից ահաւոր
Դըղորդ-դըմբդըմբոցն ընկաւ սար ու ձոր,
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարէքար ընկան, դատարկուն եղան:
Դաւիթը ընկաւ նըրանց ետեւից,

Որին մի սարից, որին մի ձորից—
Աղէս, նապաստակ, գէլ, եղնիկ բըռնեց,
Հաւաքեց, բերաւ, գառներին խառնեց,
Իրիկուան քըշեց ողջ Սասայ քաղաք:
Կաղկանձ ու ոռնոց, աղմուկ, աղաղակ...
Քաղքըցիք յանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հըրէս անհամար գազան.

«Վայ, հարայ, փախէ՛ք...»
Մեծեր, երեխէք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած,

Որը տուն ընկաւ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դաւիթը եկաւ, կանգնեց մէյդանում.
— Վա՜հ, էս մարդիկը ինչ վաղ են քընում.

Հէ՛յ ուլաւէր, հէ՛յ գառնաւէր,
Ելէ՛ք, շուտով բացէք դրռներ.
Ով մինն ունէր—տասն եմ բերել,
Ով տասն ունէր—քըսանն արել...

Շուտով ելէ՛ք, եկէ՛ք, տարէ՛ք,
Ձեր գառն ու ուլ գոմերն արէք:

Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում.
Ինքն էլ մեկնըւեց քաղքի մէյդանում,

Գլուխը դրաւ մի քարի՝ մընաց
Ու մուշ-մուշ քընեց մինչեւ լուսաբաց:
Լուսին իշխաններ ելան միասին,
Գրնացին Զէնով Օհանին ասին.
—Տօ՛ Զէնով Օհան, տօ՛ մահի տարած,
Էս խեղճը բերիր, արիր գառնարած,
Ոչ գառն է ջոկում, ոչ գէլն ու աղէս,
Գազանով լցրեց մեր քաղաքն էսպէս.
Աստած կը սիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թէ չէ էս խա՛լխին լեղաճաք կանի:

VII

Ելաւ Օհանը, Դաւթի մօտ գընաց
— Հօրեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամա՛ց,
Ուլեր կը փախչեն:—Մին էլ էնտեղից
Մի բօզ նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծաւ յանկարծ:
Դաւիթն էր. ելաւ, ետեւից ընկած
Էն սարը քըշեց, ետ բերաւ էս ձոր,
Բերաւ, ուլերին խառնեց նորից նոր:
— Մ՛ֆ, ի՛նչ դըժար է, հօրեղբայր Օհան.
Աստած օխնել է էն սեւ-սեւ ուլեր,
Ամա բօզալուկ էս ուլեր, որ կան,
Փախչում են, ցըրւում ողջ սարերն ի վեր.
Էնքան եմ երեկ վազել, չարչարւե՛լ,
Մինչեւ հաւաքել ու տուն եմ բերե՛լ...
Նայեց Օհանը, որ Դաւթի հագին

Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն է մաշել, մինչ բուռն է հասել,
Մի օրւայ միջում էնքան է վազել:
— Դաւի՛թ ջան, ասաւ, չեմ թողնի էսպէս,
Բօզալուկ ուլեր չարչարում են քեզ.
Էգուց նախիրը կը տանես արօտ:
Ասաւ Օհանը ու միւս առաւօտ
Գընաց, նորից նոր մեր Դաւթի ուտի
Մի ջուխտ նոր տըրեխ քերաւ երկաթի,
Երկաթի մի կոռ հարիւր լըդրական
Ու շինեց Սասմայ քաղքի նախրապան:

VIII

Քըշեց նախիրը մեր նախրորդ հրսկան,
Ելաւ Սասունի սարերն աննըման:
— «Էյ, ջան սարեր,
Սասման սարե՛ր,
Ինչ անուշ է
Ձեր լանջն ի վեր»...
Որ կանչեց, նըրա ձէնից ահաւոր
Դըղորդ—դըմբդըմբոցն ընկաւ սար ու ձոր:
Վայրի գազաններ բրներից փախան,
Քարէքար ընկան, դաւարկուն եղան:
Դաւիթն էր. ընկաւ նրանց ետեւից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Դէլ, ինձ, առիւծ, արջ. վագըր բըռնեց,

Հաւաքեց, բերաւ, իր նախրին խառնեց
Ու առաջն արաւ դէպ Սասմայ քաղաք:
Ոռնո՜ց, մրոնչի՜ւն, աղմո՜ւկ, աղաղա՜կ...
Վախկոտ քաղքցիք մին էլ ի՞նչ տեսան,
Հէնց քաղքի վրայ անհամար գազան...
—«Վա՛յ, հարա՛յ, փախէ՛ք...»
Մեծեր, երեխէք
Սրրտաճաք եղած,
Գործները թողած
Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:
Դաւիթը եկաւ կանգնեց մէյդանում.
—Վա՜հ, էս քաղքցիք ի՞նչ վաղ են քընում:
Հէ՛յ կովատէր, հէ՛յ գոմշատէր,
Ելէ՛ք, շուտով բացէք դրռները,
Ով մինն ունէր—տասն եմ բերել,
Ով տասն ունէր—քրսանն արել:
Շուտով ելէ՛ք, եկէ՛ք, տարէ՛ք,
Ձեր եզն ու կով գոմերն արէք:
Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնեց քաղքի մէյդանում,
Գլուխը դրրաւ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչեւ լուսաբաց:
Լուսին իշխաններ ելան միասին,
Գընացին Ջէնով Օհանին ասին.
—Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախպէր,
Մեր եզն ու մեր կով թող մընան անտէր,
Միայն սրանից ազատ արա մեզ:
Ոչ արջն է ջոկում, ոչ գոմէշն ու եզ,

Մի օր էս քաղքին փորձանք կը բերի,
Արջերոց կանի, կըտայ կաւերի:

IX

Դաւիթ չըդառաւ, մի կըրակ դառաւ:
Ձարը կըտըրւած՝ Օհանը բերաւ
Նետ-աղեղ շինեց ու տըւաւ իրեն՝
Գընայ, որս անի սարերի վըրէն:
Դաւիթ նետ-աղեղն առաւ Օհանից,
Հեռացաւ Սասայ քաղքի սահմանից
Ու դառաւ որսկան: Գնաց, մի կորկում
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
Մըթանը գընում իրեն հօր ծանօթ
Աղքատ, անորդի մի ծեր կընկայ մօտ,
Վիշապի նըման, երկա՛ր, ահագին
Մեկնըւում, քընում կըրակի կողքին:
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձաւ,
Պառաւը վըրէն սաստիկ բարկացաւ՝
— Վա՛յ Դաւիթ, ասաւ, մահըս տանի քեզ,
Դո՞ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս:
Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին—
Ես եմ ու էն արտն Աստըծու տակին.
Ինչո՞ւ ես գընում, տափում, տըրորում,
Իմ ամբողջ տարւան ապրուստը կըտրում:
Թէ որսկան ես դու—նետ աղեղըդ ա՛ռ,
Ծըծմակայ գըլխից մինչեւ Սեղանասար
Ջու հէրը ձեռին մի աշխարհ ունէր,

Որսով մէջը լի որսի սար ունէր.
Եղնիկ կայ էնտեղ, այծեամ ու պախրա.
Կարո՞ղ ես—գընա, էնտեղ որս արա:
— Ի՞նչ ես, ա՛յ պառաւ, էլ ինձ անիծում.
Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լրսում:
Մ՚րտեղ է հապա սարը մեր որսի...
— Գընա՛, հօրեղբայրդ—Օհանը կասի:

X

Հօրեղբօր շէմքում միւս օրը ծէգին
Դաւիթը կանգնեց աղեղը ձեռքին:
—Հօրեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես ասել՝
Իմ հէրը որսի սար է ունեցել,
Այծեամ կայ էնտեղ, եղջերու, կրխտար.
Վէր կաց, հօրեղբա՛յր, տար ինձ որսասար:
— Վա՛յ, կանչեց Օհան, էդ քու խօսքը չէր,
Էդ ով քեզ ասաւ, լեզուն պապանձւէր:
Էն սարը, որդի՛, գընաց մեր ձեռից,
Էն սարի որսն էլ գընաց էն սարից,
Էլ չկան այծեամ, եղջերու, կրխտար:
Քանի լուսեղէն քու հէրը դեռ կար,
(Էյ գիդի օրեր—ո՛րտեղ էք կորել,)
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հէրը մեռաւ, Աստուած խըռովեց,
Մըսրայ թագաւոր զօրքեր ժողովեց,
Եկաւ, մեր երկիր քարուքանդ արաւ,
Էս սարի որսն էլ թալանեց, տարաւ.

Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալբաթ էսպէս էր գրած:
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըսրայ թագաւոր ծէնըդ կիմանայ...
—Մըսրայ թագաւոր ինձ ի՞նչ կանի որ...
Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրայ թագաւոր.
Մըսրայ թագաւոր թող Մըսըր կենայ,
Իմ հօր սարերում ի՞նչ գործ ունի նա...
Վեր կաց, հօրեղբա՛յր, նետ-աղեղդ առ,
Կապարճըդ կապի՛ր, գընանք որսասար:
Ելաւ Օհանը ճարը կըտըրած,
Գընացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.
Անտառը ջարդած, պարիսպն աւերած,
Բուրգերը արած գետնին հաւասար...

XI

Գիշերը հասաւ, մընացին էնտեղ:
Ջէնով Օհանն էր, իր նետն ու աղեղ
Դըրաւ գլխի տակ, հանգիստ խըռըմփաց.
Դաւիթը մընաց մըտքի ծովն ընկած:
Մին էլ նկատեց, որ մութը հեռւում
Մի թէժ, փայլփլուն կըրակ է վառւում:
Էն լուսը բըռնած՝
Վեր կացաւ, գընաց,
Գընաց ու գընա՛ց, բարձրացաւ մի սար,
Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար
Կիսից պատռւած,

Ու միջից վառած
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
Բարձրանում, իջնում ետ քարի վըրա:
Վար իջաւ Դաւիթ էնտեղից կըրկին,
Վար իջաւ, կանչեց Ջէնով Օհանին:
— Ե՛լ, հօրեղբա՛յր, քանի՞ քընես.
Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես:
Լուս է իջել բարձրը սարին,
Բարձրը սարին, մարմար քարին:
Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից.
Էն ի՞նչ լուս է բըխում քարից:
Ելաւ, խաչ քաշեց Օհաննն երեսին.
— Է՛յ, որդի, ասաւ, մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարութայ սարն է զօրաւոր:
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
Սաամայ ապաւէն, Սաամայ պահապան
Մեր սուրբ Տիրամօր վանքը Զարխափան:
Մըշտական, երբ որ կըռիւ էր գընում,
Էնտեղ էր քու հէրն իր աղօթքն անում:
Քու հէրը մեռաւ, Աստուած խըռովեց,
Մըսայ թագաւոր զօրքեր ժողովեց,
Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դաւիթը էս էլ երբ որ իմացաւ,
— Անո՛ւշ հօրեղբայր, հօրեղբա՛յր, ասաւ,
Որք եմ ու անտէր աշխարքի վըրա,

Հէր չունեմ՝ դու ինձ հէրութիւն արա՛:
Էլ չեմ իջնի ես Մարութայ սարից,
Մինչեւ չըշինեմ մեր վանքը նորից:
Քեզանից կուզեմ հինգհարիւր վարպետ,
Հինգհազար բանւոր մըշակ նըրանց հետ,
Որ գան՝ էս շաբաթ կանգնեն ու բանեն,
Առաջւան կարգով մեր վանքը շինեն:
Գընաց Օհանը ու բերաւ իր հետ
Հինգ հազար բանւոր, հինգհարիւր վարպետ:
Վարպետ ու բանւոր եկան կանգնեցին,
Զըրը խակ հա թըրը՛խակ, նորից շինեցին,
Առաջւան կարգով, փառքով փառաւոր
Բարձրը Մարութայ վանքը Տիրամօր:
Ցըրւած միաբանք ետ նորից եկան,
Նորից թընդացին աղօթք, շարական.
Ու երբ շէն արաւ հօր վանքը նորից,
Ցած իջաւ Դաւիթ Մարութայ սարից:

XIII

Համբաւը տարան Մըսրայ Մելիքին.
— Հապա՛ չես ասիլ՝ Դաւիթը կըրկին
Հօր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարւան խարջը չես առել:
Մելիք զայրացաւ.
— Գընացէ՛ք, ասաւ,
Բադին, Կոզբադին,
Սիւդին, Զարխադին,
Սասայ քար ու հող տակն ու վեր արէք,

Իմ օխտը տարւան խարաջը բերէք:
Քառասուն կոյս աղջիկ բերէք արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասունն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Իմ տանն ու դրան ղարաւաշ դառնան:
Ու Կոզբադին առաւ զօրքեր.
— Գըլխիս վըրա, ասաւ, իմ տէր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջընջեմ Հայոց ազգի:
Ասաւ, Մըսրայ աղջիկ ու կին
Պար բռնեցին ու երգեցին.
— Մեր Կոզբադին գընաց Սասուն,
Կանայք բերի քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով ոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան,
Ջա՛ն Կոզբադին, քաջ Կոզբադին,
Սասմայ Դաւթին զարկեց գետին:
Ու Կոզբադին փըքւած, ուռած,
— Շնորհակալ եմ, քոյրե՛ր, գոռաց,
Մինչեւ գալըս դեռ համբերէք,
Էն ժամանակ պիտի պարէք...

XIV

Էսպէս երգով,
Զօռով-զօրքով

Գոռ Կոզբադին մըտաւ Սասուն.
Օհան լըսեց՝ կապւեց լեզուն:
Աղ ու հացով.
Լաց ու թացով
Առաջն ելաւ,
Խընդիրք արաւ.
— Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Դառը դադած դեղին ոսկին,
Միայն թէ գըթա մեր խեղճ ազգին,
Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,
Վերեւ՝ Աստւած, ներքեւը՝ դու...
Ասաւ, բերաւ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման:
Ու Կոզբադին կանգնեց, ջոկեց,
Մարագն արաւ, դուռը փակեց,
Քառասուն կոյս աղջիկ, սիրուն արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին ղարաւաշ դառնան:
Դէզ-դէզ կիտեց դեղին ոսկին.
Սեւ սուգ կալաւ Հայոց ազգին:

XV

Հէյ, ո՞ւր ես, Դաւիթ, Հայոց պահապան,
Քարը պատրուի—դո՛ւրս արի մէյդան:
Քանդած հօր վանքը որ շինես նորից,
Ցած իջաւ Դաւիթ Մարութայ սարից,

Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտաւ,
Գընաց՝ պառաւի շաղգամը մըտաւ.
Պառաւն էր եկաւ՝ անէծք, աղաղակ.
— Վա՛յ, խելա՛ռ Դաւիթ, շաղգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցաւ ուտես, ասաւ,
Քու աչքն աշխարքում մենակ ինձ տեսաւ.
Կորեկըս արիր գետնին հաւասար,
Էս էր մընացել ձըմեռուան պաշար,
Էս էլ կըտրում ես,
Էլ ո՞նց ապրեմ ես:
Թէ կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ռ, գընա՛,
Քու հօր աշխարքին տիրութիւն արա՛,
Քու հօր գանձը կե՛ր,
Թողել ես անտէր,
Մըսրայ թագաւոր ղըրկել է՝ տանի:
— Էլ ինչ ես վըրէս բարկանում, նանի՛.
Էդ ինչ ես ասում, ես չեմ հասկանում,
Մըսրայ թագաւոր մեր ինչն է տանում...
Մըսրայ թագաւոր քու աչքն է հանում,
Դանդաղօշ Դաւիթ. ղըրկել է հըրէն,
Եկել են Սասմայ քաղաքի վըրէն
Բադին. Կոզբադին,
Սիւդին, Զարխադին,
Թալան են տալի բովանդակ Սասում.
Քառասուն բեռ ոսկի խարաջ են ուզում,
Քառասուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին ղարաւաշ դառնան:

— Ի՞նչ ես, ա՛յ պառաւ, էլ ինձ անիծում.
Ցոյց տուր մի տեսնեմ—ո՞րտեղ են ուզում:
— Մրտեղ են ուզո՜ւմ... Մահրս տանի քե՛զ.
Դո՛ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս...
Եկել ես՝ էստեղ չաղգամ ես լափում...
Ոսկին՝ Կոզբադին ձեր տանն է չափում,
Աղջիկները փըլեկ մարագն են լըցրած:
Շաղգամը թողեց Դաւիթ ու գընաց:
Տեսաւ՝ Կոզբադին իրենց տան միջին
Չափում է ոսկին թեղած առաջին,
Սիւդին, Չարխադին պարկերն են բըռնել,
Չէնով Օհանն էլ շըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
Տեսաւ, աչքերը արնով լըցւեցին:
—Վե՛ր կաց, Կոզբադին, հեռո՛ւ կանգնիր դու,
Իմ հօր ոսկին է — ես եմ չափելու:
— Կոզբադին ասաւ.— Է՛յ, Չէնով Օհան,
Կըտաս — տո՛ւր խարջը էս օխտը տարւան,
Թէ չէ՝ կը գընամ, միրուքըս վըկայ,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը գայ,
Ձեր Սասմայ երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բօստան կը ցանի:
— Կորէ՛ք, անզգամ դուք Մըսրայ շըներ,
Բա չէ՞ք իմացել դուք Սասմայ ծըռեր...
Մեռա՞ծ էք կարծում դուք մեզ, թէ՞ շըւաք,
Կուզէք մեր երկիր դընէք խարջի տա՛կ...
Բարկացաւ Դաւիթ, չափը շըպըրտեց,
Տըւաւ Կոզբադնի գլուխը ջարդեց,
Չափի փշրանքը պատն անցաւ, գընաց,

Մինչեւ օրս էլ դեռ գընում է թրուած:
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գընացին
Բադին, Կոզբադին,
Սիւդին, Զարխադին:

XVI

— Վա՛յ, վա՛յ, հօրեղբա՛յր, ինչ ասեմ ես քեզ.
Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դէզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի դրուան...
Հօրեղբայրն ասաւ. — Այ խեղճ, խելագար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցրը լինի աչքը մեզ վըրայ:
Զըտըւիր, հիմի որ զօրք առնի՝ գայ,
Սասմայ քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դէմը կերթայ, ո՞վ կըռիւ կանի:
— Դու կա՛ց, հօրեղբա՛յր, թող գայ, ե՛ս կերթամ,
կերթամ, ես նըրան պատասխան կըտամ:
Ու մութ մարագի դրուանը զարկեց.
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:
— Գընացէ՛ք, ասաւ, ազատ ապրեցէ՛ք.
Սասունցի Դաւթին արեւ խընդրեցէք:

XVII

Էսպէս ջարդւած, արիւնլըւայ

Փախան, ընկան հողը Մըսրայ
Բադին, Կոզբադին,
Սիւդին, Զարխադին:
Մըսրայ կանայք հեռւից տեսան,
Հեռւից տեսան, ուրախացան
Ու ծափ տըւին կըտերներին.
— Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կոզբադին գնաց Սասուն,
Կանայք բերաւ քառասուն-քառասուն,
Կարմիր կովեր բերաւ կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան...
Հէնց մօտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Ջրրքըջացին
Ու կանչեցին.
— Էյ, Կոզբադին մեծաբերան,
Էդ ո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըգաս փախած,
Հաստ գըլուխըդ կիսից ճըղած:
Էն դո՞ւ չասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բերնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր աւեր անեմ:
Գացիր Սասուն քանց գէլ գազան,
Ետ ես գալի քանց շուն վազան...
Ու Կոզբադին խիստ բարկացաւ.
— Սո՛ւս կացէք դուք, լըրբե՛ր, ասաւ.
Ձեր մարդիկն էք տեսել դուք դեռ,
Դուք չէք տեսել Սասմայ ծըռեր:

Սասայ ծըռեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի գերան.
Սասայ երկիր քար ու կապան,
Դըժար սարեր, ձոր ու ծապան.
Ներանց խոտեր — ինչպէս կեռ թուր,
Ձօրք ջարդեցին եռեք հարիւր...
Ասաւ ու էլ չառաւ դադար,
Վըռազ-վըռազ, գըլխապատառ
Վազեց իրեն թագաւորին:
Իընդաց թագւորն իր աթոռին:
— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կոզբադին,
Արժէ՝ կախեմ ես քու ճըտին
Մեր դուզդունի մեծ նըշանը —
Պարգեւ քու մեծ յաղթութեանը:
Ո՞ւր են, հապա առաջս բեր
Սասայ ոսկին ու աղջիկները:
Ասաւ Մելիք, ու Կոզբադին
Գըլուխ տըւաւ մինչեւ գետին.
— Ապրա՛ծ կենաս, մեծ թագաւոր,
Ձօռով փախայ ես ծիաւոր,
Ո՞նց բերէի Սասայ ոսկին:
Մի խենթ ծընուեց Հայոց ազգին,
Ոչ ահ գիտի, ոչ տէր ու մեծ,
Գըլուխս էսպէս տըւաւ, ջարդեց.
«Չե՛մ տալ, ասաւ, իմ հօր ոսկին:
Չե՛մ տալ կանայքն իմ հայ ազգին,
Սասայ երկիր ձեզ տեղ չըկայ...
Ջու թագաւոր, ապաւ, թո՛ղ գայ,
Թող գայ՝ ինձ հետ կըռիւ անի,

Թէ ղոչաղ է՝ զօռով տանի»:
Կատաղեց, փըրփրեց Մըսրայ թագաւոր.
— Կանչեցէ՛ք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեխ, անմօրուք,
Հազար հազար մարդ բեխը նոր ծըլած,
Հազար հազար մարդ նոր թախտից ելած,
Հազար հազար մարդ թուխ միրուքաւոր,
Հազար հազար մարդ սիպտակ ալեւոր,
Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,
Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն...
Կանչեցէ՛ք, թող գան, հագնեն զէ՛նք, զըրա՛հ,
Կըռիւ տի գընամ ես Դաւթի վըրա,
Սասունն աւերեմ,
Հեղհղեմ, բերեմ:

XVIII

Էսպէս անհամար զօրքեր հաւաքեց,
Եկաւ Սասմայ դաշտ, բանակը զարկեց
Ու ծանըր նըստեց Մըսրայ թագաւոր:
Էնքան ահագին բազմութիւնն էն օր
Բաթմանայ ջըրին եկաւ ու չոքեց,
Ով եկաւ, խըմեց —գետը ցամաքեց,
Սասմայ քաղաքում մընացին ծարաւ:
Ձէնով Օհանին զարմանքը տարաւ:
Քուրքը ուսն առաւ, սարը բարձրացաւ.
Սարը բարձրացաւ, տեսաւ, ինչ տեսաւ:

Ձերմակ վըրանից դաշտը ճերմակել,
Ասես՝ էն գիշեր ծրմեռը եկել,
Սպիտակ ծիւնով պատել էր Սասուն:
Լեղին ջուր կտրեց, կապ ընկաւ լեզուն,
Հարայ կանչելով. փախաւ, տուն ընկաւ.
— Վա՛յ, փախէ՛ք, եկա՛ւ... հա՛յ, հարա՛յ, եկաւ...
— Ի՞նչը, հօրեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն եկաւ...
— Ցաւն ու կըրակը Դաւթի պինչն եկաւ:
Մըսրայ թագաւոր ելել է, եկել,
Եկել, մեր դաշտին բանակ է զարկել.
Թիւ կայ աստղերին, թիւ չկայ զօրքին...
Վա՛յ մեր արեւին, վա՛յ մեր աշխարքին...
Ե՛կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք:
Ջոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցէ թէ գըթայ,
Մեզ սըրի չըտայ...
— Դու կա՛ց, հօրեղբա՛յր, դու դարդ մի՛ անիր.
Գրնա՛, քու օդում դու հանգիստ քընիր.
Հիմի ես կելնեմ, Սասմայ դաշտ կերթամ.
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ:
Ու գրնաց Դաւիթ ծանօթ պառաւին.
— Նանի ջա՛ն, ասաւ, ժանգոտած ու հին
Երկաթի կտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես չունես՝ հաւաքի՛ր, ինձ տուր,
Մի էշ էլ գըտիր, որ վըրէն նըստեմ,
Կըռիւ տի գրնամ Մըսրայ զօրքի դէմ:
— Վա՛յ, Դաւիթ, ասաւ, մահս տանի քեզ.
Դո՞ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս...
Քու հէրն ունէր կըռւի համար

Հըրեղէն ձի, ոսկի քամար,
Ծալ ծալ կապէն, գուռզը պողպատ,
Թամբ սադափէն, կուռ սաղաւարտ,
Խաչ պատրաստէին իր աջ բազկին,
Ձըրահ շապիկ, թուր-կէծակին,
Դու եկել ես, ա՛յ խեղճ ու ծուռ,
Ինձնից կուզես էշ ու շամփո՛ւր...
— Ամա՛ն, նանի՛, չեմ լըսել դեռ:
Ո՛ւր են հիմի իմ հօր գէնքեր:
— Հօրեղբօրըդ գընա հարցուր.
Ո՞ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:
Բան է, թէ որ չըտայ սիրով,
Աչքը հանիր՝ խըլիր զօռով:

XIX

Դաւիթ գընաց հօրեղբօր մօտ.
— Էյ հօրեղբայր, կանչեց հեռուտ,
Իմ հէրն ունէր կրուի համար
Հըրեղէն ձի, ոսկի քամար,
Ծալծալ կապէն, գուռզը պողպատ,
Թամբ սադափէն, կուռ սաղաւարտ,
Խաչ պատրաստէին իր աջ բազկին
Ձըրահ շապիկ, թուր կէծակին,
կրտաս —բեր տուր...»
— Վա՛յ, Դաւիթ ջա՛ն,
Ահից գոռաց Զէնով Օհան.
Ջու հօր մահւան տարուց—օրից

Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Ոչ սընդուկից Թուր-Կայծակին,
Զրահ շապիկ, ոսկի գօտին...
Ինձ թող, ամա՛ն, մի՛ սպանիր,
Կուզես—հըրէն, գրնա հանի՛ր:

XX

Հազաւ Դաւիթ զէնքն ու զրահ,
Կապեց գօտին, Թուր-Կէծակին,
Ինչն էլ իր յաղթ բազկի վըրա,
Ելաւ, հեծաւ Առիւծ հօր ձին,
Հօր ձին հեծաւ ու մըտրակեց.
Զէնով Օհան լալով երգեց.
—Ախո՛ս, հազա՛ր ափսոս հըրեղէն մեր ձին,
Ախ, հըրեղէն մեր ձին.
Ախո՛ս, հազա՛ր ափսոս մեր ոսկի գօտին,
Ախ, մեր ոսկի գօտին.
Ախո՛ս, թանկ կապէն, որ հագին տարաւ,
Ախ, որ հագին տարաւ...

Դաւիթ բարկացաւ,
Ձին քշեց, դարձաւ,
Օհանը վախեց.
Իր երգը փոխեց.
«Ախո՛ս, նորելուկ Դաւիթըս կորաւ,
Ախ, Դաւիթըս կորաւ:»

Էս որ իմացաւ,
Դաւիթ մեղմացաւ,
Իջաւ, Օհանի ձեռքը համբուրեց:
Ջինով Օհանն էլ, ինչպէս հայր ու մեծ,
Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դէպի Սասմայ դաշտ դըրաւ ճանապարհ:

XXI

Սասունցի Դաւթին ունէր մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ աժդահա:
Սա էլ իմացաւ համբաւը կըռւի,
Մի բարդի ուսին գալիս է ահա:
Գալիս է՝ հեռւից բարձըր գոռալով.
— Ինչ էք վէր եկել էս դաշտի միջում,
Քանի գըլխանի մարդիկ էք կամ ո՞վ,
Սասունցի Դաւթին որ չէք ճանաչում...
Բա չէ՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թեւաւոր,
Ջըքւեցէ՛ք, հիմի ուր որ է՝ կըգայ,
Եկել եմ սըրբեմ մէյդանը էսօր:

Ասաւ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դաւիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քնած էք՝ արթուն կացէ՛ք,
Ով արթուն էք՝ ելէ՛ք, կեցէ՛ք.

Ով կեցել էք՝ գէնք կապեցէք,
Չէ՛նք էք կապել՝ ձի թամբեցէք,
Չի էք թամբել՝ ելէ՛ք. հեծէ՛ք.
Ցետոյ չասէք՝, թէ մենք քընած—
Դաւիթ գող-գող եկաւ, գընաց...
Էսպէս կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից-կայծակ զարկի,
Մըսրայ զօրքի մէջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-կայծակին:

Ջարդեց, փըշրեց մինչեւ կէսօր.
Կէսօր արինն ելաւ հեղեղ,
Ջըշեց, տարաւ հազարաւոր
Մարդ ու դիակ ողջ միասեղ:

Կար զօրքի մէջ մի ալեւոր,
Աշխարք տեսած ու բանագէտ.
— Տըղե՛րք, ասաւ, ճամբայ տըւէք,
Գընամ խօսեմ ես Դաւթի հետ:

Գընաց՝ կանգնեց Դաւթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերունին.
—Դալար կենա՛, կուռըդ, ո՛վ քաջ,
Սուրըդ կըտրուկ միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խօսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՞ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քօղն երեսին
Նորապըսակ ջահիլ հարսին...

Թագաւորը զօռով-ֆըրով
Հաւաքել է, էստեղ բերել:
Խեղջ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագաւորն է քու թշնամին,
Կըռիւ ունես—իր հետ արա,
Հէ՞ր ես քաշում Թուր-Կայծակին
Էս անճարակ խալխի վըրա:

— Լաւ ես ասում դու, ծերունի՛,
Ասաւ Դաւիթն ալեւորին,
Բայց թագաւորն ո՞ւր է հիմի,
Որ սեւ կապեմ նըրա օրին:

—Մեծ վըրանում քընած է նա,
Էն, որ միջից ծուխը կելնի.
Էն ծուխն էլ հօ ծուխ չի որ կայ,
Գոլորշին է իր բերանի:

Ասին. դէպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դաւիթին իր ձին,
Քըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արաբներին.

—Ո՞ւր է, ասաւ, ի՛նչ է կորել,
Դուրս կանչեցէ՛ք, գայ ասպարէզ,
Թէ մահ չունի՝ մահ եմ բերել,
Դըրող չունի՝ գըրողն եմ ես...

—Մելիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պէտք է քընի.
Երեք օրն է դեռ անցկացել,
Հոգս օր էլ կայ, քունը առնի:

—Ի՛նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծոմն արիւնի,
Ինքը մըտել վըրանի մէջ՝
Օխտը օրով հանգիստ քընի՛...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրէք շո՛ւտ, դուրս գայ մէյդան,
Էնպէս դըրան ես քընացնեմ,
Որ չը զարթնի էլ յաւիտեան:

—Ելան՝ մարդիկ ճարահատած
Շամփուր դըրին թէժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մելքի բաց կըրնկին:

—Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիծւած լուի ծեռից,
Խոր մրոըննչաց հրսկան հանդարտ
Ու շուռ եկաւ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ գութանի
Խոփը՝ դըրին թէժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կէծկըծալի,
Շիկնած տըւին մերկ թիկունքին:

—Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրաւ մոծակներից.
Աչքը բացաւ հրսկան հանդարտ,
Ուզում էր ետ քընել նորից,

Տեսաւ՝ Դաւթին: Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մրոըննչալով,
Փըչեց վըրէն, որ թըռցընի
Էն աժդըհին մի փըչելով:

Տեսաւ, տեղից ժաժ չի գալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին:
Արնոտ աչքերն ըսպառնալի
Ցառեց խոժոռ Դաւթի աչքին:

Նայեց թէ չէ, զգաց՝ իր մէջ
Տասը գոմշի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խօսեց.

—Բարով, Դաւի՛թ, յոգնած ես դեռ.
Ե՛կ, մի նստի՛ր, խօսենք կարգին,
Ցետոյ դարձեալ կըռիւ կանենք,
Եթէ կըռիւ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառասուն գազ լաւր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վըրէն փափուկ խալի փըռել:

Ում որ յաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
Էն կորատեան հորի վըրա:

Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գընաց, նըստեց... ընկաւ հորը:
—Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրայ դաժան թագաւորը:

—Դէ, թող հիմի գընա՝ խաւար
Հորում փըթի, էնքան մընայ:
Ու ահագին մի ջաղացքար
Բերաւ, դըրաւ հորի վըրա:

XXII

Քընեց էն գիշեր Ջէնով Օհանը:
Գիշերն երազում երեւաց ծերին՝

Մըսրայ երկընքում արեւ ճառագած,
Սեւ ամպ էր պատել Սասայ սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռաւ տեղից:
—Վա՛յ, կընի՛կ, ասաւ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անփորձ Դաւիթը ձեռից,
Սեւ ամպ էր իջել Սասունի վըրա:

—Հողե՛մ գըլուխդ, ասաւ կընիկը,
Ո՛վ գիտի՝ Դաւիթն ո՛ւր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը ընկած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:

Ջընեց Օհանը: Վերկացաւ դարձեալ.
—Կընի՛կ, Դաւիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրայ վառ աստղը շողում էր պայծառ
Մեր աստղը հիւանդ ցոլքում դալկացած:

—Ի՞նչ եղաւ քեզ, մա՛րդ, գիշերւան կիսին.
Բարկացաւ վըրէն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուռ եկաւ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր աւելի ահեղ
Տեսաւ՝ երկընքի բարձրը կամարում
Վառւում էր Մըսրայ աստղը փառահեղ,
Սասայ աստղիկը սուզւեց խաւարում:

Զարթնեց վախեցած:—Տունըդ քանդւի, կի՛ն,
Ես ո՛նց լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորաւ մեն մենակ մեր ջահիլն անտէր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, զէնքերըս մի բե՛ր...

XXIII

Ելաւ Օհան, գոմը մըտաւ,
Չարկեց ճերմակ ձիու մէջքի՛ն.
—Էյ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռւին:

«Մինչեւ լուս կը հասցնեմ».
Ու ձին տըւաւ փորը գետին.
—Մէջքդ կոտրի՛, լուսն իմ՞նչ անեմ.
Լաշին հասնեմ ես թէ՞ նաշին:

Կարմիր ձիու մէջքին զարկեց.
Սա էլ երետ փորը գետին.
—Ջա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կը հասցընես Դաւթի կըռւին:

«Մի՛ ժամի մէջ, կարմիրն ասաւ,
Կը հասցընեմ Դաւթի կըռւին»:
—Լեղի դառնայ, սեւ մահ ու ցաւ,
Ինչ տըւել եմ քեզ՝ էն գարին:

Հերթը եկաւ սեւին հասաւ
Գետին չերետ փորը սեւ ձին:
—Էյ, ջան Սեւուկ, մինչ ե՞րբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռւին:

«Եթէ ամուր մէջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,

Մինչեւ մէկէլ ոտըդ շուռ տաս,
Կը հասցընեմ», ասաւ սեւ ձին։

XXIV

Սեւ ձին քաշեց ձէնով Օհան,
Ձախը դըրաւ ասպանդակին,
Աջն էլ մինչեւ շուռ տար վըրան,
Կանգնեց Սասմայ սարի գըլխին։

Տեսաւ՝ Դաւթի նըժոյգն անտէր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքեւ Մըսրայ զօրքը չոքած,
Ինչպէս անծէր ծըփուն մի ծով։

Օխտը գոմշի կաշի հագաւ,
Որ չըպատռի իրեն զօռից.
Կանգնեց Օհան, ամպի նըման
Գոռաց Սասմայ սարի ծէրից։

Հէյ-հէյ Դաւիթ, ո՞րտեղ ես դու.
Յիշի՛ր Խաչը աջ թեւի,
Սուրբ Տիրամօր անունը տո՛ւր,
Ո՛չ դուրս արի լոյն արեւի...»

Ձէնը գընաց, դըմբդըմբալով
Դաւթի ականջն ընկաւ հորում.
—Հա՛յ-հա՛յ, ասաւ, հօրեղբայրս է,
Սասմայ սարից ինձ է գոռում։

Ո՛վ Մարութայ Աստուածածին,
Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Չե՛զ եմ կանչել,—հասէ՛ք Դաւթին...
Կանչեց, տեղից ելաւ ոտքի,

Էնպէս զարկեց ջաղացքարին՝
Քարը եղաւ հազար կտոր,
Կտորները երկինք թըռան,
Ու գնում են մինչեւ էսօր:

Ելաւ հորից, կանգնեց ահեղ:
Սարսափ կալաւ դեւ Մելիքին:
—Դաւիթ ախպէր, ե՛կ դեռ էստեղ,
Սեղան նըստե՛նք, խօսենք կարգի՛ն...

—Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զէնքըդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս եկ մէյդան, կըռիւ անենք:

—Կըռիւ անենք, ասաւ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:
—Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դաւիթ
Գընաց, կեցաւ դաշտի միջին:

Ելաւ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբէքիր
Ու էնտեղից եկաւ կըրկին:

Երեք հազար լիդր էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Եկաւ, զարկեց. կորաւ փոշում
Ու երերաց երկրի գունդը:

Երկիր քանդուեց կամ ժաժք եղաւ,
Ասին մարդիկ շատ աշխարքում:
—Չէ՛, ասացին, արնի ծարաւ
Հըսկաներն են իրար զարկում:

—Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
Ասաւ Մելիք իրեն զօրքին:
—Կենդանի ե՛մ, ամպի տակից
Գոռաց Դաւիթ Մըսրա-Մելքին:

—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Տե՛ս, ո՛րտեղից հիմի կըգամ:
Ու վերկացաւ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծաւ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վերկացաւ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից:

Եկաւ, զարկեց. զարկի ձէնից
Մօտիկ մարդիկ ողջ խըլացան:
—Գընաց Դաւիթ Սասմայ տանից,
Գուժեց գոռոզ Մըսրայ արքան:

—Կենդանի՜ եմ, կանչեց Դաւիթ,
Մին էլ արի՜—հերթն ինձ հասաւ:
—Հա՛յ-հա՛յ, մօտիկ տեղից եկայ,
Կանչեց Մելիք ու վերկացաւ:

Երրորդ անգամ հեծաւ իր ձին,
Գընաց մինչեւ հողը Մըսրայ,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, եկաւ Դաւթի վըրա:

Եկաւ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոշին ելաւ Սասմայ դաշտից,
Բըռնեց երեան արեգական:

Երեք գիշեր ու երեք օր
Փոշին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բօթը տըւին Դաւթի մահւան:

Երբ որ անցաւ երեք օրը,
Էն ամպի պէս կանգնած փոշում
Կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը,
Գըրգուռ սարը մէգ-մըշուշում:

—Մելի՛ք, ասաւ, ո՞ւմն է հերթը:
Սարսափ կալաւ գոռ Մելիքին,
Մահւան դողը ընկաւ սիրտը
Ու տապ արաւ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
Վըրէն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռնչալով ելաւ տեղից
Էն առիւծի առիւծ որդին,
Իր ծին հեծաւ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

Առաջ վազեց մազերն արծակ
Մելքի պառաւ մայրը ջադու.
—Դաւիթ, մազըս ա՛ռ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ի՛նձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ Թուրը քաշեց.
Էս անգամ էլ եկաւ քուրը.
—Դաւիթ, եթէ կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ երկրորդ Թուրը...

Վերջին զարկի ժամը հասաւ,
Ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
—Էս մի զարկն ու Աստուած, ասաւ,
Էլ մարդ չըգայ, պէտք է որ տամ:

Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
Թըռաւ, ցոլաց Դաւթի հուր ծին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջաւ Թուր-Կայծակին:

Անցաւ քառասուն գոմշի կաշին,
Անցաւ քառասուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրէշին,
Օխտը գազ էլ դէնը գընաց:

—կենդանի՛ եմ, մին էլ արի՛,
Գոռաց Մելիք հորի տակից:
Դաւիթ լըսեց, շատ զարմացաւ
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

—Մելի՛ք, ասաւ, թա՛փ տուր մի քեզ:
Ու թափ տըւաւ Մելիքն իրեն,
Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէան ու միւսը դէն:

Էս որ տեսաւ Մըւրայ բանակ,
Ջուր կըտրըւեց ահ ու վախից:
Դաւիթ կանչեց.—Մի՛ վախեննաք,
Ակա՛նջ արէք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչպար մարդիկ, ասաւ,
Ջուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցաւ,
Հազար ու մի հոգսեր ունէք:

Ինչ էք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Ջէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Զանծրացե՞լ էք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կեանքից,
Թէ՞ զըզուել էք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձէ՛ք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրայ.
Բայց թէ մին էլ զէնք ու զօռով
Վեր էք կացել դուք մեզ վըրայ

Հորում լինեն քառասուն գազ խոր
Թէ ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դէմ, ինչպէս այսօր,
Սասմայ Դաւիթ, Թուր-Կայծակին:

Էն ժամանակ Աստուած գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թէ դուք, որ մեզ արիք դուշման..,»

1902

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱԾՈՒՄԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հէ՛յ, պարոններ, ականջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,
Լաւ ուշ դրէք իմ խաղին:

Մենք ամենքըս հիւր ենք կեանքում
Մեր ծնընդեան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խընդում,
Գեղեցկութիւն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛ւ իմացէք,
Որ խօսւում է դարէդար,
Երնէ՛կ նրրան, որ իր գործով
Կապրի անվերջ. անդադար:

Ջարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անէ՛ծք նրրա չար գործքին,
Որդիդ լինի թէ հէրն ու մէր,
Թէ մուրազով սիրած կին:

Ես լաւութեան խօսքն եմ ասում,
Որ ժրպտում է մեր սրտին.
Ո՞վ չի սիրում, թէկուզ դուշման,
Լաւ արարքը, լաւ մարդին:

Էյ, լաւ կենաք, ականջ արէք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խօսքըս, տեսէք, ուր է գնում,
Քաջ որսկանի գիւլլի պէս:

I

Նադիր Շահը զօրք հաւաքեց,
Զօրք հաւաքեց անհամար,
Եկաւ Թըմկայ բերդը պատեց,
Ինչպէս գիշերն էն խաւար:

—Հէյ, քաջ Թաթուլ, կանչեց Շահը,
Անմա՞հ էիր քեզ կարծում.
Ե՛կ, բերել եմ ես քու մահը,
Ինչ ես թառել ամրոցում:

—Մի՛ պարծենայ, գոռոզ Նադիր,
Պատասխանեց Էն հրսկան.
Գլխովը շա՜տ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կայ անսասան.

Ասաւ, կանչեց իր քաջերին,
Թուրը կապեց հասլունի,
Թրռաւ, հեծաւ նըժոյգ իր ձին,
Դաշտը իջաւ արիւնի:

Ու քառասուն օր, քառասուն գիշեր
Կռիւ տըւին անդադար,
Ընկան քաջեր, անթիւ քաջեր,
Բերդի գլխին հաւասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուլն անյաղթ, աննըկուն,
Զօրք ու բաբան խորտակել են,
Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, յաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է Էնտեղ կինը,
Ջահել կինը սեւաչեայ:

II

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թէ աշուղն էլ ունենար,
Առանց զէնքի,
Առանց զօրքի
Շահերի դէմ կը գընար:

Սիրոյ հընոց
Կրակ ու բոց
Էնպէս աչքեր թէ ժըպտան,
Մարդու համար
Օրւայ պէս վառ
Գիշերները լոյս կը տան:

Վարդի թերթեր
Էնպէս շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն,
Էլ քեզ ոչ Շահ,
Ոչ ահ ու մահ,
Ոչ զէնք ու զօրք կը յաղթեն:

III

Ու կըռւի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրուհի.
Ներան՝ իր տեսքով, հասակով, ասին,

Չի հասնի չըքնաղ հուրին Իրանի:
Ծով են աչքերը Զաւախքի դըստեր
Ու կորչում է մարդ նըրա հայեացքում,
Ճակատը ճերմակ էն ձիւնից էլ դեռ,
Որ բորբոր Աբուլի գագաթն է ծածկում,
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրուն է՝ հարբած էն հըսկան,
Նըրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առիւծի նըման:
Թէ տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին,
Թաթուլն էլ անզօր կընկնի ոտիդ տակ,
Հանգիստ կը տիրես եւ Թըմուկ բերդին,
Որ չես կարենում էսքան ժամանակ:

IV

Էսպէս է ասել հընուց էտ մասին
Ֆարսի բիւլբիւլը, անմահ Ֆիրդուսին.
Ինչը կը յաղթի կեանքում հերոսին,
Թէ չը լինին
կինն ու գինին:

Արեւի նման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպէս սար.
Ո՛վ կանի նըրան գետնին հաւասար,
Թէ չը լինին
կինն ու գինի:

Պարում է ասես կըռիւ գընալիս,
Ո՛վ ցած կը բերի նըրան թըռչելիս,
թէ չը լինին
կինն ու գինին:

Թէկուզ եւ արար աշխարհ գայ վըրան,
կերթայ դէմ ու դէմ. տուր չի տալ իրան,
Ռուստէմ Զալն էլ չի յաղթիլ նըրան,
թէ չը լինին
կինն ու գինին:

V

Ու ղըրկեց Շահը իր թովիչ երգչին.
Գընա տե՛ս, ասաւ, Թըմկայ տիրուհուն,
Երգի՛ իմ սէրը նըրա առաջին,
Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:

Խոստացի նրան իմ ոսկի գահը,
Խոստացի նրան ամե՛ն, ամեն բան,
Ինչ որ կարող է խոստանալ Շահը,
Երկրակալ Շահը իր սիրած կընկան

Ուր ահեղ կըռւով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ.
Եւ ահա մի օր ծեր, թափառական
Մի աղքատ աշուղ մըտաւ Թմկաբերդ:

VI

Գոռում են, դողում Թըմկայ ձորերը.
Կանգնած է Թաթուլ Շահի յանդիման.
Զարկում են, զարկւում դուշման զօրքերը,
Արիւնը հոսում էն Քըռի նման:

Զարկում են, զարկւում դուշման զօրքերը,
Արիւնը հոսում էն Քըռի նման.
Երգում է աշուղն իր Շահի ոէրը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ Թըմկայ տիրուհին.
Եւ վըրդովում են իր միտքը թագուն
Դաւաճան գործի ամօթը խորին
Եւ արքայական փառքն ու մեծութիւն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Ա՛յ նազանի աննըման.
Նայի Շահին, իրեն զօրքին,
Աշխարհքի տէրն անսահման...

Մեզ պէս տըկար մարդ է նա էլ
Սիրուններին միշտ գերի.
Քու ճակատին թագ է վայել,
Լինիս շքե՛ղ թագուհի...

Լըսում է չքնաղ Թըմկայ տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից.
Ու դարձաւ նա լո՛ւռ, դալո՛ւկ, մըտախո՛հ,
Ու քունը փախաւ սիրուն աչքերից...

VII

Դարձաւ իր կըռւից իշխան Թաֆուլը,
Դարձաւ յաղթական իրեն զօրքի հետ,
Սըրբեց, պատեանը դըրաւ կնռ թուրը,
Ցընծուքեան ձայնից դողաց Թըմկաբերդ:

Խընջոյք է սարքել Թըմկայ տիրուհին,
Ցերեկ է արել խաւար գիշերը.
Հեղեղի նըման հոսում է գինին,
Ու քէֆ է անում Ջաւախքի տէրը:

Պըտոյտ է գալի չըքնաղ տիրուհին,
Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,
Յորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակները քամեն:

— Հապա լըցրէ՛ք, իմ քաջ հիւրեր,
Բաժակներըդ լիուլի,
Խըմենք—Աստուած կըտրուկ անի
Թուրը իմ քաջ Թաֆուլի:

—Էյ, Տէր Աստած կըտրուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նըրա շուքը միշտ հանապազ
Մեր գլխիցը անպակաս:

Ու թընդում է թըմուկ բերդը
Էն աղմուկից խընդութեան,
Որտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով յաղթական:

—Էն մըթին ամպից արծիւն է իջնում,
Սարի արծիւը շեշտակի թափով:
—Էն Թըմկայ բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

—Էն Թըմկայ ձորում սեւ ամպն է գոռում,
Էն շանթն է ճայթում էնպէս ահարկու:
—Էն Թըմկայ ձորում Թաթուլն է կըռւում,
Էն թուրն է շաչում էնպէս ահարկու:

Ինչ սարի արծիւ կը հասնի քաջին,
Ինչ Շահ կը կանգնի նըրա առաջին:

Ու չի դադարում երգի հետ վարար
Կախեթի գինին խելագար հոսել,
Խըմում են տիկնոջ թանգ կեանքի համար,
Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել:

Խրմում են կըռւող քաջերի փառքին,
Որ կըռւի դաշտում կեանք չեն խընայում,
Եւ ընկածների սուրբ յիշատակին,
Որ երկընքից են այժմ իրենց նայում...

Պըտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,
Յորդորում, խրնդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

—Օ՜ֆ, տիրուհի, Աստած վկայ,
Էլ չենք կարող մենք խըմել.
Էլ ուժ չը կայ, էլ տեղ չը կայ,
Շատ ենք խըմել ու յոգնել...

Ու հանգչում է Թըմուկ բերդը,
Պապանձում է ու մարում,
Հարբած, յոգնած տէրն ու զօրքը
Մըրափում են խաւարում:

VIII

Լուռ ու խաւարչտին կամարների տակ,
Յոգնած ու քընած բազմութեան վըրով
Թըռչում են, թըռչո՛ւմ, սեւ, չարագուշակ
Երազներն ահեղ անվերջ խըմբերով:

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը,
Որ վիշապ օձը եկել է ահա,
Եկել փաթաթել, իր բերդը պատել,
Գլուխը դրել ետ պոչի վրա:

Ու բարձրացնում է հրէշն ահռելի,
Իրեն գլուխը բարձրացնում է վեր,
Բարձրացնում մինչեւ բարձունքը բերդի,
Մինչեւ Թաթուլի պալատն ու տրներ:

Պառկած է իբրեւ Թաթուլ իշխանը
Նազելի կընոջ գլուխն իր կրծքին,
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
Թո՛ղ, որ սպանեմ ես էտ հրէշին:

Էսպէս է ասում Թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում է յանկարծ,
Իրեն սիրելի կընոջ գլխի տեղ
Օձի գլուխն է կրծքին ծանրացած...

IX

Էյ, հրսկեցէ՛ք, ի՞նչ էք քընում,
Քաջ զինուորներ Թաթուլի.
Ո՞վ է, տեսէք, տանջւում մրմնում,
Քուն չի աչքին մօտ գալի:

Ջը լինի թէ յաղթահարւած,
ձարը հատած թըշնամին
Դաւ է դնում մութն ու մեռած
կէս գիշերւայ էս ժամին:

Վէ՛ր կացէք, վէ՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գընում ու գալի.
Հէյ, զարթնեցէ՛ք, առիւծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի:

Վէ՛ր կացէք, վէ՛ր, հարբեցրել է
Իր յաղթական հիւրերին.
Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դաւաճան տիրուհին:

Դա՛ւ... դա՛ւ... ելէ՛ք... կոչնակ... պահնակ...
Չէ՛նք առէք շո՛ւտ... ձի հեծէ՛ք, ձի՛...
Ձըռընչում են, դըղըրդում են
Դարպասները երկաթի...

X

Բաց արաւ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վըրա, Ջաւախքի վըրա,
Աւերակ բերդին, սեւ ամպի նըման,
Ծուխն ու թըշնամին չոքել են ահա:

Յաղթութեան փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի եւ զօրքերն եւ տէր,
Ու յաւիտեան էլ մընացին քընած,
Դաւին անտեղեակ, ցաւին անտարբեր:

Նըստած է Շահը. Նըրա առաջին
Ահա իրիկւան քէֆի սեղանը.
Նայում է Շահը անտէր գահոյքին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըկայ ոչ մի բան
Ու մի՛ հաւատալ երբէք ոչ մէկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ յաղթութեան,
Ոչ սիրած կնգայ տըւած բուժակին...

Ու լի դառնութեամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն Թըմկայ տիրուհուն.
—Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սեւաչեայ,
Միթէ Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

—Քաջ էր ու սիրուն քեզնից առաւել.
Մի բարձր ու ազնիւ տղամարդ էր նա.
Կնոջ մատնութեամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կեանքում երբէք խաբեբայ...

Էսպէս տիկինը տըւաւ պատասխան.
Անհուն ցաւումից մըռընչաց Շահը.
—Հէյ, դահիճ, գոռաց գազանի նըման,
Դահիճը իսկոյն մըտաւ սրահը:

XI

Դահիճն եկաւ ոտից գլուխ
Կարմիր հագած ու արիւն,
Ու դուրս տարան իր պալատից
Թրմկայ չըքնաղ տիրուհուն:

Տարան անտակ էն ժէռ քարից,
Որ կանգնած է մինչ էսօր,
Էն ահաւոր քարի ծէրից
Գլորեցին դէպի ծոր:

Գէլ ու աղէս եկան հանդից
Ագահ սիրտը լափեցին,
Ցին ու ագռաւ իջան ամպից,
Սեւ աչքերը հանեցին:

Անցաւ անտես ու աննըման
Էն սիրունը աշխարհից,
Ինչպէս ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկիլ էլ նորից:

Անցաւ գալում էն մեծ արքան
Իրեն փառքով ու զօրքով,
Անցաւ Թաթուլն էն յաղթական
Ու իր քաջերն էն կարգով:

Ու նրանցից մեկնակ անմեռ
Էս զրույցը հասաւ մեզ,
Որ մեզանից յետոյ էլ դեռ
Պէտք է խօսւի միշտ էապէս:

XII

Հէ՛յ, պարոններ, ականջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,
Լաւ ուշ դրէք իմ խաղին:

Ամենքս էապէս հիւր ենք կեանքում
Մեր ծնընդեան փուչ օրից,
Հերթով գալիս անցք ենք կենում
Էս անցաւոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խօսւում լաւ ու վատ.
Ախ, երանի՝ ով մարդ կը գայ
Ու մարդ կերթայ անարատ:

ՁՄԵՌՈՒԱՑ ԽՐԻԱՈՒՆԸ

Հողմը մէգով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձեան,
Մին մանկան պէս լաց է լինում,
Մին ոռնում է զերթ գազան:
Մին վայրենի սուլում պէս պէս,
Աղմըկում է տանիքում,
Մին՝ ուշացած ճամբորդ ասես՝
Լուսամուտն է նա թակում:
Մեր խրճիթը աղքատ ու հին,
Ե՛ւ մըթին է ե՛ւ տրխուր.
— Ի՞նչ ես նրատել պատի տակին,
Իմ պառաւըս. էդպէս լուռ:
Ցոգնել ես դու փոթորիկի
Ոռնոցներից խելագար,
Թէ՞ նիրհում ես քո իլիկի
Բըզզոցի տակ միալար:
Արի խըմենք, բարի ընկեր

Իմ սեւ ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սիրտներըս բաց կը լինի:
Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ
Հաւքը ծովի էն ափին,
Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ
Ջուրը գնում մինչ արփին:
Հողմը մէգով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձեան,
Մին՝ մանկան պէս լաց է լինում,
Մին՝ ոռնում է գերթ գազան:
—Արի խմենք, բարի ընկեր
Իմ սեւ ջահիլ օրերի,
Խըմենք դարդից. բաժակըդ բեր,
Սիրտներըս բաց կը լինի:

ՋՐԱՀԵԳԸ

Պուշկինից

Ներս վազեցին մանուկները
Ու կանչում են հօրն ըշտապ.
—Ա՛պի, ա՛պի, ե՛կ մեր թոռը
Մեռել հանեց գետի ափ:
—Սուտ էք ասում,
Շա՛ն լակոտներ,

Գոռաց հայրը ահաբեկ.
Ըսպասեցէք դուք հալա դեռ,
Մեռելն յետոյ կը տեսնէք:
Դիւան կը գայ,
Պատասխան տուր.

Ցաւի միջում կը մընամ.
Հընար չը կայ, բե՛ր, ա՛յ կնիկ,
Շորերս տուր, մի գնամ:
—Ո՞ւր է մեռելն: Ա՛յ, ա՛պի, ա՛յ».

Ճիշտ որ գետի հզերքին,
Թաց թոռի մօտ, գետնի վրրա,
Տարածւած էր մի մարմին:
Ջարհուրելի դիակն ուռել,
Կապրտել է այլանդակ:
Արդեօք տանջւած մի թշւառ էր
Հանգիստ գըտած ջրի տակ,
Մի գետակուր ձկնո՞րս էր էն,
Թէ՞ գինեմոլ մի ջահել,
Թէ՞ անգգոյշ վաճառական
Հարամու էր պատահել...
Ընչի՞ն է պէտք... աչք ածելով
Հշտապում է գիւղացին,
Ոտից բռնած, ետ քարշ տալով,
Ջուրն է տանում խեղդւածին:
Ու թիակով գետի եզրից
Ջուրը հըրեց նա նըրան:
Ու դիակը գընաց՝ նորից
Փընտռի խաչ ու գերեզման:

Մեռելն երկար ջրի միջին,
Ցած էր իջնում ճօճելով
Աչքով ճամփեց մեր գիւղացին
Ու տուն դարձաւ կանչելով.
—Դէսը կորէք, ա՛յ լակոտներ
Եկէ՛ք, բան տամ ձեզ, տանեմ,
Ամա թէ որ ձէն էք հանել,
Հոգիներդ կը հանեմ:

Գիշերն ուժգին բուք վերկացաւ,
Գետն ելնում է, որոտում...
Մարխը արդէն էրեց, հանգաւ
Լուռ ու ծըխոտ խըրճիթում:
Ողջ քընած են: Անքուն պառկած
Միտք է անում գիւղացին...
Բուքն ոռնում է... մին էլ յանկարծ
Լուսամուտը բախեցին...

—Ո՞վ ես:—Ներս թող,
Ա՛յ տանտէր, նե՛րս...

—Ա՛յ, ներս ու քեզ չոռ ու ցաւ.
Ինչ ես շրջում կայէնի պէս,
Ո՞ր սատանէն քեզ բերաւ:
Ինչ անեմ քեզ, ասա՛, հիմի,
Տեղըս նեղ է, տունը մութ:

Ու ծոյլ ձեռքով, տրրտընջալով
Բաց է անում լուսամուտ:

Ցոլում էր լոյսն ամպի տակից.
Ահա՛ կանգնած... մի մերկ մարդ

Ջուր է հոսում նըրա միրքից,
Բաց են աչքերն ու անթարթ:
Կախ են ընկած բաղուկները,
Ողջ կարկամած սոսկալի,
Ուռած մարմնին քառշանքները
Կըպած՝ սեւին են տալի...

Ահից մարեց՝ ճանաչելով
Իր մերկ հիւրին նա յանկարծ.
Փեղկը խփեց ու դողալով
—Ա՛յ դու ճաքես, քըրթմընջաց:
Ամբոխեցին մտքերը մութ
Մինչեւ լոյսը նա դողում,
Մինչեւ լոյսը լուսամուտ
Բախում էին ու բախում...

Ամբոխն ահեղ զրոյց ունի,
Թէ այս դէպքից գիւղացին
Ըսպասում է ամեն տարի
Միշտ նոյն օրը խեղդւածին:
Խառնւում է օրն առաւօտից,
Գիշեր գալի բուք ու մութ,
Ու խեղդւածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ:

ԹԻՒԱԿԵՐՏԻՑ

Մի երգ կայ մանկուց, մի երգ կայ մանկուց
Դեռ իմ ականջում.
Ախ, ինչքան հիմի, ախ, ինչքան հիմի
Հեռու է հընչում:

Ճախրում էր ծիծառ, ճախրում էր ծիծառ
Գարունը բերում,
Աշխարհը պայծառ, աշխարհքը պայծառ
Ծաղկում էր, բուրում:

Հայրենի դաշտե՛ր, հայրենի դաշտե՛ր,
Ախ, ո՞նց եմ ուզում
Ձեր գըրկում մին էլ, ձեր գըրկում մին էլ
Թըռչեմ երազում:

Երբոր հեռացայ, երբոր հեռացայ
Լիքն էր ողջ ու շէն,
Երբոր ետ դարձայ, երբոր ետ դարձայ՝
Դաւարկ էր արդէն:

Գալու է գարուն, գալու է գարուն—
Աշխարհ լըցւելու,
Բայց իմ սիրտն, աւա՛ղ, բայց իմ սիրտն, աւա՛ղ,
Էլ չի բացուելու:

Եւ ոչ մի ծիծառ, եւ ոչ մի ծիծառ
Չի բերի իր հետ,
Ինչ որ կորցըրի անդարձ կորցըրի
Անցած երգի հետ.

ԷԼԵԳԻԱ

(Իլիա Ճաւճաւաձէից)

Լուսինն աղօտ լոյս է փըռում
Իմ աշխարհին մայրենի.
Կուլ է գընում կապոյտ հեռում
Ձերմակ շարքը լեռների:
Ջէն չի գալիս ոչ մի կողմից,
Վրաստանը մութն ու լուռ.
Վըրացին է յաղթւած քընից
Տընքում տանջւած ու տխուր:
Մենակ եմ ես: Ջընած է նա,
Ջընած շուրջըս ու հեռու...
Մխ, Աստւած իմ, քընա՛ծ, քընա՛ծ,
Ժըբ է արդեօք զարթնելու...:

ԳԵՂՋՈՒԿԻ ՄՑԱՖՄՈՒՆԴԸ

(Կայլցով)

Նըստել եմ շըւար
Ու միտք եմ անում,
Թէ ինչպէս մենակ
Ապրեմ աշխարհում:
Ոչ ջահիլ կընիկ
Ունեմ իմ կողքին,
Ոչ թեւ ու թիկունք
Մըտերիմ ընկեր,
Ոչ մի տաք անկիւն,
Ոչ արծաթ ոսկի,
Ոչ սարքած գութան,
Ոչ նըժոյգ մի ձի...
Պակաս օրի հետ
Միմիայն մի գանձ՝
Քարի նըման ոյժ
Տըւաւ ինձ հէրըս.

Բայց, ախ, հէնց էն էլ
Օտար դրուներում
Կերան, մաշեցին
Դարդ ու ցաւերըս...
Ներատել եմ շրւար
Ու միտք եմ անում,
Թէ ինչպէս մենակ
Ապրեմ աշխարհում...

Վ Ա Ր Դ Ը

(Գէօթէից)

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Տեսաւ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսաւ, ուրախացաւ,
Մօտիկ վազեց սիրուն վարդին.
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիրը վարդը դաշտի միջին:

Տըղան ասաւ.—Քեզ կը պոկեմ,
Ա՛յ, կարմիր վարդ դաշտի միջին:
Վարդը ասաւ.— Տե՛ս, կը ծակեմ,
Որ չը մոռնաս փըշոտ վարդին.
Փըշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիրը վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տըղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.

Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քընքուշ վարդին.
Քընքուշ վարդին, կարմիր վարդին.
Կարմիր վարդը ճաշտի միջին:

ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՈՒՄՈՒՆԸ

(Թարգմ.)

Ես ապրում էի մի փոքրիկ տան մէջ
Առատ ու անփոյթ,
Աշխարհքն ինձ համար կըլոր էր անվերջ,
Կեղեւը կապոյտ:

Ներանից յետոյ աչքըս բաց արի
Մի փոքրիկ բընում,
Տեսայ՝ աշխարհքը յարդից է շինած,
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բընից գըլուխս հանած,
Նայում եմ դէս դէն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերեւից շինած,
Մեր բունը վըրէն:

Հիմկ թըռչում եմ հեռո՛ւ, շա՛տ հեռո՛ւ:
Ամեն տեղ գընում,
Բայց թէ աշխարհքը ինչից է շինած—
Էլ չեմ հասկանում:

ԱՄԵՆԻՑ ԼԱՒ ՏՈՒՆԸ

Անգլիական

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ
Ու ջուրն աղմկում, անվերջ փըրփըրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մօր հետ
Մի շատ անհանգիստ տղայ էր ապրում
Մի գորշ խըրճիթում,
Մի հին խըրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Մի օր էլ եկաւ անհանգիստ տըղան,
Կանգնեց իր բարի, իր սիրող մօր դէմ.
«Մայրիկ, էստեղից պէտք է հեռանամ.
Միակ ծանօթալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խըրճիթն է,
Էս հին խըրճիթն է,

Գետի եզերքին,
Ծառերի տակին:

«Թո՛ղ գընամ, շըրջեմ աշխարհից աշխարհ,
Ճամփորդեմ լաւ-լաւ տընները տեսնելու,
Ամենից լաւը ընտրեմ մեզ համար,
Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու
Էս գորշ խըրճիթից,
Էս հին խըրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Ու գընաց երկար թափառեց տըղան,
Մեծ ու հոյակապ շատ տընները տեսաւ,
Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...
Ու հառաչելով ետ վերադարձաւ
Էն գորշ խըրճիթը,
Էն հին խըրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

«Գըտա՞ր, զաւա՛կս», հարցըրեց մայրը,
Ուրախ նայելով իր տըղի վըրա:
«Ման եկայ, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լաւ տուն որ կայ,
Էս գորշ խըրճիթն է,
Էս հին խըրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Ս Ե Ա Տ Ա Գ Օ Ր Ը (*)

(Ռուսական առասպել)

Էն սեպ սարերում, էն սուրբ սարերում
Նըստած էր հըսկան — Սվեատագօրը մեծ,
Չէր գալի ռուսաց հողը սըրբազան,
Չէր կարում տանի գետինը նըրան:
Ուզեց մի անգամ սիրտը հըսկայի
Ժուռ գայ մի ազատ լայնարձակ դաշտում.
Թամբեց նըժոյգը իր հըսկայական,
Ժէռուտ կողմերով եկաւ ճանապարհ:
Ճըխաց լանջի տակ սիրտը այրական,
Խաղս առաւ ուժը երակների մէջ,

(*) Սվեատագօրը ռուսաց БЫЛИНА-ներում աւագ հըսկաններից մինն է: Էն կոպիտ ուժն է, որ թափառական շրջանն է ներկայացնում: Իսկ Միխուլա Սելյանինովիչը (շինական) էն հսկայ երկրագործն է, որ համարւում է ստակեաց գեղջուկ աշխարհի նախահայրը: Սրա երեւելով Սվեատագօրը տեղի է տալիս ու մեռնում:

Ու դուրս է յորդում ասես խաղալով:
Նեղւում է սակայն հրսկան էն ուժից,
Նեղւում է, ինչպէս մի ծանրը բեռից,
Ուրիշն էլ չըկայ, որ հետը չափւի:
Ու ձգում է վեր մըկունդն իր պողպատ.
Ամպերից վերեւ աչքից կորցընում,
Բռնում է կըրկին ճերմակ ձեռներով.
Ու խօսում է նա ինքնիրեն էապէս.
—Եթէ գըտնէի ես ուժը հողի—
Օղ կամրացնէի երկնի կամարից,
Օղից երկաթի շըղթայ կանէի,
Ցած կը քաշէի երկինքը ներքեւ,
Երկիրն էլ տեղից ես շուռ կըտայի,
Ողջ կը խառնէի—երկինք ու երկիր»:
Էստեղ նկատեց, որ դուրան դաշտում
Գրնում է հետի մի այլ աժդահա,
Ու էն աժդահի ուսովը ձըգած
Կայ ճամբորդական մի փոքրիկ խուրջին:
Եթէ քըշում է նըժոյգն ամենի,
Բաց թողնում ձիու թափովը ամբողջ,
Գնում է հետու ճամբորդ աժդահան
Ու չի հասնում ձին իր հրսկայական:
Թէ մեղմ է քըշում ու դանդաղ քայլքով,
Իր տեղն է հրսկան. չի շարժւում ասես:
Ու գոռաց էապէս Սւեատոգօրը մեծ.
—Հէյ դու անցաւոր, անծանօթ կըտրիճ,
Կա՛ց, կանգնի տեղըդ մի առժամանակ:
Թէ քըշում եմ ես նըժոյգս ամենի,
Բաց թողնում ձիու թափովն իր ամբողջ,

Գնում ես հետու քո ճանապարհին
Ու չի հասնում ձին իմ հրսկայական:
Թէ մեղմ եմ քշում ու դանդաղ քայլքով:
Քո տեղն ես դու միշտ, չես շարժւում ասես:
Կանգնեց իր ճամբին անցւորն անծանօթ,
Վեր դրրաւ գետնին ուժեղ ուսերից
Իր ճամբորդական խուրջինը փոքրիկ:
Ու մօտ քշեց ձին Սւեաուագօրը մեծ.
—Աւա՛ մի տեսնեմ, դու քաջ տղամարդ,
Ինչ է քո բեռը խուրջինիդ միջին:
Ու ճամբորդն էսպէս տրւաւ պատասխան.
—Ով դու փառապանծ հսկայ դիւցազուն,
Փորձ փորձի մի առ իմ բեռը չընչին,
Վեր առ, թէ կարաս, հրզօր ուսերիդ
Ու էնպէս քշի դաշտը լայնարձակ:
Պատասխան տւաւ անցորդն անծանօթ,
Ու ձիուց իջաւ Սւեաուագօրը մեծ:
Առաջ մի մատով ուզեց վեր քաշի—
Չը շարժւեց տեղից խուրջինն էն փոքրիկ:
Ապա մի ձեռքով բռնեց ա՛ղահի—
Կըրկին չըշարժւեց խուրջինն իր տեղից:
Ապա թէ հասաւ ողջ ուժովն իր մեծ,
Դէմ տրւաւ ճերմակ կուրծքը հրսկայի
Ուսի էն չընչին, փոքրիկ խուրջինին,
Բռնեց ահաւոր ուժովն իր ամբողջ—
Մինչեւ ծընկները գընաց հողի մէջ,
Արիւնը կաթեց ճերմակ երեսից,
Իր տեղն է սակայն խուրջինը կըրկին:
Ու էսպէս խօսեց հրսկան զարմացած.

—Շատ եմ ման եկել աշխարքումը ես,
Էսպէս հըրաշքի դեռ չեմ հանդիպել,
Էսպէս մի տեսիլք չեմ տեսել երբէք,
Չեմ տեսել էս բեռն իմ ծնած օրից:
Ուժ ունիմ էսքան, ուժըս չի պատում.
Ինչ կայ քո փոքրիկ խուրջինի միջին,
Եւ ո՞վ ես ինքըդ եւ կամ ո՞րտեղից,
Պատասխան տուր ինձ, անծանո՛թ հըսկայ:
—Իմ փոքրիկ խուրջնում ուժն է մայր-հողի,
Իսկ ես Միկուլան Սելեանինովիչ»:
Պատասխան տըւաւ անծանօթ հըսկան:

ՄՈՒՌՈՄՑԻ ԻԼԻԱՆ ԿՈՒՈՒՄ Է ՎԼԱԴԻՄԻՐ

ԻՇԽԱՆԻ ՀԱՏ (*)

(Ռուսական былина)

Ըստ Աւենցաբիուսի

Գընում է ծերուկն աւծակ դաշտերով,
Գընում է ծերուկն երկար ժամանակ:
Մաշւել են հագի շորերը նախշուն,
Հատել է արդէն իր գանձը ոսկի,
Ու Իլիան ինքնին խօսում է էսպէս.
—«Եղել եմ հիմի ամբողջ Լիտվայում,
—Եղել եմ հիմի ողջ օրդաներում,
Մենակ կիեւում չեմ եղել վաղուց:
Կիեւ գընամ մի, գընամ մի տեսնեմ

(*) Մուռոմցի Իլիան—Ռուսական առասպելներում ժողովրդական ոյժի գաղափարն է: Թարգմանութեան մէջ մի քանի ռուսական բառեր —կաբակ, փէչ, բոեար—պահւած են անփոփոխ:

Ինչ է կատարում Էնտեղ—կիեւում:»
Հասնում է Իլիան կիեւ քաղաքը մայր.
Քէֆ-խնջոյք ունի իշխան Վլադիմիրը.
Սեղան են բազմած հրզօր հրսկաներ
Ու պայազատներ մինչեւ երեսուն:
Մըտնում է ծերուկն ապարանքը ներս,
Կանգնում է, կենում սրահի շէմքին,
Խաչ քաշում դէմքին, ինչպէս օրէնքն է,
Ողջոյն է տալիս ընդունուած կարգով
Ու՛ղիւ իշխանին ու տիկնոջն էլ ջոկ:
—«Ապրած կենաս, տէր, իշխան Վլադիմիր,
Հաց ու ջուր կը տա՞ս եկւոր քաջերին:
Քեզ ուղիղ սրտով եկել եմ ծառայ:
Չեմ վախում դաշտում հազար թաթարից,
Չեմ վախում, թէկուզ միւս հազարն էլ գայ,
Չեմ փախչիլ, թող գայ երրորդ հազարն էլ.
Ու օգնութեան էլ հարկաւոր չեն ինձ
Երեսուն ազգաւն իրենց ճուտերով»:
Ով էր—չիմացաւ իշխանը հիւրին:
—«Ուսկի՞ց ես, ո՛վ քաջ, ի՞նչ ազգ ու տակից.
Քեզ ինչ անունով կանչենք, մեծարենք,
Կամ ինչ հայրական կոչումով յարգենք»:
—Նիկիտան եմ ես Զաօլէշանին:
—«Ո՛վ, դու Նիկիտա Զաօլէշանին,
Է՛կ, նըստի, մեզ հետ հաց անուշ արա,
Մի տեղ կայ դատարկ էնտեղ, ներքեւում,
Սեղանի ծէրին, բազմոցի վերջին.
Բըռնած են ուրիշ տեղերը բոլոր:»
Ու, կըռներն ընկած, մարդիկն իշխանի

Տարան Իլիային ծէրը ներքեւի.
Նըստեցրին էնտեղ ներքեւի ծէրին:
Ու էսպէս խօսեց Իլիան ներքեւից.
—Ով դու Վլադիմիր. մայր Կիեւի տէր,
Վայել չի ուժին, ոչ աստիճանին
Տեղն ու պատիւը, որ տալիս ես դու.
Ինքըդ նըստում ես ագռաւների հետ,
Ինձ տեղ ես տալի ճուտերի կողքի՞ն:
Աւաւ, կամեցաւ տեղը դըրըստի—
Ջարդուեց շուրջը կաղնի բաղմոցներ,
Ոլորեց բիբերն ամբողջ երկաթի,
Սեղմեց հիւրերին անկիւնը վերին:
Դուր չեկաւ էս բանն Աբեւ իշխանին.
Տեղիցը առոյգ ելաւ նա ոտի,
Մըթնեց, աշունքւայ գիշերի նըման,
Մըռընչաց, ինչպէս կատաղի գազան:
—Ինչպէս, Նիկիտա Ջաօլէշանին.
Խառնես տեղերը դու իմ սահմանած,
Ծըռես բիրերը համայն երկաթի՜...
Մէն մի հըսկայի արանքում ես
Բիրեր եմ գարկել ամուր երկաթի,
Որ խընջոյքներին, որքան էլ խըմեն,
Որքան էլ հարբեն, չը դիպչե՛ն իրար:
Հէյ դուք, մեծազօր ըռուս հըսկաներ,
Լսուա՞ծ է որ ձեզ, էդ հըսկաներիդ
Ագռաւներ կանչի մինը ու ճուտեր:
Դուրս եկէք ձեզնից երեք լաւերդ,
Դո՛ւրս շպրտեցէք—սըրահից փողոց:
Դուրս եկան ընտիր երեք հըսկաներ,

Սկսան Նիկիտին քաշել, քաշքըշել,
Սկսան Նիկիտին հըրել, հրմըշտկել.
Կանգնած է Նիկիտն ու ժաժ չի գալի,
Չի շարժւում նոյն իսկ գլխարկը գըլխին:
—Թէ կուզես, իշխան, դու գըւարճանաս,
Թող գան սըրանց հետ երեք հըսկայ էլ:
Դուրս եկան ուրիշ երեք հըսկայ էլ,
Սկսան Նիկիտին քաշել, քաշքշել,
Սկսան Նիկիտին հըրել, հրմըշտկել.
Կանգնած է Նիկիտն ու ժաժ չի գալի,
Չի շարժւում նոյն իսկ գըլխարկը գըլխին:
—Թէ կուզես, իշխան. դու գըւարճանաս,
Թող դուրս գան գոնէ երեք հըսկայ էլ:
Դուրս եկան երրորդ երեք հըսկան էլ:
Բան չը կարացին անեն Նիկիտին:
Ու էսպէս խօսեց Նիկիտը այնժամ.
—Իշխան Վլադիմիր, մայր Կիեւի տէր,
Ախորժակ ունիս անշուշտ խընդալու.
Համեցէք, հիմի մըտիկ արա ինձ
Ու ախորժակըդ կանցնի խընդալու:
Ու Նիկիտը ինքը սկսաւ խընդալ,
Ըսկըսաւ սեղմել, զարկել, տըրորել
Ուժեղ ու հզօր էն հըսկաներին:
Սողում են սրահում հըսկաներն ամեն,
Չի կարում կանգնի ոչ մինը ոտի:
Դուրս եկաւ Նիկիտն ապա սրահից,
Դըռները զարկեց՝ շրջանակն ընկաւ,
Դարպասը զարկեց՝ սիւները թըռան,
Ջարդ-փշուր եղան ճաղերը քաշած:

Իշխանը մըտաւ ետեւը փէչի,
Սամուր մուշտակը քաշեց իր գլխին.
—Վա՛յ, կամա՛ց, տղէ՛ք, ժաժ չըգաք տեղից,
Ձը լըսի Նիկիտ Ձաօլէշանին,
Թէ չէ ետ կը գայ ջարդ-փշուր կանի,
Ոչ մեծ կը թողնի, ոչ փոքըր մեզնից,
Ժառանգ չի թողնիլ ինձ՝ Վլադիմիրիս...»
Դուրս եկաւ Իլիան դարպասն ընդարձակ
Ու լարեց ճայթուն իր աղեղը գիլ,
Սուր, մըխած նետը դըրաւ աղեղում,
Էսպէս ինքնիրեն խօսեց նետի հետ.
—«Սըլացի՛ր իմ նետ, տանիքը ոսկի,
Վէր բեր ոսկեզօծ գըմբէթները ցա՛ծ»:
Ընկան ոսկեզօծ գըմբէթները ցա՛ծ,
Ու կանչեց Իլիան կոկորդովը մին.
—«Հէ՛յ, դուք կաբակի մերկ ու տըկլորներ,
Հէ՛յ, կամաւորներ Արեւ իշխանի,
Վազեցէ՛ք, եկէ՛ք դարպասն իշխանի,
Առէ՛ք ոսկեզօծ գըմբէթները թանգ,
Կըրեցէ՛ք, տարէ՛ք կաբակն արքունի,
Արաղ խըմեցէ՛ք էնտեղ կուշտ ու պինդ»:
Վազեցին, եկան տըկլորներն ամեն,
Կամաւորները Արեւ իշխանի,
Տարան, կըրեցին գըմբէթներն ոսկի:
—«Ո՞վ դո՛ւ մեր պաշտպան, մեր ծնող, մեր հայր»...
Ու Իլիայի հետ եկան, գընացին.
Խըմեցին բոլոր գըմբէթներն ոսկի,
Խըմեցին մինչեւ վերջինը միասին:
Ու երկիւղ ընկաւ սիրտները էստեղ.

—Ինչ կանի մեզ հետ իշխանը հիմի,
Ինչ պատիժ կը տայ. ով գիտի, հիմի,
Խըմեցինք նըրա գըմբէթները ողջ:
Ու Իլիան էսպէս խօսեց նըրանց հետ.
—«Խըմէք, տըկլորներս, դո՛ւք մի՛ վախենաք,
Ես եմ վաղւանից իշխան կիեւում,
Իսկ դուք ամենից մեծ պիտի լինիք»:
Անցաւ երկիւղը, սկըսան խըմել,
Տէրից սկըսան կեանք խընդրել քաջին:
Իսկ իշխանական խընջոյքի վըրայ
Գընաց համբաւը Աբեւ իշխանին.
—«Ով Աբեւ իշխան, մայր կիեւի տէր,
Ձես ասիլ՝ Նիկիտա Զաօլէշանին
Ձու էս յարկերից, ոսկի յարկերից,
Ըզգեց ոսկէզօծ գըմբէթները ցած,
Կանչեց կաբակի ողջ տըկլորներին,
Խըմեց նըրանց հետ գըմբէթներն ոսկի»:
Նըստած էր էնտեղ խընճոյքի միջին
Զահիլ Դոբրինեա Նիկիտիչ հըսկան,
Էսպէս ասաւ նա Աբեւ իշխանին.
—«Իշխան Վլադիմիր, մեր կարմիր Աբեւ,
Նիկիտան չի նա Զաօլէշանին,
Այլ իմ խաչախապէրն (*)—Իլիան Մուրոմից»:
Ասաւ՝ իշխանը մոքի տուն ընկաւ,
Իր հետ անւանի ազատներն ամեն
Եւ հըսկաները ուժեղ ու հըզօր,
Թէ ինչպէս անի—հաշուի ծերի հետ:

(*) Հնում սովորութիւն կար— խաղերը փոխում էին իրար հետ ու դառնում խաչախապէր:

—«Միտք արէք, տըղէք, միտք արէք մի լաւ,
Միտք արէք, տըղէք, խորը միտք արէք,
Խելք խելքի տուէք մի հընար գըտէք,
Ո՞ւմ ղըրկենք արդեօք ծերի ետեւից,
Որ կանչի ներան յարգինքի սեղան:
Ես ինքս գընամ—չեմ ուզում գընամ,
Ապրակսին ղըրկեմ—վայել չի ներան»:
Ամենքը էստեղ մըտքի մէջ ընկան.
—«Ում ղըրկենք արդեօք ծերի ետեւից...
Ե՛կ ղըրկենք գընայ ջահիլ Դոբրինեան,
Չէ որ Իլիայի խաչախապէրն է նա.
Ներա՛ն կը լսի Իլիան՝ թէ լսի»:
Սեղանը անցաւ Վլադիմիր իշխանն,
Եկաւ ու կանգնեց Դոբրինիայի դէմ
Ու էսպէս խօսեց Դոբրինիայի հետ:
—Արի՛, ե՛լ, կորիճ, ջահիլ Դոբրինեա,
Ծերուկ Մուռոմցու մօտ գընա մեզնից,
Երկիրը պագիր, խոնարհ ողջունիր,
Խոնարհիր մինչեւ յատակն աղիւսի,
Խոնարհիր մինչեւ էն գետինը ցած
Ու էսպէս ասա ներան մեր կողմից:
—«Ուղարկել է ինձ Վլադիմիր իշխանն
Ու մայր տիկինը՝ Ապրակսիան իր հետ,
Խընդրում են, որ գաս ուրախ յարգինքի:
Նա չի ճանաչել քեզ, կըտրիճ քաջիդ,
Ներտեցրել է ցած, ներքեւի ծէրին:
Խընդրում է հիմի, լիասիրտ խընդրում,
Խընդրում լիասիրտ ու մեծ ցընծութեամբ.
Խընդրում է մոռնաս ինչ անց է կացել»:

Գընում է ահա ջահիլ Դոբրինեան,
Գընում է ճամբով ու միտք է անում.
—«Արդեօք վաղաժամ մահիս չեմ գնում...
Բայց թէ չը լսեմ Ալեւ իշխանին
Փորձանք է գալու անշուշտ նըրանից»:
Ու գընում է նա կաբակն արքունի,
Մըտնում է ահա կաբակն արքունի.
Նըստած է էնտեղ ծերուկ Մուռոմցին,
Խըմում, քէֆ անում տըկլորների հետ:
Ու միտք է անում ջահել Դոբրինեան,
Ո՞ր կողմից արդեօք նըրան մօտենայ.
—Առջեւից գընամ՝ դուր չը գամ գուցէ.
Լաւ է թիկունքի կողմից մօտենամ:
Եկաւ, մօտեցաւ թիկունքի կողմից,
Բըռնեց Իլիայի ուժեղ ուսերից
Ու էսպէս մեղմով խօսեց նըրա հետ:
—«Մ՛վ իմ խաչախպէր, իմ ախպէրացու,
Մ՛վ դու իմ ախպէր, ծերուկ Մուռոմցի,
Քեզ պահիր առժամ ձեռներըդ ճերմակ,
Բըռնի ու զըսպի սիրտըդ կըրակոտ:
Չէ՞ որ բանբերին չեն կապում, կախում.
Մենք էլ հօ մեր մէջ ուխտ ունենք արած,
Ուխտ ունենք արած մեծ ու ահաւոր,
Որ փոքր ախպերը լըսի իր մեծին,
Մեծն էլ իր փոքրին ականջ անի միշտ,
Ու էսպէս կանգնենք մէկ մէկի համար:
Դեսպան է ղըրկել քեզ մօտ ինձ էսօր
Վլադիմիր իշխանն իրեն տիկնոջ հետ,
Քեզ, հրզօր քաջիդ նա չի ճանաչել.

Նըստեցրել է ցած, ներքեւի ծէրին:
Խընդրում է հիմի նա քեզ ցընծութեամբ,
Խընդրում լիասիրտ մեծ խըրախճանի,
Թողնես, ասում է, ինչ անց է կացել»:
Ետ է շուռ գալիս Ալէյկօն էստեղ.
—«Հէյ դու, Դոբրինեա, ջահել Նիկիտիչ,
Քու բախտը բանեց՝ ետեւից եկար,
Թէ չէ առջեւից գայիր, Դոբրինեա՛,
Հող ու մոխիրըդ քամուն պիտ տայի:
Հիմի, ախպէրըս, ձեռ չեմ տալի քեզ.
Կարգն ու օրէնքը անցնել չի լինիլ:
Ետ դարձի, ասա Արեւ իշխանին,
Թող որ ինձ համար, ինձ, քաջիս համար
Արծակի սաստիկ, սաստիկ հրրաման
Ամբողջ կիեւին, էս մայր քաղաքին,
Եւ Չերնիգովին նայնպէս սրրա հետ,
Որ արքունական կաբակները ողջ
Բացեն երեք օր ու երեք գիշեր,
Ժողովուրդն ամեն գայ արաղ խըմի,
Ով չի կամենալ որ արաղ խըմի,
Թող նա գարեջուր խըմի հարբեցնող,
Ով որ չի ուզիլ գարեջուր խըմի,
Թող նա մեղրաջուր խըմի քաղցրահամ,
Որ ողջ իմանան, կիեւ է մըտել
Մուռոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ:
Ինձ համար էլ թող, էս քաջիս համար,
Սեղան բաց անի ճոխ մեծարանքի.
Իսկ թէ չի անիլ ինչ ասում եմ ես,
Կիեւում կիշխի մինչեւ լուս միայն»:

Ու արագ արագ վազեց Դոբրինեան,
Վազեց Վլադիմիր անուշ իշխանին,
Պատմեց Իլիայի պատուէրը նրան:
Հէնց լսեց պատուէրն իշխան Վլադիմիրը,
Իսկոյն, անյապաղ սաստիկ ու սաստիկ
Գըրեց բովանդակ կիեւ քաղաքին,
Այլեւ Չերնիգով հանեց հըրաման,
Թէ ողջ երեք օր ու երեք գիշեր
Բաց պէտք է լինի կաբակն արքունի,
Գայ, արձակ խըմի ժողովուրդն ամեն,
Խըմի, քէֆ անի անվարձ, անվըճար,
Որ ողջ իմանան կիեւ է մըտել
Մուռոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ:
Ու ինքը բացեց յարգինքի սեղան,
Կանչեց, հաւաքեց իշխան ու բոյար,
Ըռուսաց բոլոր մեծ հըսկաներին,
Այլեւ քաջարի կանանց դիւցազուն:
Բայց մարդ չի գնում կաբակն արքունի,
Ամենքն իշխանի պալատն են վազում,
Ոչ կեր ու խումի, ոչ ոսկու համար,
Վազում են տեսնեն անվեհեր քաջին,
Տեսնեն Մուռոմցի էն ծեր Իլիային:
Հաւաքւում են ողջ դարպասն իշխանի
Մըտնում են կամաց ապարանքը ներս:
Ու ծեր Մուռոմցին գալիս է ահա,
Գալիս՝ կաբակի տըկլորների հետ,
Գալիս է, մըտնում սըրահը պայծառ,
Խաչ հանում դէմքին, ինչպէս օրէնքն է,
Ողջոյն է տալի ընդունւած կարգով,

Երկըրպագում է չորս կողմը խոնարհ,
Արեւ իշխանին ու տիկնոջն էլ ջոկ:
Վերկացաւ իսկոյն իշխանը առոյգ,
Առաւ Իլիայի ճերմակ ձեռներից,
Համբուրեց նրրա շրթունքը շաքար,
Ապա թէ էսպէս խօսեց շողոմքոր:
—«Ով դու ծերունի, Իլիա Մուրոմցի,
Ցած եղաւ թէպէտ քու տեղն ամենից.
Այժմ ամենից վերեւ կը լինի:
Հէյ, դուք ծառաներ իմ հաւատարիմ,
Տարէք ծերունուն բարձրը ամենից»:
Բայց նա չը նըստեց ամենից վերեւ,
Գընաց ու նըստեց մէջ տեղն ամենի,
Հետը նստեցրեց մերկ տրկլորներին
Ու էսպէս դարձաւ Արեւ իշխանին.
—«Ով դու Վլադիմիր, մայր Կիեւի տէր,
Լաւ ես իմացել՝ ում ղըրկես ինձ մօտ.
Ջընէր Դոբրինեան՝ իմ ախպերացուն,
Չէի լըսելու էստեղ ոչոքի,
Ու մըտքումս արդէն ղըրել էի ես,
Լարել էս ճայթուն իմ աղեղը զիլ,
Արձակել դէպի սրահըդ շքեղ,
Սպանել ես քեզ, իշխան Վլադիմիր,
Եւ քու տիկնոջը՝ քու Ապրակսիային:
Բայց էս անգամը Աստուած քեզ ների
Քու էդ յանցանքը, էդ յանցանքը մեծ»:
Էստեղ անուշներ բերին հիւրերին,
Բաղցը մեղրաջուր խըմիչքներ բերին,
Բերին ամենին ղըրին մի մի թաս

Ու էսպէս խօսեց Իլիան իշխանին:
—Ա՛յ դու Վլադիմիր, մայր Կիեւի տէր,
Սրբա՞նով ես դու պատւում հիւրերիս,
Սրբանով ես դու յարգանք ցոյց տալի.
Էս տրկլորներին միայն մի մի թա՛ս...»
Դուր չեկաւ էս խօսքն Արեւ իշխանին,
Էսպէս ծերունուն տրւաւ պատասխան:
—Ամենքի համար խոր նրկուղներում
Արաղ ունեմ ես ինչքան կամենան,
Մարդը մի տակառ քառսուն չափանոց:
Թէ հերիք չանի՝ ինչ որ կայ էստեղ.
Թող իջնեն իրենք նրկուղներն իմ խոր:
—«Ա՛յ դու Վլադիմիր, իշխան Կիեւի,
Էդպէ՞ս են պատւում քեզ մօտ հիւրերին,
Էդպէս են քեզ մօտ յարգում քաջերին,
Որ իրենք գըտնեն ուտեստ ու խըմի՛չք...
Տեսնում եմ տանտէրն ես եմ լինելու»:
Ասաւ ծերունին ու ոտքի ելաւ,
Էլ հարցմունք չարաւ նրկուղի ճամբէն,
Էլ նրկուղների բանալիք չուզեց.
Թափ իջաւ դէպի նրկուղները խոր,
Դրռնները արաւ ողջ կրընկահան,
Պոկեց կողպէքներն առանց բանալի,
Ներս մըտաւ ինքը նրկուղներն էն խոր:
Առած մի տակառն էս մի կրռնատակ
Ու միւս տակառը մեկէլ կրռնատակ.
Երրորդը ոտով գըլորում է դուրս.
Ու դուրս գըլորեց դարպասն իշխանի,
Գոռաց ու կանչեց կոկորդ-ը մին.

—«Հէյ դուք կաբակի մերկ ու տրկլորներ,
Դուրս եկէք էստեղ—դարպասն իշխանի,
եկէք, ամենքիդ արաղ խըմեցնեմ»:
Ու իջաւ կըրկին նըկուղները ցած:
Զը տարաւ իշխանն ու թունդ ելաւ խիստ,
Որտաց ուժգին իր հրնչուն ձէնով.
—«Հէյ հաւատարիմ դուք իմ ծառաներ,
Շո՛ւտ, եկէք, հասէք արագ ու արագ.
Արագ ու արագ, ճեպով, հապճեպով,
Վէր դըրէք քաջին խորունկ նըկուղում:
Շուրջը քաշեցէք երկաթի ցանցով,
Կաղնի կոճղերով կապեցէք չորս դին,
Թաղեցէք դեղին աւազի տակին,
Սովամահ արէք խորունկ նըկուղում»:
Վազեցին, հասան ծառաներն արագ,
Արագ ու արագ, ճեպով, հապճեպով,
Վէր դըրին ծերին խորունկ նըկուղում,
Շուրջը քաշեցին երկաթի ցանցով,
Կաղնի կոճղերով կապեցին չորս դին,
Թաղեցին դեղին աւազի տակին:
Ու ցաւ դառաւ էս միւս հրսկաներին,
Վեր կացան կիսատ քէֆի սեղանից,
Ելան, դուրս եկան դարպասն ընդարձակ.
Իրենց ամեհի ձիանքը հեծան,
Դէս դէն ցըրւեցին էն արձակ դաշտում,
էն լէն ու ազատ տարածութեան մէջ:
—«Էլ չենք մընալ մենք էստեղ, կիեւում,
Էլ չենք ծառայիլ Արեւ իշխանին»:
Ու էլ Վլադիմիր իշխանի մօտին
Հրսկայ չը մընաց կիեւ էն օրից:

ՄԱՐԿՈՆ ՌԱՄԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ Է ԽՄՈՒՄ

(Սերբական սպգ. ժող. էպոսից)

Սուլթան Սուլէյման հրաման հանեց,
Որ իրեն երկրում ոչ մի հպատակ
Ռամազան օրը գինի չխմի,
Կանաչ դոլամա (*) չհագնի վերից,
Կողքից ոսկեզօծ թուր չկախ անի,
Շուրջպարի չերթայ աղջիկների հետ:
Թուրը կախ արաւ Մարկօն իր կողքից,
Կանաչ դոլամա հագաւ վերևից,
Ռամազան օրը գինի է խմում,
Կանչում, հաւաքում անցուդարձ ու խօջա,
Խմում է, թասը նրանց է տալիս:
Գալիս են թիւրքերն իրենց Սուլթանին,
—Սուլթա՛ն, մեր տէրն ես, մեր ծնողն ես դու.

(*) Վերարկու:

Չէ՞ որ դու ինքդ հրամանք արիր,
Որ մեր էս տօնին, էս ծանր պահքին
Ոչով բերանը գինի չտանի,
Ոչով դուլամա չհագնի կանաչ.
Ոչով կողքիցը թուր չըկախ անի,
Շուրջպարի չերթայ աղջիկների հետ:
Մարկօն աղջկանց հետ շուրջպարի կերթայ,
Մարկօն կողքիցը թուր է կախ արել,
Մարկօն հագել է կանաչ դուլամա,
Ռամազան օրը գինի է խմում:
Գլուխը քարը՝ թէ մենակ խմէր.
Անցուր ու խօջա կիտում է գլխին,
Համ ինքն է խմում, համ նրանց տալիս»:
Սուլթան Սուլէյման էս լսեց թէ չէ՝
Երկու սուրհանդակ ղրկեց Մարկօին:
—Գնացէ՛ք, ասաւ, իմ արագ տղերք,
Գնացէ՛ք շուտով Մարկօին ասէք՝
Թէ՝ կանչում է քեզ Սուլթանն անյապաղ:
Գնացին արագ Սուլթանի մարդիկ
Շիտակ Մարկօի վրանը մտան:
Խմում է Մարկօն գաւաթն առաջին,
Մէջը կը լինի տասներկու օխա
—Լսի՛ր, ասացին, քաջագուն Մարկօ,
Սուլթանը ղրկեց մեզ քո ետեւից,
Վե՛ր կաց տեղիցդ, գնանք Սուլթանին»:
Սաստիկ բարկացաւ Մարկօն էս խօսքից,
Վեր կալաւ ծանրը գաւաթն առաջի
Ու՝ ա՛ռ հա կըտաս՝ սրանց գլխներին:
Գլուխ ու գաւաթ ջարդ ու փուրդ եղան,

Արիւն ու գինի խառնուեց իրար:
Ապա թէ գնաց Մարկոն Սուլթանին.
Գնաց աջ կողմը նատեց ծունկ ծնկի,
Սամուր գլխարկը քաշեց աչքերին,
Իր ծանր գուրզը դրեց առաջին,
Սուր թուրն էլ ուսին բռնած պատրաստի:
Ու էսպէս խօսեց Սուլթանը թիւրքի:
—Իմ հոգեւորդի, քաջազուն Մարկո,
Դու հո լաւ գիտես՝ կարգ եմ դրել ես,
Որ մեր մեծ պահքին, Ռամազան օրը՝
Ոչով բերանը գաւաթ չտանի,
Ոչով դոլամա չհագնի կանաչ,
Շուրջպարի չերթայ աղջիկների հետ:
Իմ ծառաները ինձ մօտ են գալիս՝
Վատ խաբարներ են բերում քեզանից:
Դու պար ես գալիս, իբրեւ, շուրջպարի,
Պողպատի թուր ես կապել քո մէջքին,
Կանաչ դոլամա հագել վերեւից,
Ռամազան օրը գինի ես խմում,
Անցւոր ու խօջա կանչում խմեցնում:
Ինչ ես գլխարկդ քաշել աչքերիդ,
Ինչո՞ւ ես բերել քո գուրզը քեզ հետ,
Ինչո՞ւ ես թուրդ բռնել պատրաստի»:
Պատասխան տւեց Մարկոն Սուլթանին.
—Մվ իմ հոգեհայր, Սուլթան Սուլէյման,
Իմ հաւատն էսպէս ինձ թոյլ է տալիս,
Ես էլ խըմում եմ ձեր պահքի օրը:
Մենակ խմելը անվայել է ինձ,
Երբ ուրիշները մտիկ են անում,:

Ես էլ կանչում եմ եմ անցուր ու խօջա,
Որ մոխիկ չանեն, նրանք էլ խմեն:
Կանաչ դոլամա էնդուր եմ հագնեմ,
Որ ջահել մարդ եմ ու սազում է ինձ:
Կողքից եթէ թուր եմ կախ արել,
Իմն է, իմ փողով ես ինքս եմ առել:
Աղջիկների հետ թէ պար եմ գալիս,
Էնդուր, որ ազատ մարդ եմ ամուրի,
Ինչպէս որ ինքդ եղել ես մի օր:
Գլխարկս էնդուր եմ քաշել աչքերիս,
Որ չեմ դիմանում, ճակատս էրում է
Երբ որ խօսում եմ Սուլթան հօրս դէմ:
Իմ գուրգն էլ հետս էնդուր եմ բերել,
Վախում եմ յանկարծ կռիւ պատահի:
Եւ՝ եթէ կռիւ պատահի յանկարծ՝
Վա՛յ, ով մօտիկ կըլնի Մարկօի:
Ջորս կողմը նայեց Սուլթանը էատեղ,
Տեսնի թէ ո՞վ կայ մօտիկ Մարկօին.
Տեսաւ, որ ոչով չկայ վրանում
Ու ինքն է մենակ մօտիկ Մարկօին:
Ահից սկսեց քաշուել ետ ու ետ,
Մարկօն էլ առաջ՝ դէպի Սուլթանը,
Տարաւ ու սեղմեց վրանի պատին:
Սուլթանը ձեռքը գրպանը կոխեց,
Մի հարիւր դուկատ հանեց գրպանից,
Հանեց, դէմ արաւ ջահել Մարկօին.
—Ա՛ռ, ասաւ, Մարկօ, տար՝ գինի խմիր»:

Բոլժամ.

ՀԱՑԱՍԱՓԻ ԵՐԳԸ

(Հ. Լոնգֆելլոյի)

Նախերգանք

Եթէ հարցնէք, ո՞րտեղից են
Էս լեգենդներն ու զրոյցներն
Անտառների անուշ բոյրով,
Հովիտների շաղ ու մուժով,
Վիգւամների ոլոր ծուխով,
Մեծ գետերի սահանքներով,
Նրանց անվերջ որոտումով
Ու վայրենի արձագանքով,
Ինչպէս ամպրոպ սարերի մէջ.
Ես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ:
Անտառներից, հովիտներից,
Նորդլանդիայի մեծ լըճերից,
Օջիբուայի խոր աշխարհից.

Դակոտների վայրի երկրից,
Ճահիճներից, ճախիններից,
Ուր շուհ-շուհ-գան՝ արագիլը
Կեր է փնտրում ճըլկուտներում,
Կրկնում եմ ես էս զրույցներն
Անուշ երգիչ ու երաժիշտ
Նաւադահի պարզ երգերով:

Եթէ հարցնէք, ո՞ւր է գըտել
Էս երգերը Նաւադահան,
Էսքան վայրի ու քըմահաճ.
Ես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ:
—Թռչունների բընների մէջ,
Ջըրշունների խոռոչներում,
Բիզոնների արօտներում,
Արծիւների բընավայրում

Ճահիճներում, ճախիններում,
Մելամաղձիկ թափառելով,
Երգում էին նըրա համար
Մանգը՝ բադը, սագը՝ վավան,
Եւ շուհ-շուհ-գան՝ արագիլը,
Եւ կըտցարը՝ չիթովէյկը,
Վայրի հաւը՝ մուշկոդազան:

Եթէ դարձեալ հարցմունք անէք,
Ո՞վ է հապա Նաւադահան,
Պատմի դու մեզ նըրա մասին.
Ձեր հարցմունքին էս խօսքերով

Կը տամ իսկոյն ես պատասխան:
—Թաւազէնթի պերճ հովիտում,
Ճոխ մարգերի լռութեան մէջ,
Արծաթափայլ ջրերի մօտ
Ապրում էր վաղ Նաւադահան:
Հընդիկ գիւղի շուրջը բոլոր
Փռուում էին հանդերը, արտերը,
Ու կանգնած էր հին ծրմակը,
Հին ծրմակը սոճիների,
Ամրան՝ կանաչ, սօսափելով,
Ձմրան՝ փայլուն ճերմակ ծիւնով,
Լիքը երգով, հառաչանքով:

Հովիտն ի վար հոսում էին
Էն ջրերը արծաթափայլ,
Գարնանը՝ խիտ եղէգնուտով,
Ամրանն՝ երկար բարդու շարքով,
Աշնանը՝ գորշ մէգի տակին,
Ձմրան՝ ճերմակ ափերի մէջ:
Ու ապրում էր երգիչն էնտեղ,
Թաւազէնթի պերճ հովիտում,
Ճոխ մարգերի լռութեան մէջ:

Էնտեղ երգեց նա էս երգը,
Անուշ երգը Հայաւաթի,
Թէ ինչպէս նա ծնուեց, ապրեց.
Ու ինչպէս էր ճգնում, տանջւում,
Քարոզում էր ու համոզում,

Որ երջանիկ դարձնի մարդին,
Որ բարձրացրնի ժողովրդին:

Ով սիրում է բընութիւնը
Ու մարգերում լոյն արեւի,
Սիրում ստւերն անտառների,
Սիրում հովը տերեւներում,
Եւ անձրեւը, եւ փոթորիկ,
Եւ սահանքը մեծ գետերի,
Եւ կայծակը սարերի մէջ,
Թաւուտներում սոճիների.
Նա կը լըսի էս զըրոյցը.
Զըքնաղ երգը Հայաւաթի:

Ով սիրում է ժողովրդի
Լեգենդներն ու բալլադները,
Որոնք, ինչպէս հեռու ծայներ,
Կանչում են, որ ականջ դրնենք,
Ու խօսում են պա՛րզ, մանկաբար,
Որ հազիւ է մարդ որոշում,
Ե՞րգ է արդեօք թէ պատմութիւն,
Ականջ կանի նա հաճոյքով
Էս հնդկական հին զրոյցին,
Խաղաղ երգին Հայաւաթի:

Նա, ում սիրտը թարմ է ու պարզ,
Հաւատում է Աստծուն, բնութեան,
Հաւատում է, որ յաւիտեան
Մարդկային է սիրտը մարդու.
Որ վայրենի լանջի տակ էլ

Մի անմեկին կեանքի համար
Կան բաղձանքներ ու ծգտումներ.
Որ խաւարում խարխափելիս,
Թոյլ ձեռքերը անօգնական,
Հանդիպելով Աստծոյ աջին,
Կեանք են առնում ու զօրանում.
Նա կը կարդայ էս գրոյցը,
Էս պարզ երգը Հայաւաթի:
Ով երբեմըն իր շըրջակայ
Լուռ հանդերում թափառելիս
Մի մոռացած շիրմի առջեւ
Կանգ է առնում, միտք է անում
Նրա կիսեղծ գըրի վըրայ,
Որ գրւած է պարզ, անարւեստ,
Սակայն որի ամէն խօսքը
Լիքն է կեանքի, հանդերձեալի
Անվերջ յուսով ու թախիծով,
Նա կը կանգնի ու կը կարդայ
Խոր հընութեան արձանագիր
Էս հին երգը Հայաւաթի:

Եռադասութեան չիբուխը

I

Ու մեծ դաշտի լերանց վրա,
Կարմիր ժայռի բարձունքներին,
Նա, հրզօրը, կեանքի տէրը՝
Գիտչի-Մանիտոն իջնելով,
Կանգնեց շիտակ եւ ազգերին
Ու ցեղերին կանչեց ի մի:

Նրա ոտքի տեղից բըղխեց,
Հոսեց մի գետ անդունդն ի վար,
Առաւօտեան շողերի մէջ
Շողշողալով ու ծոր տալով

Էն Իշկուդա—աստղի նման:
Ու խոնարհեց Ոգին երկրի,
Աջով մարգում նրա համար
Գծեց ոլոր մի ճանապարհ,
—Գնա՛, ասաւ, էս ընթացքով:

Ապա պոկեց իրեն ձեռքով
Քարահանքից մի կտոր քար,
Շինեց կարմիր չիբխի գլուխ
Ու զարդարեց նկարներով:
Գետի ափից եղէգն առաւ
Իր մութ կանաչ տերեւներով
Ու կոթ շինեց չիբխի համար.
Լըցրեց ուռու չոր կեղեւով,
Կարմիր ուռու չոր կեղեւով:
Շընչեց մօտիկ մեծ անտառին,
Ու ճիւղերը տըւաւ իրար,
Կըրակ հանեց, վառեց չիբուխն,
Ու կանգնելով էն սարերին
Գիտչի-Մանիտոն, հըզօրը,
Ծըխեց իրեն գալիւմետը,
Իբրեւ նշան ողջ ազգերին:

Ու ծուխն ելաւ կամաց կամաց
Առաւօտեան խաղաղ օդում,

Առաջ ինչպէս մըթին մի գիծ,
Յետոյ կապոյտ, խիտ գոլորշի,
Ապա ճերմակ ամպի նման
Բարձրանալո՛վ, բարձրանալո՛վ,
Մինչեւ հասաւ վեր երկընքին,
Մինչեւ ցըրւեց վեր երկընքում
Ու փաթաթեց շուրջն ամեն բան:
Թաւազէնթի դաշտավայրից,
Վաօմինգի հովիտներից,
Տուսկալուզի ծըմակներից,
Հեռո՛ւ, հեռո՛ւ ժէռ սարերից,
Նորդլանդիայի լըճափերից
Ազգերն ամեն նըկատեցին,
Տնտան հեռուում բարձրանում է
Խաղաղութեան չիբխի ծուխը:

Ու ազգերի մարգարէներն
Ասին՝ տեսէք, էն Պուկւանան,
Խաղաղութեան չիբխի ծուխն է,
Որ թեքւում է ուռենու պէս,
Շարժւում կանչող ճեռքի նման:
Մեծ, հեռաւոր էն նըշանով
Գիտչի-Մանիտոն՝ հըզօրը,
Կոչ է անում մարտիկներին
Ողջ ազգերի ու ցեղերի:

Գետերն ի վեր հովիտներով
Եկան, եկան, հաւաքեցին
Մարտիկները ողջ ազգերի.
Դելաւարներն ու մոհոկները.

Ջոտկոններն ու սեւուտները,
Օմօհոններն ու պոնները,
Մանդաններն ու դակոտները,
Հուրօններն ու օջիբւէները,
Ճամբայ ելան ողջ միասին
Խաղաղութեան չիբխի ծըխի՝
Գալիւմէտի ծըխի վըրայ
Դէպի սարերն էն մեծ դաշտի,
Մեծ քարհանքի ժայռը կարմիր:

Ու զէնքերով, զըրահներով,
Նախշուն, ինչպէս աշնան տերեւ,
Ինչպէս երկինք առաւօտեան,
Էնտեղ, դաշտում, նրանք կանգնած
Նայում են խելթ իրար վրայ,
Աչքերի մէջ ատելութիւն,
Սըրտերի մէջ դարեւոր քէն,
Արեան ծարաւ պապենական:

Գիտէի-Մանիտօն, հրզօրը,
Արարիչը մարդկան ազգի,
Նայեց նրանց կարեկցաբար:
Իր հայրական սիրով նայեց
Նրանց կըռւին ու պայքարին,
Ինչպէս իրեն անխելք ու խակ
Մանուկների կըռւի վըրայ:

Ու տարածեց իր աջ ձեռքը
Մեղմի նըրանց բընոյթը կոշտ,
Մեղմի տապը, ծարաւն անյագ

Իրեն աջի հովանու տակ:
Խօսեց խրոխտ ու վեհ ձայնով,
Էն ջրերի աղմուկի պէս,
Որ թնդում են խոր անդընդում,
Խրատելով, նախատելով
Էապէս խօսեց ազգերի հետ:

— Ո՛վ իմ որդիք, իմ հէք որդիք,
Ականջ դրէք իմաստութեան,
Ականջ դըրէք խրատներին
Ձեր արարիչ, ձեր ստեղծող
Հըզօր Ոգու շըրթունքներից:
Տըւի ես ձեզ ամեն բարիք.
Երկիր տըւի՝ որսի համար,
Գետեր տըւի՝ ծուկ բըռնելու,
Տըւի ձեզ արջ, տըւի բիզոն,
Տըւի եղնիկ ու եղջերու,
Տըւի ըսկիւռ, տըւի ջըրշուն
Ու ճահիճներ փ հաւքերով.
Ինչո՞ւ գոհ չէք դուք տակաւին,
Ինչո՞ւ էք դուք որսում իրար:

Յոգնել եմ ես ձեր վէճերից,
Ձեր արիւնոտ կըռիւներից,
Յոգնել եմ ձեր սպանութեան
Ու վըրէժի աղօթքներից:
Ձեր ոյժն ամբողջ սիրոյ մէջ է,
Ձեր կորուստը՝ կըռիւների.
Արդ ապրեցէք այսուհետեւ
Խաղաղ, սիրով, եղբօր նման:

— Ես կուղարկեմ մի մարգարէ,
Փրկիչ համայն ձեր ազգերի:
Նա կաշխատի, կապրի ձեզ հետ,
Կառաջնորդի, կը քարոզի:
Եթէ լըսէք նըրա խօսքին,
Կը բազմանաք, կերջանկանաք,
Իսկ թէ թողնէք անուշադիր,
Կը նըւազէք ու կը կորչէք:

— Մըտէք այժմ էս գետի մէջ
Ու լըւացէք ձեր դէմքերից
Կրուի վայրի նըկարները
Ու արիւնը ձեր մատների:
Թաղէք հողում ձեր զէնքերը,
Առէք կարմիր քարը հանքից
Ու շինեցէք կարմիր քարից
Խաղաղութեան չիբխի գլուխ.
Եղէգն առէք եղէգնուտից,
Զարդարեցէք փետուրներով,
Ու ծըխեցէք ի միասին
Խաղաղ, սիրով, եղբօր նըման:

Ու ծըգեցին մարտիկները
Շապիկները այծեմենի,
Զըրահները ռազմական,
Մըտան գետը արագահոս,
Ու լըւացին երեսներից
Կուի վայրի զարդերն ամեն:
Տիրոջ ոտքի տեղից հոսում,
Ջուրը վերից գալիս էր ջինջ,

Կը տամ իսկոյն ես պատասխան:
—Թաւագէնթի պերճ հովիտում,
Ճոխ մարգերի լռութեան մէջ,
Արծաթափայլ ջրերի մօտ
Ապրում էր վաղ Նաւագահան:
Հընդիկ գիւղի շուրջը բոլոր
Փռուում էին հանդեր, արտեր,
Ու կանգնած էր հին ծրմակը,
Հին ծրմակը սոճինների,
Ամրան՝ կանաչ, սօսափելով,
Ձմրան՝ փայլուն ճերմակ ձիւնով,
Լիքը երգով, հառաչանքով:

Հովիտն ի վար հոսում էին
Էն ջրերը արծաթափայլ,
Գարնանը՝ խիտ եղէգնուտով,
Ամրանն՝ երկար բարդու շարքով,
Աշնանը՝ գորշ մէգի տակին,
Ձմրան՝ ճերմակ ափերի մէջ:
Ու ապրում էր երգիչն էնտեղ,
Թաւագէնթի պերճ հովիտում,
Ճոխ մարգերի լռութեան մէջ:

Էնտեղ երգեց նա էս երգը,
Անուշ երգը Հայաւաթի,
Թէ ինչպէս նա ծնուեց, ապրեց.
Ու ինչպէս էր ճգնում, տանջւում,
Քարոզում էր ու համոզում,

Որ երջանիկ դարձնի մարդին,
Որ բարձրացրնի ժողովրդին:

Ով սիրում է բընութիւնը
Ու մարգերում լոյն արեւի,
Սիրում ստւերն անտառների,
Սիրում հովը տերեւներում,
Եւ անձրեւը, եւ փոթորիկ,
Եւ սահանքը մեծ գետերի,
Եւ կայծակը սարերի մէջ,
Թաւուտներում սոճիների.
Նա կը լսի էս զըրոյցը.
Զրքնաղ երգը Հայաւաթի:

Ով սիրում է ժողովրդի
Լեգենդներն ու բալլադները,
Որոնք, ինչպէս հեռու ծայներ,
Կանչում են, որ ականջ դրնենք,
Ու խօսում են պա՛րզ, մանկաբար,
Որ հազիւ է մարդ որոշում,
Ե՞րգ է արդեօք թէ պատմութիւն,
Ականջ կանի նա հաճոյքով
Էս հնդկական հին զրոյցին,
Խաղաղ երգին Հայաւաթի:

Նա, ում սիրտը թարմ է ու պարզ,
Հաւատում է Աստծուն, բնութեան,
Հաւատում է, որ յաւիտեան
Մարդկային է սիրտը մարդու.
Որ վայրենի լանջի տակ էլ

Մի անմեկին կեանքի համար
Կան բաղձանքներ ու ծգտումներ.
Որ խաւարում խարխափելիս,
Թոյլ ձեռքերը անօգնական,
Հանդիպելով Աստծոյ աջին,
Կեանք են առնում ու զօրանում.
Նա կը կարդայ էս զրոյցը,
Էս պարզ երգը Հայաւաթի:
Ով երբեմըն իր շըրջակայ
Լուռ հանդերում թափառելիս
Մի մոռացած շիրմի առջեւ
Կանգ է առնում, միտք է անում
Նրա կիսեղծ գըրի վըրայ,
Որ գրած է պարզ, անարուեստ,
Սակայն որի ամէն խօսքը
Լիքն է կեանքի, հանդերձեալի
Անվերջ յուսով ու թախիծով,
Նա կը կանգնի ու կը կարդայ
Խոր հընութեան արձանագիր
Էս հին երգը Հայաւաթի:

Խաղաղութեան չիբուխը

I

Ու մեծ դաշտի լերանց վրա,
Կարմիր ժայռի բարձունքներին,
Նա, հրզօրը, կեանքի տէրը՝
Գիտչի-Մանիտօն իջնելով,
Կանգնեց շիտակ եւ ազգերին
Ու ցեղերին կանչեց ի մի:

Նրա ոտքի տեղից բըղխեց,
Հոսեց մի գետ անդունդն ի վար,
Առաւօտեան շողերի մէջ
Շողշողալով ու ծոր տալով

Էն Իշկուդա—աստղի նման:
Ու խոնարհեց Ոգին երկրէ,
Աջով մարգում նրա համար
Գծեց ոլոր մի ճանապարհ,
—Գնա՛, ասաւ, էս ընթացքով:

Ապա պոկեց իրեն ձեռքով
Բարահանքից մի կտոր քար,
Շինեց կարմիր չիբխի գլուխ
Ու զարդարեց նկարներով:
Գետի ափից եղէգն առաւ
Իր մութ կանաչ տերեւներով
Ու կոթ շինեց չիբխի համար.
Լըցրեց ուռու չոր կեղեւով,
Կարմիր ուռու չոր կեղեւով:
Շընչեց մօտիկ մեծ անտառին,
Ու ճիւղերը տըւաւ իրար,
Կըրակ հանեց, վառեց չիբուխն,
Ու կանգնելով էն սարերին
Գիտչի-Մանիտօն, հըզօրը,
Ծըխեց իրեն գալիւմետը,
Իբրեւ նշան ողջ ազգերին:

Ու ծուխն ելաւ կամաց կամաց
Առաւօտեան խաղաղ օդում,

Առաջ ինչպէս մըթին մի գիծ,
Յետոյ կապոյտ, խիտ գոլորշի,
Ապա ճերմակ ամպի նման
Բարձրանալո՛վ, բարձրանալո՛վ,
Մինչեւ հասաւ վեր երկրընքին,
Մինչեւ ցրուեց վեր երկրընքում
Ու փաթաթեց շուրջն ամեն բան:
Թաւազէնթի դաշտավայրից,
Վաօմինգի հովիտներից,
Տուսկալուզի ծրմակներից,
Հեռո՛ւ, հեռո՛ւ ժէռ սարերից,
Նորդլանդիայի լըճափերից
Ազգերն ամեն նրկատեցին,
Տ՛տան հեռուում բարձրանում է
Խաղաղութեան չիբխի ծուխը:

Ու ազգերի մարգարէներն
Ասին՝ տեսէք, էն Պուկեանան,
Խաղաղութեան չիբխի ծուխն է,
Որ թեքւում է ուռենու պէս,
Շարժւում կանչող ձեռքի նման:
Մեծ, հեռաւոր էն նըշանով
Գիտչի-Մանիտօն՝ հըզօրը,
Կոչ է անում մարտիկներին
Ողջ ազգերի ու ցեղերի:

Գետերն ի վեր հովիտներով
Եկան, եկան, հաւաքեցին
Մարտիկները ողջ ազգերի.
Դեւաւարներն ու մոհոկները.

Զոտկոններն ու սեւուհները,
Օմօհոններն ու պոները,
Մանդաններն ու դակոտները,
Հուրօններն ու օջիբւէները,
Ձամբայ ելան ողջ միասին
Խաղաղութեան չիբխի ծրխի՝
Գալիւմէտի ծրխի վրայ
Դէպի սարերն էն մեծ դաշտի,
Մեծ քարհանքի ժայռը կարմիր:

Ու զէնքերով, զրահներով,
Նախշուն, ինչպէս աշնան տերեւ,
Ինչպէս երկինք առաւօտեան,
Էնտեղ, դաշտում, նրանք կանգնած
Նայում են խեթ իրար վրայ,
Աչքերի մէջ ատելութիւն,
Սրտերի մէջ դարեւոր քէն,
Արեան ծարաւ պապենական:

Գիտչի-Մանիտօն, հրզօրը,
Արարիչը մարդկան ազգի,
Նայեց նրանց կարեկցաբար:
Իր հայրական սիրով նայեց
Նրանց կրուին ու պայքարին,
Ինչպէս իրեն անխելք ու խակ
Մանուկների կրուի վրայ:

Ու տարածեց իր աջ ձեռքը
Մեղմի նրրանց բընոյթը կոշտ,
Մեղմի տապը, ծարաւն անյագ

Իրեն աջի հովանու տակ:
Խօսեց խրոխտ ու վեհ ձայնով,
Էն ջրերի աղմուկի պէս,
Որ թնդում են խոր անդընդում,
Խրատելով, նախատելով
Էսպէս խօսեց ազգերի հետ:

— Ո՛վ իմ որդիք, իմ հէք որդիք,
Ականջ դրէք իմաստութեան,
Ականջ դըրէք խրատներին
Ձեր արարիչ, ձեր ստեղծող
Հրզօր Ոգու շըրթունքներից:
Տըւի ես ձեզ ամեն բարիք.
Երկիր տըւի՝ որսի համար,
Գետեր տըւի՝ ծուկ բըռնելու,
Տըւի ձեզ արջ, տըւի բիզոն,
Տըւի եղնիկ ու եղջերու,
Տըւի ըսկիւռ, տըւի ջրշուն
Ու ճահիճներ լի հաւքերով.
Ինչո՞ւ գոհ չէք դուք տակաւին,
Ինչո՞ւ էք դուք որսում իրար:

Յոգնել եմ ես ձեր վէճերից,
Ձեր արիւնոտ կըռիւներից,
Յոգնել եմ ձեր սպանութեան
Ու վըրէժի աղօթքներից:
Ձեր ոյժն ամբողջ սիրոյ մէջ է,
Ձեր կորուստը՝ կըռիւների.
Արդ ապրեցէք այսուհետեւ
Խաղաղ, սիրով, եղբօր նման:

— Ես կուղարկեմ մի մարգարէ,
Փրկիչ համայն ձեր ազգերի:
Նա կաշխատի, կապրի ձեզ հետ,
Կառաջնորդի, կը քարոզի:
Եթէ լըսէք նըրա խօսքին,
Կը բազմանաք, կերջանկանաք,
Իսկ թէ թողնէք անուշադիր,
Կը նըւազէք ու կը կորչէք:

— Մըտէք այժմ էս գետի մէջ
Ու լըւացէք ձեր դէմքերից
Կրուի վայրի նըկարները
Ու արիւնը ձեր մատների:
Թաղէք հողում ձեր զէնքերը,
Առէք կարմիր քարը հանքից
Ու շինեցէք կարմիր քարից
Խաղաղութեան չիբխի գլուխ.
Եղէգն առէք եղէգնուտից,
Զարդարեցէք փետուրներով,
Ու ծըխեցէք ի միասին
Խաղաղ, սիրով, եղբօր նըման:

Ու ծըգեցին մարտիկները
Շապիկները այծեմների,
Զըրահները ռազմական,
Մըտան գետը արագահոս,
Ու լըւացին երեսներից
Կուի վայրի զարդերն ամեն:
Տիրոջ ոտքի տեղից հոսում,
Ջուրը վերից գալիս էր ջինջ,

Իսկ նրանցից ներքեւ պղտոր,
Գնում էր մութն, ապականուած,
Արիւնախառն ու կարմրագոյն :

Ու դուրս եկան մարտիկները
Գետից յստակ ու մաքրուած,
Ու թաղեցին գետի ափին
Իրենց զէնքերը ռազմական :
Գիտչի — Մանիտօն՝ հրզօրը,
Արարիչը ու Մեծ Ոգին
Այն ժամանակ սիրով ժպտաց
Անօգնական զաւակներին :

Ու մարտիկները ամենքը լուռ
Առան քարը մեծ քարհանքից,
Եւ յղկեցին ու շինեցին
Չիբուխները խաղաղութեան :
Եղէգն առան գետի ափից,
Զարդարեցին փետուրներով,
Ապա դարձաւ ամեն մէկը
Իրեն տունը, հայրենիքը,
Մինչդեռ Ոգին, կեանքի տէրը,
Վերանալով ամպերի մէջ,
Սուզուեց երկնի բաց դռներուն,
Խաղաղութեան չիբուխի ծուխի՝
Պուկուանայի ամպով պատած,
Անհետացաւ նրանց աչքից :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ու *ևերկայ հատուածոն պատրաստած է Գ. Յովհաննիսեան Թումանեան, 1921ին, որ այս հատորին յատկացած է նախապէս հրատարակուած իր բանաստեղծութիւններին ոմանք, իր իսկ թատերով իբր իր հոգիին աննահատ արտայայտութիւններ, եւ վիպակներուն վրայ կատարած է սրբագրութիւններ, կրճատումներ եւ փոփոխութիւններ :*

1922 ՀՐԱՏԱՐԱԿԻՉ:

ՑԱՆԿ

1. ԵՐԳԵՐ

ՆԱԽԵՐԳԱՆՔ 7
ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ 9
ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ 11
ՀԱՄԵՐԳ 13
ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ 15
ԵՐԿՈՒ ՍԵՒ ԱՄՊ 17
ԱՆԴԱՐՁ ՁԱՄԲՈՐԴՆԵՐ 19
ԸՆՏՐԵԱԼԸ 21
ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ 25
Դուռ քո ճամփէն գընա՛, քոյրի՛կ 27
ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ 29
ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ 31
ՎԱՅՐԷՋՔ 33
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ. 35
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ 37
ԻՄ ԵՐԳԸ 39
ՊԱՏՐԱՆՔ 41

2. ԿԱԹՈՒԱԿՆԵՐ

Ա. *Ծով է իմ վիշտն, անափ ու խոր* 45
Բ. *Հիմի բացել են հանդէս* 45
Գ. *Ես չնկա՛ւ* 46
Դ. *Ո՞ւր կորա՞ն* 46
Ե. *Քանի մահ կայ իմ սրտում* 47
Զ. *Ե՛ս ինչ՛ք...* 47
Է. *Հին աշխարհքը ամէն օր* 48
Ը. *Ո՛վ իմանայ՝ ուր ընկանք* 48
Թ. *Քանի՞ ձեռքից իմ վառուիլ* 49
Ժ. *Ինչքան ցաւ իմ տեսնել ես* 49
ԺԱ. *Երազումս մի մարդ* 50

ԺԲ. Մընացել է բերդը մեզ 50
ԺԳ. Ո՛նց է ժպտում իմ հոգին 51
ԺԴ. Ի՞նչ ես լինելու խե՛ւ–պե՛ւ սիրտ 51
ԺԵ. Իմ սո՛ւրբ, արիւնն ականջում 52
ԺԶ. Մի հատ պարկի ես մի օր. 52
ԺԷ. Երկու-երեքիս իրար կից 53
ԺԸ. Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ 53
ԺԹ. Աչնան ամպին ու գամպին 54
Ի. Կը լճացնում են, արտորում 54
ԻԱ. Բերանն արնոտ մարդակերը էն անտառ . . . 55
ԻԲ. Մեռա՞ն, մեռա՞ն . . . և ա՛յս 55
ԻԳ. Արեւելքի եղեւիներին իջաւ պայծառ երեկոն . . 56
ԻԴ. Դու մի անյայտ բանաստեղծ ես, չըտեսնուած մինչ էսօր 56
ԻԵ. Հէյ ապուր մարդ, հէյ անպոռ մարդ, մի՛տքըդ երկար կեանքդ կարճ 57
ԻԶ. Ապառ օրը, անչա՛խ սէրը, ամեն բարիք իր ձեռքին 57
ԻԷ. Քանի թէ արիւնն՝ օրին չաղը երազ եղաւ, անցկացաւ 58
ԻԸ. Որ աշխարքում ունիմ շատ բան, միտք եմ անում է՞ս թէ էն. 58
ԻԹ. Ինչ համառաս բառեղծոցի պատրիքները անմեկին . 59
Լ. Երանէ՛ էապէս՝ անվերջ քեզ հետ իմ կեանքի հետ լինելէ 59
ԼԱ. Առատ, առատ Աստծու նման միշտ տեղալուց յոգնել եմ ես. 60
ԼԲ. Ես չնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր 60
ԼԳ. Արիւնային աղէտներով, ապրումներով անարիւն . 61
ԼԴ. Ամեն անգամ որ տրամադիր էրբ մի բան ես գրանում 61
ԼԵ. Աւե. — Հէնց լակ էս անխելն է ու անունը որ ունեմ— 62
ԼԶ. Ազատային երազներին աշխարհքներում լուսակաթ . 62
ԼԷ. Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնապէտ 63
ԼԸ. Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արեւը՝ ջահ սրբազան 63
ԼԹ. Ո՛վ անճառ Մին, որ ամենքին միացնում ես մի կեանքում 64
Խ. Կեանքը արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքին . 64

3. ԼԵԳԵՆԴՆԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, ՅՈՒԱՆՆԵՐ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Շոհնն ու կատուն 67
Ախթամար 71
Անբախտ վաճառականները 75
Անհավատ Հարսը 81
Արծիվն ու կաղնին 85
«Պողոս - Պետրոս» 87
Փարիանա 91
Լուսավորչի կանթեղը. 99
Մի կաթիլ մեղրը 101
Հսկան 109
Աղավնոյ վանքը 115
Աղջկաց սիրտը 119
Թագավորն ու զարշին 123

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ. ԵՐԳԵՐ

Գարնան առաւօտ 129
Դիւր տարի 131
Ձախարակ 133
Աղիքը 135
Սոխակի վիշտը 137
Կաքաւի գովքը 139
Կաքաւի ողբը 141
Մարմնոյ. 145
Լօռեցի սաքօն 153
Դէպի Անհոն 163
Անուշ. 179
Հին կռիւը 215
Երկրաւիմ 229
Սասունցի Դաւիթը 239
Թմկաբերդի առումը 279

5. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՁՄեռուաց իրիկունը 293
ՋրաՀեղձը 297
Ռուիկկերտից 3 1
Էլեգիւ 303
Գեղջուկի մտածումները 305
Վարդը 307
Թռչունի մտածումները 309
Ամենից լաւ տունը 310
Սիեամտաձօրը 313
Մուհումմայի իւիան կռուում է վէմատիմիր իշխանի հետ . 317
Մարկոն ռամազանին դինի է խմում 331
Հաճախաթի երդը 335
Ծանօթութիւն 346

ՀԱՅՈՑ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՏՊԱԳՐ. ՓԷՇԻՇԵԱՆ, Կ. ՊՈԼԻՍ, 1923